



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99
7-34


Հ. Գ.

15812

Պատմություն
Պոլսի քաղաքի
Տեղ

891.99
7-34

Կ. Պոլիս
1880.



Printed in Turkey

15 1/2

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

350

ՊՏՈՅՏ ՄԸ
ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐՈՒ ՄԷՋ

ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ



Կ. ՊՕԼԻՍ

ԲՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻԶՊԱՆԵԱՆ ԽԻ ԸՆԿԵՐ

1880

891.99

7-34

3502

891 99

9-34

W

50

Ա.Ռ. ԸՆԹԵՐՑՈՂՍ

2003

~~1000-33~~

2300-39

Փափաքելով որ մեր հետզհետե հրատարակելի գործոց մէջ զանազանութիւնք լինին, այս անգամ զաւելչտական տետրեր մաս առ մաս հետզհետե հրատարակել ձեռնարկեցինք, որ ինչպէս խորագրէն յայտնի է, Կ. Պօլսոյ թաղերու ազգայնոց բարձր, սովորութիւնները եւ կեանքը կը նկարագրէ, անոնց թերութիւնները եւ մոլութիւնները կը հարուածէ խիստ մեղմ լեզուաւ եւ օգտակար դասեր կաւանդէ ժողովրդեան բարոյականը բարձրացնելու եւ անոր զգացումներն ազնուացնելու համար:

Հեղինակն արդէն յայտնի է իւր երգիծաբան լեզուան ու տաղանդովը. եւ սակայն ցաւալի է ըսել որ գրագիտաց յատուկ բաժինն եղած վնասութեամբ եւ ժողովրդեան անքաջալեր ընթացից պատճառաւ այս կարեւոր ասպարիզէն հետզհետե մեկուսանալ ստիպուած է: Ուստի մեք սոյն աշխատարութիւնն ամբողջ գնելով պատ. Հեղինակէն որոշեցինք զայն տետր առ տր իւրոյս ընծայել ամէն շարթու, որոյ առաջին թւը անաւասիկ ի հրատարակ կը հանեմք: Եւ թէեւ մեք եւս մեր ընտրած ասպարիզին մէջ զեռ չկրցինք վայելել այն համակրական քաջալերութիւնը զոր իրաւամբ կրտստէինք գրասէր եւ բանասէր ազգայիններէ, սակայն համոզուելով որ գործի մը շողութիւնն ու ար-

գիւնաւորութիւնը իւր յարատեւութեան մէջն
որոշած եւք շարունակել մեր ընտրած ասպարէզ
հակառակ բազմադիմի դժուարութեանց եւ վնասու
որ մեր առաջ պիտի ելնեն :

Արդէն տեսան մեր սիրելի ազգայինք որ մինչեւ
ցարդ երեք երկասիրութիւն ի լոյս ընծայեցինք որք
են Արտեար երկայնակեցութեան, Հաւանոր ոճեր + Պը-
բեմբէնէ ժողովուրդի եւ Տնայան բժիշկ : Մամոյ ներ-
քեւ կը գտնուի Հաւանոր ոճեր + Սէն-ժերմն կոնսու-
նի որ մտա օրէն ի լոյս պիտի ընծայի :

Ուստի մենք անդրդուելի կերպով որոշած ենք
մեր ընտրած ասպարէզին մէջ անվնաս յարատեւել
եւ ազգային հեղինակներն ու գրադէտները քաջա-
լերելու համար ժողովրդեան օգտակար եւ հրահան-
գիչ գործերը գնելով տպագրութեան յանձնել, յու-
սալով եւ հաւատարմով որ բանասէր ժողովուրդը աղ-
ջային գրականութիւնը զարգացնելու եւ Ազգին մէջ
ընթերցանութիւնը ծաւալելու համար իւր քաջալե-
րութիւնը չը խնայեր միգ, առանց որոյ ազգի մը
գրական եւ բարոյական կեանքը իւր անկեալ վիճա-
կէն անհնար է որ բարձրանայ :

16 Յուլիս 1880

Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ

ՊՅՈՅՏ ՄԸ

ՊՈԼՍՈՅ ԹԱՂԵՐՈՒ ՄԷՋ

ՄԻ ԶԱԳԻԻՂ

Նախ և առաջ հարկ է գիտնալ որ այս գիւղը
մտնելու համար քանի մը դժուարութիւններ
կան — խօսքս պատուաւոր մարդերու համար է
և ո՛չ գողերու համար — իսկ անկէ ելնելու հա-
մար դժուարութիւններն աւելի մեծ են : արե-
ւելեան խնդրոյն ձեռով շինված գիւղ մ'է : Եթէ
նաւամատոյցին ճանբայէն մտնել ուղեւ՝ վեց
հոյակապ ճեմիչներու հոտը քթիդ ուշադրու-
թիւնը կը դրաւեն, և անմիջապէս կը համոզվիս
որ Միջագիւղ բնակողի մը համար սղտիկ քիթ
մը մեծ փորձանք է : Եթէ լերան կողմէ իջնել
փորձես՝ փրկանքդ հետդ տանելու ես որ եթէ
դրողբէ բռնուիս՝ կարենաս օձիքդ ազատել :
Իսկ եթէ Պէշիքթաշի կողմէն դաս՝ աչերդ թաշ-
կինակով մը կապելու ես որ հոմն անցեալ

տարուան հրդեհէն մնացած մոխիրներն աչե-
րուդ չփչէ : Այս գիւղին մէջ մտնելու ապահով
ճանքան օդապարիկով հոն իջնելն է կրսն , իս-
ինձի համար հոն մտնելու ամենէն ապահով
ճանքան հոն բնաւ չմտնելն է :

Այս գիւղին մէջ հինգ հարիւր քսան տուն
կայ Հայու . սակայն ասոնց մէջ կան տուներ որք
երկու և երեք ընտանիքներէ բնակված են :
Եթէ գործերն այսպէս շարունակվին՝ քսան ըն-
տանիք մէկ տան մէջ պիտի բնակին և վիճակա-
գիրները տուն համբերու տեղ սենեակ պիտի
համբեն :

Երկու եկեղեցի կայ . միոյն անունը Աստ-
ուածածին է իսկ միւսինը Լուսաւորիչ : Գիւղիս
Աստուածածինը սահմանադրական չէ , ամեն այ-
ցելուները մի և նոյն եղանակով չընդունիր . հա-
րուստ այցելու մը տաճարէն ներս մտնելուն
պէս՝ ժամակոչ եղբայրները իրար կանցնին ա-
թու մը գտնելու և հիւրին քովը դնելու հա-
մար , իսկ երբ այցելուն ազքատ է հրաման
կընդունի գետնի վրայ աղօթելու : Հարուստնե-
րը Ս. Զատկին կամ Ծնունդին միայն կուգան
եկեղեցին , և շատ անգամ ալ անձամբ չկրնա-
լով ներկայ գտնուիլ իրենց այցեատմսը կը զրկեն
եկեղեցին :

Այս եկեղեցւոյն վերնատունէն ամեն տարի

տեղ կը ծախվի կամ վարձու կը տրվի — Թէ-
պէտ և լրագիրներու մէջ ծանուցում չըլլար
— արդէն հարուստ տիկիները ամբողջ վեր-
նատունը ծախու առած են և տօնի օրերը մէյ-
մէկ պահապան կնիկ կը զրկեն հոն որպէս զի ի-
րենց տեղը պաշտպանեն օտար կիներու յար-
ձակումներու դէմ : Արդեօք ժամանակն է յիշել
Աւետարանին այս խօսքը . Տան ի՞նչ քան ազնիւ
կուէրէ և քոստ արբէի զաւրստ առաջաց : Լուսա-
ւորիչը ժողովրդական է , այր և կին խառն կը
մտնեն տաճարէն , բայց Լուսաւորիչն , այրերուն
վրայ վստահութիւն չունենալուն համար թե-
րեւս , եկեղեցւոյն աջ կողմն այրերուն տուած է
և ձախն կիներուն . . . ո՞վ կարող է պնդել թէ
մեր երեսփոխանական ժողովն ալ այսպէս վար-
ված չէ . թող չարամիտներն պարզամիտ ժողո-
վրդեան հաւատացնել ուղեն թէ երեսփոխա-
նական ժողովն միայն կիները ներս առած է և
այրերը դուրս ձգած է . ես չեմ հաւատար :

Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն դէմն է
Թարգմանչաց վարժարանն որ շատ կանոնաւոր
խեղճութեան մէջ կը գտնուի , և եթէ ոչ իւր
խեղճութեամբը դոնէ իւր կանոնաւորութեամ-
բը կարող է ազգային վարչութեան նախանձը
չարժել : Շատերը կը զարմանան թէ ասանկ հա-

րուստ թաղի մը վարժարանն ինչու աղքատ մը-
նայ : Ես չեմ զարմանար : Վարժարանն անոր հա-
մար աղքատ է որովհետև թաղին մէջ հարուստ-
ներ կան :

Գիւղիս մէջ կայ Հռիփսիմեանց վարժարան
մը որ խնամակալուհի աիկիներու տնօրէնու-
թեանը տակ կը կառավարվի և յոյս կուտայ որ
օր մը ուսեալ և կրթեալ աղջիկներ դուրս պի-
տի տայ : Սոյն վարժարանին սանուհիները բա-
ւական յաջողակութեամբ կը թարգմանեն գրա-
բառէ աշխարհաբառ , և եթէ Սովբլոյ Յանձ-
նաժողովոյ ատենադպիրին գրաբառ նամակները
չեն կրնար լուծել . յանցանքն իրենց չէ , վասն
զի իրենց դասատուն անգամ չատ անգամ ըզե-
ղը կը պատառէ այդ նամակներէ իմաստ մը հա-
ներու համար :

—Պ. Շաչեան, որ Հայաստանի մէջ սովու պատ-
ճառած աղէտքներուն վրայ ժողովրդեան դու-
թը շարժելու և անկէ նուէր հաւաքելու նպա-
տակաւ նամակներ կը հրատարակէ լրագիրներու
մէջ , հասարակութեան անհասկնալի լեզուով
կը խմբագրէ իւր սաւառնաթև նամակները որ-
պէս զի մեր ազգայիններն իրենց եղբայրներուն
տառապանքներն խմանալով չտիրին և չլան :
Այս տեսակէտով Պ. Ատենադպիրն ազատ էր

լատիներէն ալ խօսիլ ժողովրդեան . . . : —

Աղջիկներու վարժարան մ'ալ կայ զոր Աւ-
շահեք Հայուհեաց Ընկերութեանը բացած է աղ-
քատ աղջիկներու ճրի դաստիարակութիւն տա-
լու համար : Կարողութիւն և յաջողութիւն կը
մաղթենք սոյն ընկերութեան ազնուասիրտ տի-
կիներուն որ ամեն ջանք ի գործ կը դնեն ի-
րենց նպատակին հասնելու համար . . . եթէ այս
կիներն այր՝ և իրենց այրերը կին ըլլային ան-
շուշտ թարգմանչաց վարժարանն այսպէս դժ-
բախտ տեսնելու դժբախտութիւնն չէինք ու-
նենար :

Լուսաւորչեան վարժարանն գոհացուցիչ է
առ այժմ , սակայն միշտ հսկումի պէտք ունի որ
անընդհատ յարատևէ իւր կանոնաւորութեանը
մէջ :

Հայկան կրթարան անուամբ գիշերօթիկ և ցե-
րեկեայ վարժարան մը , որու տնօրէնն է Պ.
Գուրգէն , ամեն արգելքներու և ձախորդու-
թիւններու դէմ դնելով այսօր խիստ կանոնա-
ւոր վիճակի մէջ մտած է : Ահա գիւղիս ամենէն
մեծ շէնքն և մարդը :

Հոս է Բաբեղեաց Ընկերութեան թատրոնն՝ որու
անունն անշուշտ հազար անգամ կարդացած ես
փողոցի պատերուն վրայ : Այս թատրոնի մէջ կը

ներկայացվելին ժամանակաւ անմահ Պէշիքթաշ-
լեանի և մահկանացու Հէքիմեանի ողբերգու-
թիւններն, որոնց նմաններն այժմ պարզեաբաշ-
խութեան օրերը վարժարաններու մէջ կը ներ-
կայացվին ի մեծ ձանձրութիւն հանդիսականնե-
րու : Այս թատրոնին մէջ է որ այժմ շատերը
ատենաբանութիւններ կընեն ժողովրդեան օգ-
տակար նիւթերու վրայ : Անուրանալի ճշմար-
տութիւն մ'է որ Միջագիւղ ամեն թաղէ առաջ
սկսած է լուսաւորեալ ազգերու նմանիլ աշխա-
տելու և . . . չյաջողելու . . . քանի որ շահելը
ուշ է միշտ պիտի յիշեմ կապիկին առակը :

Այս թաղը խաղաղասէր է . պատրիարքնե-
րու փոփոխութիւններու ժամանակ բնաւ կար-
ծիք յայտնած չէ : Օր մը եկեղեցւոյն մէջ լսված
չէ . յեռէ, յեռէ, կերևի որ Միջագիւղցին եկող
պատրիարքէն ալ դո՞հ է գացողէն ալ, կամ ոչ
եկողէն դո՞հ է և ոչ ալ գացողէն : Նոյն իսկ թա-
ղային գործերուն մէջ ալ չեղբութիւն կը պա-
հէ . ուրիշ թաղերու մէջ շարաթը մէկ անգամ
թաղականի կռիւ կը ծագի, հոս մինչև հիմա
ատանկ բան մը պատահած չէ : Հոս ելնող թա-
ղականներէն հաշիւ փնտռելու դէշ սովորու-
թիւնն ալ չկայ, գեղացին իրարու վրայ մեծ
փտահութիւն ունի :

Պշտիկ երիտասարդութիւն մը կայ որ ընկե-
րութիւններ կազմելով լուծելով ազգին իրական
ծառայութիւններ կը փափաքի մատուցանել :
Մինչև հիմա հարիւր ընկերութիւն կազմուած և
հարիւր յիսուն ընկերութիւն լուծուած է . իսկ
հիմա կայ արհեստական ընկերութիւն մը որ
հաստատ քայլերով ճանբայ կառնէ և որուն նը-
պատակն է Հայաստանի մէջ արհեստ տարածել :
Գիւղիս ազգայինները քանի մը դասերու կը
բաժնուին :

Իսս մը կայ որ միայն դիւանագիտական
խնդիրներով կըբաղի : Այս դասն երբ գինետուն
մտնէ և իւր առջև ունենայ օղիի շիշք՝ կը փա-
փաքի գիտնալ թէ Կլատըսթըն ինչ խօսած է
Արևելեան խնդրոյն վրայ, թէ Պիամարք ինչ ըն-
թացք պիտի բռնէ, թէ Բուամանուրիոս ինչ
գրած է Ղէորդիոսին և մինչև որ ասոնց գոհա-
ցուցիչ պատասխանները չառնէ գինետունէն
դուրս չելներ :

Միւս դասը դիւանագիտական խնդիրներէ
ձանձրոյթ կըգայ . իրեն համար գիտնալու ա-
ռաջին խնդիրն այն է թէ օղիի վրայ աղած ձուկ
ուտելու է, միս թէ պտուղ . ահաւասիկ իրեն
համար բարենորոգման խնդիր . . . :

Իսս մ'ալ կայ որ ամբողջ օրեր վարսավիրա-

յի խանութներու առջև կը պտղտի որոշում տալու համար թէ ինչ ձև տալու է մաղերուն որ օրիորդ . . . ին հաճելի երևնայ և իւր առջևէն չվճարուի :

Թեթև դաս մ'ալ կայ որու վրայ թեթևութիւնը ծանրացած է — երբ ծանրացած է կրեմ, թեթևութեան քանակութիւնը կերևակայէք անշուշտ — այս դասը կիրակի օրերը նաւամատոյցին վրայ կսպասէ որ օրիորդ կամ տիկին . . . ին հետ բարձրաձայն երկու բառ ֆրանսերէն խօսի :

Իսա մ'ալ կայ որ առևտուրի մէջ կորուսածն իրազի մէջ վաստակելու համար խորամանկութիւն կը խորհի . հարուստներն ալ ունին այս ախար , բայց անոնք բամբասանքէ զերծ են . վասն զի ինչ որ ախար է աղքատի համար անմեղ զբօսանք կը համարվի հարուստի համար :

Պզտիկ բացառութեամբ թէ այրերն և թէ կիները պնծասէր են : Չափէն աւելի կարևորութիւն կուտան հազուստներու , հետևապէս այն որ շքեղ հագված է՝ կատարեալ մարդ է . իսկ այն որ պարզ հագված է՝ մարդ կոչվելու արժանի չէ : Ուր որ ալ ըլլայ՝ երբ կը տեսնես կին մը որ հովահարով մը դէմքը կը հովահարէ , նոյն իսկ ձմեռուան ամենասաստիկ ցուրտ օրե-

րուն մէջ , որ երեսները մէյ մը աջ մէյ մը ձախ կը դարձունէ կէս ծիծաղով , որ մէջքը միշտ կը կտարտէ և երկու բուպէին անգամ մը գլուխը կը շտկէ , որ ձեռնոցները կը հանէ նորէն կը դնէ . չըջագգեսաբը կը շտկէ , չհաւնիր , կը կանգնի , նորէն շտկելու ջանք կընէ , երբեմն բերանը բանալով գիտմամբ կը խնդայ որ ակուայները ցոյց տայ — եթէ չխնդար , գիտցիր որ բերանին մէջ ակուայ չկայ — հասկցիր որ այդ կինը միջագիւղցի է . իսկ երբ անոր քովը աղէկ հագուած երիտասարդ մը գտնուի ու հետը խօսակցի երբեմն ֆրանսերէն բառեր գործածելով , այդ կնկան «կար» հրամցունէ և քթին մէջ մտնելու չափ մտենայ անոր , հազար ոսկիի գրբաւ դիր որ ատոնց երկուքն ալ Միջագիւղցի են . եթէ կորսնցնես հազար ոսկին եկուր ինձմէ տու :

Սրեկէն չայրելու համար իրական սեռն , քիչ բացառութեամբ , երեսը բրինձի փոշի կը քսէ , բայց Միջագիւղցի լուսինն արևու չափ կիզիչ ըլլալուն պատճառաւ գիշերներն ալ կը գործածէ այն փոշին՝ որուն ոմանք սկսած են հիմա Բուրձի խառնել :

Միրատուն օրիորդները կամ տիկիներն երբ տուն մը այցելութեան երթան՝ պանդուղխին

երկրորդ աստիճանէն կերկնցնեն իրենց ոտներն և սպասաւորներու քաշել կուտան իրենց կոշիկներն որպէս զի պզտիկ ոտներն ամենուէն ցոյց տան . իսկ երբ ոտները մեծ ըլլան՝ սպասաւորներուն քաշել կուտան իրենց ձեռնոցները . շատ մը կիներ ալ իրաւամբ քաշել տուած են իրենց ակուայները որովհետև մեծ էին անոնք և մեծ ցաւ կը պատճառէին . . . գեղեցկութեան :

Տիկիներէն ոմանք կոմսուհիներու կամ մարքիզուհիներու նմանելու համար ամեն հնարք ՚ի գործ կը դնեն : Երբ զաւակ մը բերեն աշխարհ՝ իսկոյն ստնտուի մը կը յանձնեն զայն , վասն զի ազնուականութեան դէմ է որ կին մը իւր զաւակին կաթ տայ : Արդեօք պիտի գոյ այն օրն ուր սպասուհիներն բերեն իրենց տիկիներուն բերելիք զաւակներն ալ , որպէս զի վափկատուն տիկիներն ծննդաբերութեան ծանր գործէն ալ խալտին . . . :

Միջագիւղցին ուրիշ թաղեցիներու բազդաւմամբ աւելի քաղաքավար է : Խնդում երես ունի , եթէ երբեմն տխուր տեսնես զինք՝ պատճառն թաղին ազգային վարժարանն է :

Գիւղիս կլիմայն չէզոք է , ոչ բարիք կը գործէ և ոչ չարիք , բնակիչներն ալ իրենց կլիմային պէս են :

Կան երիտասարդներ որ ինքզինքնին միշտ բարձր դրեց մէջ կը գտնեն . եթէ ասոր պատճառը վնտուի դիւրին է համոզվիլ որ այդ երիտասարդներն այդչափ բարձր չպիտի կարծէին զիրենք՝ եթէ օգէն աւելի թեթև չըլլային : Դժբախդաբար մեր ազգին մէջ շատերու բարձրանալուն գաղտնիքը բնական օրէնքով միայն կը լուծվի : Ծանրերը միշտ գետնաքարչ կը մնան և թեթևները վեր կեննեն : Այս գիւղիս մէջ կան երիտասարդներ՝ որոց գլուխն եթէ չուան մը անցունենք՝ կրնանք զանոնք թուղցիկի պէս բարձրացունել . . . օգին մէջ :

Աւելորդապաշտութիւն չկայ այս գիւղին մէջ — ոսկին այս հաշուէն դուրս է — մանաւանդ թէ պակասապաշտութիւնը կը տիրէ հոս : Ամենէն աւելի պաշտուող կուռքը նորածնութիւնն է :

Զբօսանքը շատ կը սիրեն հոս . եթէ տան մը մէջ պարն սկսի՝ առ նուազն վեց օրէն կը վերջանայ . իսկ երբ ազգային խնդրոյ մը վրայ խօսք բացվի՝ կէս ժամէն աւելի չտևեր :

Ներքին բերքն է ելակ և բամբասանք : Ելակն ամեն տարի առատ չըլլար . իսկ բամբասանքն , որ շատ անձրեւէն կամ շատ երաշտութեանէն վախ չունի , ամեն տարի առատ

հունձք կուտայ : Ետտ տեղերէն հոս կուգան
այս ապրանքէն գներու համար :

Արտաքին բերքն է գողեր և ծովեղբրքին
վրայ շուներու դիակներ :

Ք ՈՒՄ Ք Ա Ն ՈՒ

Կ. Պօլսոյ մէջ երկու Քուժ Քարու կայ ներ-
քին Քուժ Քարու և արտաքին Քուժ Քարու ,
ինչպէս Մասիսի մէջ երկու տեսակ լուր կայ
ներքին լուր և արտաքին լուր : Մասիսին լու-
րերուն արտաքինը ներքինէն որոշելու համար
երբեմն ուշադրութիւն պէտք է , վասն զի շատ
անգամ Ս.Մերթիկայի մէջ կնկան մը երեք զաւակ
մէկէն բերելուն լուրը Մասիսի մէջ ներքին լու-
րերուն տակը կը կարդացվի : Ինչպէս որ ուրիշ
լրագիրներու մէջ շատ անգամ պատահած եմ
հացագործի մը էջն որ երբ փողոցի մէջ գուայ
ներքին լուրերու մէջ կանցնի , իսկ երբ Պատրի-
արքարանի մէջ երգէ աղգային լուր կըլլայ :
Իսկ Քուժ Քարուներու մասին այս շփոթութիւն
ները չկան , ներքինն երբէք արտաքինին մէջ
և արտաքինն ալ բնաւ ներքինին մէջ տեսնուած
չէ : Բայց որովհետև առաջին անգամն է որ
ներքին Քուժ Քարուն երթալ պարտիլ կուզես
ես յանձն կառնես քեզի առաջնորդել :



Ժամը մէկու կէս է, Մահսուսիյէյի շոգե-
նաւն ալ ճիշդ մէկ ու կէսին կամուրջէն կը մեկ-
նի Քում Քարու երթալու համար: Վազէ, բայց
կաղաչեմ ուշադրութիւն ըրէ որ ծովը չիյնաս
երկաթեայ կամուրջէն փայտեայ կամուրջն ան-
ցած ատենդ. կը խնդրեմ որ վերարկուդ ալ
խնամքով կոճկես, վասն զի կամուրջին վրայ
կան տեսակ մը մարդեր որ գրպանդ կը խառ-
նեն և ինչ որ գանեն հոն կառնեն . . . այս
տեսակ մարդերու — գաւառներու մէջ — «
անունը կուտային անցեալները թուրք լը-
րագիրները: Ժամը երկու զարկու և շոգենաւը
տակաւին տեղէն չչարժիր, համբերէ, հիմա կը
մեկնի. մեր երեսփոխանական ժողովն ալ «
նը Ժամը ճիշդ վեցն պիտի բացէ կը ծանուցանէ և
ատեանը ութնին կը բանայ: Ահա նաւապետը
երեցաւ . . . վեր ելիր նստէ որ հով առնես . . .
նաւապետն ահա վարտիքը կապեց, ձեռներն
ալ լուարուն պէս կը մեկնիք . . . : Շուտ ըրէ,
աճապարէ հովանոցդ բաց . . . շատ թրջեցա՞ր . . .
Վաս չունի, ուրիշ անգամ երբ շոգենաւը սու-
լել պատրաստովի հովանոցդ բաց որ շոգիէն չը-
թրջվի . . . աչքդ լոյս, ճանրայ ելաք . . . Ս-
րայ պիտի գառնալուդ պէս . . . բայց ինչո՞ւ
կայնեցաք, կարծեմ ածուխը հատաւ . . . նա

ւապետն ինչո՞ւ չեն արթնցներ որ պէտք եղածը
նայի . . . նաւաստիներն ո՞ւր են . . . ահա հոս
են «
կը խաղան. անոնք իրենց տեղէն չեն
երերար մինչև որ հրաման չառնեն իրենց նա-
ւապետէն որ չարթնար մինչև որ իրեն ձայն
չտրվի նաւաստիներէն որ իրենց տեղէն չեն ե-
րերար մինչև որ . . . (կրկնէ «
ճանբորդներն որ շարժելու միտում ունենալ կը
թուին . . . եթէ ածուխ չկայ՝ փառք Աստու-
ծոյ հողմ կայ. հողմը կարող է ածուխին պաշ-
տօնը վարել բայց առագաստ չկայ . . . : Ինչո՞ւ
ապշած էք պարոն ճանբորդներ, բացէք ձեր
հովանոցները հողմին առջև որ շոգենաւը շար-
ժի . . . ո՞չ, ո՞չ, համբերեցէք, ահա նաւակ մը
որ Քում Քարու կերթայ, չուան մը ձգեցէք որ
շոգենաւն քաշէ. այդ թիավարները բարի ան-
ձեր են. ձեր խնդիրքը չեն մերժեր, մանաւանդ
թէ ձեր ուզածն ալ ինքնօրինութիւն չէ: Տե-
սէք ինչ եռանդով թի կը քաշեն . . . կէս ժա-
մէն Քում Քարույի նաւամատոյցը կը հասնիք
վերջապէս հասաք . . . :

Բարեկամ, ձախ կողմը դարձիր, բայց եր-
կաթուղւոյ դժին վրայէն մի քալեր: Հիմա աջ
կողմ դարձիր և սա նեղ փողոցէն ներս մտիր,
քիչ մը քալելէդ ետքը ինքզինքդ կը գտնես

բարձր շէնքի մը առջև ուր երկու մարդ քու-
թեւերէդ կը բռնեն և այդ շէնքէն բռնութեամբ
ներս կը հրեն զքեզ: Մի վախճար, բան չկայ:
Չախակողմեան սանդուղիսէն վեր ելիր և բոլոր
սենեակները պտրտէ, մէջը մարդ չես կրնար
տեսնել: Ինչո՞ւ վասն զի բոլոր սենեակներուն
դռներուն վրայ հետեւեալը գրված է. «սանց
քործոյ ներս հոնէն արդիեւ է: Ժամը չորս է, բայց
այս արդեղքն խղճի մտօք կը յարգուի»: Քում
Քաբուի մէջն ևս բարեկամ և այդ շէնքն ալ
Պատրիարքարան է, Պատրիարքարան բովըն
բուն պատճառն ալ անկանոն ընթացք մը ունե-
նայն է: Պաշտօնեաները կսկսին դալ. զքեզ
բռնող երկու մարդերն՝ կտռաջնորդեն քեզի
սենեակ մը՝ ուր սև աչերով սև ընքսեխներով
կընր և սիրուն դէմքով մարդ մը անուշութեամբ
քու որպիսութիւնդ, թաղդ, տարիքդ և ար-
հեստդ հարցունելէն ետև կըսէ.

— Պարսն, երեք տարուան ազգային տուրք
պիտի վճարէք, եօթանասունըհինգէն՝ երկու
հարիւր քսանհինգ դահեկան:

Ներումն կը խնդրեմ, եթէ դիտնայի որ ազ-
գային տուրքդ վճարած չէիր՝ կը յորդորէի ըզ-
քեզ Պատրիարքարանի փողոցէն շանցնելու.
բայց որովհետև անգամ մը մտած ես հոն

պարտքդ ապու ես առանց վշտանալու, վասն
զի իւր պարտքը վճարելու անհոգութիւն ընող-
ներուն համար Պատրիարքարանն ասկէ աւելի
դիւրին ճամբայ չէր կրնար գտնել:

Պատրիարքարանէն դուրս ելնելուդ պէս
դիմացի դռնէն ներս մտիր. Մայր եկեղեցին է այն.
Այս եկեղեցւոյն մէջ ժամանակաւ ամեն օր Ս.
Պատարագ կը մատուցվէր, իսկ հիմա չարաթը
հաղիւ մէկ անգամ պատարագ կըլլայ հոն:
Քսանը եօթը քահանայ ունի այս եկեղեցին ու
րոնք եհնի Քաբույի և Կէտիկ բաշայի եկեղե-
ցիներու մէջ ալ պաշտօն կը վարեն, սակայն
չկարենալով իրենց օրական ապրուստը ճարել—
որովհետև շատ կուտեն — շատ անգամ իրենց
ծուխերուն տուները կը մսան, անոնց ննջեցե-
լաց հոգւոյն համար կուտեն կը խմեն: Ասոր հա-
մար է որ շատ անգամ եկեղեցւոյն մէջ քահա-
նայ չգանուիր: Մայր եկեղեցւոյ բակը երկու
դերեզման կը տեսնես. ասոնց միոյն մէջ թաղ-
ուած է Տատեան Պօղոս ամիրայ և միւսին մէջ
կը քնանայ Պէզեան Յարութիւն որ երկու հա-
զար դահեկան ամուսկան կտակած է Մայր
Վարժարանին, հազար դահեկան ամուսկան ար-
տաքին Քում Քաբույի վարժարանին և յիսուն
դահեկան ամուսկան բանտի եկեղեցւոյն. ար-

սոս որ ազգային լրագիրներուն համար և Պատարարքարանի փոշիններուն մաքրուելուն համար բան մը չէ կտակած :

Եկեղեցւոյն քովն է թաղին վարժարանը որ համբաւաւոր եղած է իւր յարուցած վէճերովը : Դասատուները շաբաթը մէկ անգամ կը փոխվին հոս . ամեն օր նոր դասատու և նոր դրութիւն : Չար լեզուները կըսեն թէ այս վարժարանին մէջ ամենէն աւելի յարգ և պատիւ գրասող դասատուներն անոնք են որ աշակերտներուն շատ թուղթ , գրիչ , մելան և մատիտ ըսպառել տալու դրութիւնն կը յարգեն , և այս դրութիւնը շատ հաճելի է եղեր Հոգաբարձութեան անդամներուն :

Մենք չենք ուղեր հաւատալ , բայց հաւատացողներուն ալ հաւատքը հերքելու չափ զօրաւոր փաստեր չունինք դժբախտաբար : Աստուած չընէ , եթէ հոգաբարձուներէն մէկն դերձակ ըլլար՝ աշակերտները շաբաթը մէկ անգամ նոր հաղուստ հագնելու պիտի ստիպվէին : Իսկ եթէ մէկն ալ սափրիչ ըլլար՝ անպատճառ հեռեկալ տղերը ներքին Կանոնագրութեան մէջ պիտի անցնէին . « Աշակերտները պարտաւոր են օրը երեք անգամ կտրել տալ իրենց մազերը : »

Ո՛վ անձնանուիրութիւն , գոնէ անգամ մը քու երեսդ տեսնելու պատիւը պիտի չունենանք : Տրտմիլ պէտք չէ , կեդրոնական զբօսարանը գնա քիչ մը որ բացվիս : Սըդ դարձիր և դէմդ կեննեն երեք զբօսարան . մէջ տեղի զբօսարանը մտիր ուր սեղանի մը վրայ դրված պիտի տեսնես ազգային քանի մը լրագիրներ որոնց վրայ դրված կան օղիի շիշեր և գաւաթներ : Թաղին բոլոր ազգասէրները հոս կը յաճախեն և օղի խմելով ազգային կենսական խընդիրներու վրայ կը խօսին : Ողջ ըլլան : Անգին քանի մը երիտասարդներ նստած « րէ՛հ և բրէ՛ֆ » կը խաղան . ողջ ըլլան ու խաղան : Աս դին քանի մը անձեր ջերմ՝ վիճարանութեան մը բըլունուած են . ասոնք թաղական խորհրդոյ անդամներ են և անանկ բարկութեամբ իրարու երես կը պօռան որ կարծես թէ ասոնցմէ մին եկեղեցիէն բան մը ծախած և ստակը ծոցը դըրած է . . . առանց իւր ընկերներուն իմաց կամ բաժին տալու : Ուրիշ մը բարձր ձայնով խաղ կը կանչէ . վերջապէս խառնակութիւնը կը թագաւորէ հոն , սակայն այս կեդրոնական զբօսարանը դարձեալ շատ կանոնաւոր է այն ամեն բաներէն որ կեդրոնական անունը ունին , ինչպէս կեդրոնական վարչութիւն , կեդրոնական անուոն :

Կերբոնական շարժարան որ տակաւին չբացուեցաւ :
 Եթէ այս դբօսարանէն չախորժեցար՝ ծովու
 վրայ կառուցված և Աճէ՛-բարձր ըսված զբօսավայ-
 րը գնահ, հոն հանդարտ գլուխով կրնաս նստիլ,
 վասն զի հոն թաղական խորհուրդ չկայ, և հե-
 տեապէս, կուի ալ չկայ : Գլուխդ վեր առ և
 սա պատուհանէն ներս նայէ, տես սա կինը որ
 աղքատ ըլլալուն պատճառաւ բարձր չէ կրցած
 առնել և ալուր կը քսէ երեսներուն . խեղճ կը-
 նիկ . . . : Քայլ . . . նայէ սա գեղեցիկ աղ-
 ջիկը հասի՛ն հետ կը խօսի դրան առջև . Ինչ
 կը խօսի արդեօք . . . անշուշտ հայկական խղիչ-
 րոյն վրայ չխօսիր, կարմիր ներկ առած է առ-
 ջի օրը և վճարելու դրամ չունի խեղճը . . . Ինչ
 խեղճութիւն : Ահա քանի մը հայ երիտասարդ
 ձկնորսներ գինետունէն ելած երգելով կուգան,
 մի վախնար, ասոնք մարդու չեն դպչիր, պատ-
 ուաւոր կարծուած անձերէն շատ պատուաւոր
 են ասոնք որ ստախօսութիւն, նենգութիւն և
 նախանձ բնաւ չունին : Ծանբալ շարունակէ և
 ահա Աճէ՛-բարձր կուզված զբօսավայրը հասար :
 Նստէ քիչ մը և եկող պարոններն և օրիորդները
 դիտէ : Ա՛ռ քեզի օրիորդ մը՝ որուն շրջագրես-
 տը ինչալու վրայ է, կերեի որ աղէկ կապած չէ
 . . . ահա կին մը որ կուրծքը բացած՝ սղուն

կաթ տալով կամաց կամաց կուգայ խնդարով . . .
 աս դին նայէ, հարիւր տեսակ դոյն կայ սա
 կնկան հագուստներուն վրայ : Երիտասարդները
 կակոխն գալ : Քում՝ Բարուցին մեծաւ մասամբ
 հոս կը յաճախէ ուր շատ մը նշանակներ և իօս-
 կաններ տեղի կունենան ոչ-պաշտօնապէս : Եր-
 կու սեռերն հոս նշանացի կը խօսին իրարու հետ
 երբ իրարմէ հեռու մնան, իսկ ականջէ ականջ
 կը խօսին երբ իրարու մօտ լինին . ընտելեւը
 կարծես երբեմն ականջն աղջիկներու այտերուն
 վրայ դրած է, վասն զի երբեմն երիտասարդնե-
 րը այտերուն վրայէն կը խօսին իրենց խօսքն
 դիւրաւ լսելի ընելու համար : Այս տեսակ խօ-
 սակցութիւնն շատերը քիչ մը տարօրինակ գրո-
 նելով չեն ուզեր իրենց ընտանիքը հոն տա-
 նիլ :

Եթէ ներզնցար հոս՝ Պատմութե կուզված ըզ-
 բօսարանը գնահ . . . տես այրերու և կիներու
 բազմութիւնը : Աջ կողմը նայէ, էրիկ կնիկ ի-
 ըարու հետ կուռի բռնուած են . . . էրիկը փա-
 տով կապառնայ կնկանը որ ապտակ կը ցցունէ
 էրկանը . . . երկու տարու տղայ մ'ալ անոնց
 քովը նստած կուլայ . . . կինը թաշկինակով շըր-
 շաղգեստը կը սրբէ, կարծեմ՝ տղան մօրը դիր-
 կը միզած է և պատճառ տուած է վիճաբանու-

Թեան : Ընտանիքներու մէջ պզտիկ տղայներու մէջը մեր երեսփոխաններուն հարցապնդումին կը նմանի , միշտ վէճ կը յարուցանէ :

Եկուր քիչ մ'ալ աղջիկներու վարժարանն երթանք որ Լուսինայի կը կոչվի և զոր Տէր Սուքիաս քահանայն կառուցած է 1868 ին ազգէն օգնութիւն մուրալով : Սոյն վարժարանն ժամանակաւ երեք հարիւրի չափ աշակերտ ունէր , իսկ հիմա որ Տէր Սուքիասէն առնուած և թաղական խորհրդոյ յանձնուած է , հազիւ ութսուն աշակերտ ունի : Կը կարծուի որ հայրերը չեն ուզեր աղջիկ զաւակ ունենալ աղջիկներու կանոնաւոր վարժարան մը չունենալուն համար :

Այս թաղին մէջը կան Մեղրեան , Սուրենեան և Աբրահեան վարժարաններ որոց առաջին երկուքը երկու սեռէ աշակերտներ կընդունին . իսկ վերջինը միայն իգական սեռէն կընդունի . . . Նիտակը խօսելով հայրերն և մայրերը անհոգութիւն չեն ըներ այս վարժարաններու տղայ հասցնելու համար : Այս մասնաւոր վարժարաններուն ալ յաջողութիւն մաղթենք քանի որ թաղային վարժարաններէ յուսահատած ենք :

Թաղիս այրերը մեծաւ մասամբ արհեստա-

ւոր և պատուաւոր մարդեր են որ ժամանակաւ ազգային խնդիրներու մէջ մեծ դեր կը խաղային , իսկ քանի մը տարիներէ ի վեր իրենց թաղային վարժարանին վէճերովը կը բոսնուն :

Ասոնք գրեթէ ընդհանրապէս «բերեւեալ» են , ամենքն ալ օղի կը խմեն , միայն թէ օղին «իւր տեսակէն կը գործածեն : Այս տեղի ժողովուրդն այնպէս համոզուած է թէ օղին տեսակ մը ջուր է որ տխրութեան վրայ թափուելուն պէս ուրախութեան կը փոխէ զայն : Տեւը տարբեր եղանակներով կը գործածվի հոն . ոմանք առանց ջուրի կը խմեն . քիչ մը ջուր դնողներ ալ կան . են որ առաջ քիչ մը ջուրով կը լուան իրենց բերանը և վերջը կը խմեն օղին . ոմանք գաւաթով կը խմեն իսկ ոմանք շիշով և մէկ քանիներ ալ տակառով : Գաւաթով խմողները կը ծաղրվին ինչպէս «սեփալ» բժիշկներն «սեփալ» րէն :

Թէ այրերը և թէ կիները շատ կը սիրեն բաղնիքը . ձմեռը տաք բաղնիքներէն դուրս չեն ելներ , ամառն ալ ծովու բաղնիքներէն : Ամենքն ալ սառէ մը աւելի յաջողակութեամբ կը լողան , բայց չափազանց սնտեսագէտ ըլլալուն պատճառաւ՝ մինչև որ ութը ինը ժամ ծովու մէջ չմնան՝ բաղնեպանին վախժուան բարա-

վճարելու համար գժուարութիւններ կը հանեն : Ենայտօրութեան համար վեց ամիս Մեծ Պահք կը բռնեն և լուբիայով ու ձէթով կանցունեն իրենց օրերը :

Առաջուան շերտեւանդութիւնն անյայտ եղած է այս թաղէն և անոր յաջորդած է անտարբերութիւն տղթքի մասին : Կիրակի առաւօս մը դնա Մայր Եկեղեցին ժողովուրդէն մարդ չպիտի փեմնէս հոն . եթէ քահանայ մը տեսնէ՝ մոմ մը վառէ և դուրս ելիր : Կիները միայն Ս. Զատիկին կամ Ս. Ծնունդին օրերը կերթան եկեղեցին , և այն ալ ոչ թէ աղօթելու համար այլ իրարու հագուստներու վրայ դիտողութիւն ընելու , աղջիկներն մանչերու նշանելու և երբեմն ալ եկեղեցւոյն մէջ դաւակ բերելու համար :

Իդական սեռը թուղթ բացող կնիկներու ալ կը հաւատայ պակկայ նեատղ խաթուններուն ալ . եթէ կին մը հորի դոյլը կորուսնէ՝ թուղթ բացողներու կը դիմէ կորուսած դոյլը գտնելու համար — Թասօնիի դիմելու էր — եթէ աղջիկ մը իւր սիրականը կորուսնէ՝ պակկա նետել կուտայ : Այս նախապաշարումները շատ տուններու մէջ դեռ կը տեսնուին :

Իդական սեռը հոս պճնասելի չէ , հագուստի մասին շատ դրամ չմնիսեր . տարին անգամ

մը Բէրա կելնէ և Լոփ Ֆիլիբի ժամանակէն մը նացած գլխարկ մը կառնէ քառապատիկ գնով և ետ կը դառնայ : ասոր կրնեն , հնաձեռութիւն նորածեութեան . . . : Հագուստ վայելեցընելու համար ալ երկու երեք ժամ հայելիին առջևը մնալ չուզեր , հագուստն միմիայն իւր անձը պաշտպանելու համար կը հագնի և ասոր համար է որ երբեմն դուլպաները սխաղմամբ ձեռներուն կանցունէ և ձեռնոցներն ոտներուն : Որչափ երիտանարդներ կան որ ասանկ աղջիկներ կը փնտռեն : Աշխատատէր են , առաւօտէ մինչև երեկոյ կամ կար կը կարեն կամ լաթ կը լուան և կոմ տախտակ կը սրբեն : տեսակ մը աղջիկներու կամ կիներու պէս ծունկ ծունկի վրայ դրած պատուհանին առջև չեն նստիր չաբաթներով :

Այս թաղին մէջ կը բնակի Պ. Մինաս Քաբամաճեան , ազգային երեսփոխան և Լոյս հանդէսին խմբագիր , որ խմբագրական տաճանելի անդարեզին մէջ ազգին կը ծառայէ իւր լուրջ և զուեշտական յողուածներով և սակայն դարձեալ պէտք եղած քաջալերութիւնը չգտներ : Հոս կը կը բնակի նաեւ ազգային երեսփոխան և Հայրենի խմբագիր Պ. Մկրտիչ Մելիքեան որ խմբագրական ծանր բեռան տակ կը ճնշուի : Զգիտեմ թէ

այն ժողովուրդն որ Հայրենի մը չէ կարող ապրեցունել իրաւունք ունի Հայրենիք պօռալու . . . : Հոս ծնած է Գերապատիւ Մատթէոս եւ պիսկոպոս Իզմիրլեան որ Պատրիարք կուղէ ըլլալ և չի կրնար :

Այս թաղին սահմանն է արևելքէն օղի , արևմուտքէն գինի , հիւսիսէն քօնեաք , հարաւէն բում . կը կարծուի թէ նոյ նահապետ Քում Բաբուցի էր :

Կառավարութիւնն ոչ սահմանադրական է ոչ ալ միապետական . անհոգութիւնն է որ կը վարէ թաղին գործերը :

Նշանաւոր է Մայր Եկեղեցւոյ ջրհանկիրներու խումբը որ կարիճ երիտասարդներէ կազմուած է և որ մեծ պատիւ վաստկած է իւր ճիւղին մէջ : Եթէ հարուստ ըլլայի՝ ամբողջ թաղ մը կրակի կուտայի՝ այս կարիճներուն վագելը տեսներու համար :

Քում Բաբուն շատ խոնաւ է , բայց Քում Բաբուցին շատ առողջ է : Խոնաւութիւնը միմիայն անոնց լաթերուն փստած է և եթէ երբեմն Քում Բաբուցի մը տեսնես որ բորբոսած հագուստով կը վագէ՝ հասկցիր որ ատոր պատճառն խոնաւութիւնն է :

Մոռցանք յիշելու որ այս թաղին մէջ հա-

զար երկու հարիւր տուն հայ կայ և երկու հազար չորս հարիւր գինետուն , այսինքն տան գըլուխ երկու գինետուն . բայց թաղեցին այս թիւէն գոհ չըլլալով բողոքած է , և իւր բողոքըն ալ նկատողութեան առնուելով որոշված է հազար գինետուն ևս աւելցունել :

ՔԱՍԸՄ ԲԱՀԱ

Երկաթեայ դիմակ մը պէտք է մարդուս այս թաղը պտըտելու համար : Փողոց մը մտա՞ր , նոյն փողոցին մէջ բնակող կիներն ու աղջիկներն պատուհաններու առջև կը վազեն և քու դալդտեսներով իրարու հետ խօսիլ կսկսին .

— Տիկին , սա դիմացէն ելողը կը ճանչնաս :

— Չեմ ճանչնար , բնաւ տեսած չունիմ :

— Այս փողոցին մէջ մէկը կը վնասուէ արող-եօք :

— Ո՞վ գիտէ :

— Վայելուչ երիտասարդ մ'է :

— Ի՞նչ աղուոր մազեր ունի :

— Ատոր մազերուն աղուորութիւնն ալ ուր է , սատանայ կը նմանի :

— Ապուշ տպուշ նայուածք մ'ալ ունի . . .

— Ասկից զատ օձիքին վրայ ալ երկու մատ եղ կայ , շոգենաւի մէջ մեքենագործ է ինչ է :

— Ոտքդ պագնեմ , առ ինչ մեծ ոտք ունի :

— Կամաց խօսէ՛ քա , կը մտնենայիոր :

— Թո՛ղ մտնենայ :

— Աչքերն ալ պատուհաններուն վրայ է :

— Աս ինչ անչնորհք մարդ է :

Նոյն փողոցէն ելա՞ր , խնդիրը կը սաստիկանայ . իգական սեռն անպատճառ և անպատճառ կուզէ գիտնալ թէ ո՞վ էս դուռն , թէ մազերդ ինչու աղուոր չեն և թէ՛ օձիքիդ վրայ ինչու երկու մատ եղ էս դրած , և մինչև որ ասոնք չը հասկնայ՝ քունը չտանիր :

Բայց թողա՞նք իգական սեռն պատուհաններու առջև և տեսնա՞նք գործին նայի՞ք .

Ինչպէս որ ասանց փուշի վարդը չըլլար այնպէս ալ ասանց կոյանոցի Բասրմ բաշա չըլլար և եթէ՛ մարդը սիրտըն անոր փուշն ալ սիրելու է Բասրմ բաշա նստողն ինչու անոր կոյանոցն չը յարգէ , մանաւանդ որ սոյն կոյանոցն եթէ Փարիզ փոխադրվէր՝ տարին մէկ Միլիոն Ֆրանկ հասոյթ կը բերէր . . . : Նահու անսպառ աղբիւր մ'է այս կոյանոցի Եւրոպայի մէջ , բայց թուրքիոյ մէջ ինչպէ՛ տաղանդն ու հանճարն սոյնպէս այս կոյանոցն քաջապերութիւն չգտներ և շատ անգամ հարածման ենթակայ է . . . : Թող գորցեն թէ թուրքիոյ մէջ շահու աղբիւրները մեքած են . . .

Եկուր սա նեղ փողոցէն վեր ելնենք և Հայոց թաղը մտնենք որ Եհնէ չէշէ կը կոչվի ճիշդ այն գիրքերուն պէս որոնք հարիւր յիսուն տարի առաջ տպված են և նոր պարտաւորութիւն կը կրեն իրենց երեսը :

Սոյն թաղին մէջ ութսունըհինգ հայ ընտանիք կայ որ չորս հարիւր յիսուն հոգի կը պարունակէ : Ստոնց մէջ բնաւ բարեպաշտ չգտնվիր, վասն զի երբ եկեղեցի երթաւ՝ ուրիշ մարդ չես գտներ հոն բայց միայն Սուրբ Յակոբ Մծբնայ Հայրապետն : Այս Հայրապետն երեսը միշտ ծամածռած է . կերևի որ շատ բարկացած է թաղեցւոյն որ իւր քրիստոնէական պարտաւորութիւնները չճանաչեր : Ոմանք կըսեն թէ թաղեցին տեղւոյն Դեհր Կաշ քահանային հետ առէր իր լալով ուխտ ըրած է եկեղեցին ոտք չընէր : Երբեք Կաշ քահանայն ալ ուխտ ըրած է եկեղեցին դուրս ոտք չկոխել, սակայն զարմանալի է որ մեր ազգայիները երբ գինեպան մը բարկանան՝ բնաւ ուխտ չեն ըներ գինետունը ոտք չկոխելու . . . :

Եկեղեցւոյն դէմը դպրոց մը ալ Ս. Մարտիրոս Երզնկացի անուամբ : Սբ. Մարտիրոս հոն բարկան կը տանջվի, առաւօտէ մինչև սեկոյ առաջ կերտներու արջոյ կը կերցունէ, անց քա-

լել կը սորվեցունէ, անոնց վարտիքը կը քակէ և կը կապէ . խեղճ Ս. Մարտիրոս, եթէ տան մը մէջ սպասուհի երթար՝ չորս հարիւր դահեկան ամսական կառնէր . . . մայրերն զաւակ բերելուն պէս Ս. Մարտիրոս կը յանձնեն զանոնք որ դաստիարակվին : Թաղականները առաջին տարին ճիգ մը ըրին և դպրոցը քիչ շատ բարեկարգեցին, այս տարի հոգնութիւն կառնեն որպէս զի դալ տարի նորէն սկսին գործելու :

Հոս կը բնակի Պ. Խ. Սարաճ որ իւր թաղակիցներուն ուսման փափաք ներշնչելու համար յօդուածներ կը հրատարակէ Հայրենի մէջ և որոնց վերնագիր ընտրած է Դպրոց և պարտաւորութիւնը . կերևի որ թաղեցին նախապատիւ կը սեպէ այն գրութիւններն որոնք իրենց գլուխն ունին Բարձր : Այս երիտասարդն եկեղեցւոյ քով հիմնած է թանգարան մը՝ ուր երեսը կը մտնէ և փոշիները թոթուելով զուր ուծուցանէ այն յուսով որ թաղին տղայները լարդալ սորվին և օր մը դան կարդան հոն : Թող Պ. Սարաճ այս յուսով ինքզինքը խաբէ :

Թաղիս փողոցները այնչափ նեղ են որ մարդըս անցած ժամանակը կը կարծէ թէ Գորտ հասած է, շունչ առնելու համար նեղութիւն կը գտայ :

Տուներն այնչափ սիրով գրկած են զիրար որ
նչ արևն և նչ անձրևը կարող են իրենց ազդե-
ցութիւնը ներգործել փողոցէն անցնողներուն
վրայ :

Թաղային կռիւները պակաս չեն , և ամենա-
մեծ քաջութիւն կը սեպվի հոս կռիւ հանելէն
ետքը կանոնաւոր կերպով ետ քաշվիլը :

Երբ օտարէն յարձակում մը տեղի ունենայ՝
այրերը ետ կը քաշվին և սազարեզը կը մնայ
գեղեցիկ սեռին որ գրեթէ ամեն կռիւներու
մէջ յաղթանակը կը տանի :

Զբօսանքի տեղ չկայ , թաղէն քիչ մը հե-
ռու կայ Օջ Դէյրանի դաշտը ուր Սէրը միշտ կը
պտըտի հոն յաճախողներուն մէջ տեղը :

Փողոցներէն ճանճ մ'անգամ չանցնիր , վասն
զի ան ալ գիտէ որ բամբասանքի պիտի են-
թարկվի յալով :

Ելեցե Եր Կաշ աշխատասէր է , կար կը կա-
րէ , գիշէն դուանքուն մնալով կաշխատի և
աղուոր հագուիլ կը սիրէ , բայց հագուստը
վայելեցնելու մէջ միշտ երջանիկ չէ :

Հոս շատերը մարդուս մօրուքին կը խնդան ,
վասն զի այրերուն մեծ մասը սամբիշ են . մաս
մ'ալ կայ որ միշտ տխրագէմ է , վասն զի դար-
բին է և երկաթի հետ կաշխատի մինչև երեկոյ

և փափուկ խնդիրներու մէջ մանեղ չուզեր : Եր-
կու մասն ալ աշխատասէր և դործունեայ են
երբ ամեղի և կուանի վրայ է խնդիրը , իսկ երբ
իրենց զաւակներուն դաստիարակութեան վրայ
խօսք բացվի՝ այն ատեն անգամալայծ կը կտրին
և պրոպատիկեայ աւազանին մէջ նետվելու փա-
փաք ալ չեն զգար :

Բասթմ քաշայի օդը շատ աղէկ է բժիշկնե-
րու համար . քանի անգամ որ Եգեւ եղած է
մայրաքաղաքիս մէջ՝ Բասթմ քաշայի մէջ ծը-
նունդ առած է և ուրիշ թաղի մէջ մեռած
է : Շատ աղքատ բժիշկներ այս թաղին օդին
չտրհիւ մեծ հարստութիւններ դիզած են :

Այս թաղին օդը ամառուան եղանակին մէջ
միշտ լուծում կը պատճառէ : Թուրքօ-ռուսա-
կան կռիւէն առաջ Արևելեան խնդրոյն լուծում
տալու համար դեսպանախորհուրդն այս թաղին
ստորտան ըրաւ իւր նիստերը :

Այս թաղին մէջ օրէնք մը կայ որով աղքատ-
ներուն խտիւ արգիլուած է հիւանդ ըլլալը .
հարուստները միայն իրաւունք ունին հիւան-
դանալու : Անցեալներն աղքատ մը դիպուածով
հիւանդացաւ և թաղականին դիմեց որ թուղթ
մը առնէ ու Փրկիչի հիւանդանոցը երթայ : Թա-
ղական խորհուրդն նկատելով որ այս աղքատն

օրինաց դէմ վարվելով յանդգնած է հիւանդ-
 ւալարը՝ զայն պատժելու նպատակաւ ամբողջ
 վեց ամիս մերժեց անոր թուղթ տալ : Աղքատին
 ճարը հատնելով՝ տեղէ մը տասը դահե-
 կան ճարեց ու թաղականին տալով յաջողեցաւ
 անկէ թուղթ մը առնելու և այդ թուղթով Փըր-
 կիչ մտնելու : Այս օրէնքը շատ արդար է : Թա-
 ղականը մօտերս ծանր տուրք մը պիտի սահ-
 մանէ եղեր բոլոր այն աղքատներուն համար որ
 կը համարձակին օրէնքն ոտնակոխ ընելով հի-
 ւանդանալ :

Այս թաղին գետն է այն նշանաւոր ականն
 որ Բէրայէն կը վազէ և այս թաղէն անցնելով
 ծովը կը թափի : Այս գետին վրայ զբօսարան-
 ներ շինված են ուր կերթայ թաղեցին քիչ մը
 օդ առնելու և ծխախայտ ու կլկակ քաշելով
 ժամանակ անցունելու : Այս գետը կրնայ նա-
 ւարկելի ըլլալ միայն թէ ճամբորդներուն քի-
 թը կտրելու է և կամ քիթը կտրած ճանբորդ-
 ներ ճարելու է :

ՊԷՇԻՔԹԱՇ

Սըսսթ . . . ձայն մի հաներ , վերարկուդ
 կոճկէ , ձեռներդ ալ ննջեցեալի մը պէս կուրծ-
 քիդ վրայ դէր և բարև բռնէ . աջ կողմդ մի
 նայիր , ձախդ ալ մի դառնար . գլուխդ վեր մի
 բռներ , վար ալ մի բռներ . ետևդ մի նայիր ,
 առջևդ ալ մի նայիր . ահա ասոնք են իմ հրա-
 հանգներս Պէշիկթաշի մէջ քալելու համար . ա-
 սոնք են ահա այս թաղին փողոցի կանոնադրու-
 թեան յօդուածներն որ մինչև ի վերաքննու-
 թիւն , սահմանադրութեան յօդուածներու պէս
 դործադրվելու են գոնէ փողոցներու մէջ : Իսկ
 եթէ այս շրջանակը նեղ գտնես — ինչպէս Պատ-
 ըխարքները Սահմանադրութեան շրջանակն —
 և անկէ քիչ մը դուրս ելնել ուզես — ինչպէս
 Պատրիարքները Սահմանադրութեան շրջանա-
 կէն — խտտապահանջ չեմ ըլլար և թոյլ կուտամ
 քեզի որ գոնէ առջևդ նայիս որ չիյնաս , վա-
 սըն զի եթէ իյնաս և երկու ոտներդ ալ կտա-
 ըսս՝ ոչ ոք կուգայ ձեռներէդ բռնելու և քե-
 ղի օգնելու , դու քեզի օգնէ որ , կրեսն այս
 թաղին պարոնները , Աստուած ալ քեզի օգնէ :

և այն վիճակի մէջ թող կուտան զքեզ որ Աստուած քովդ դայ, ձեռներէդ բռնէ և Վէզիր Խանը տանի զքեզ ոտներդ կապել տալու համար: Ժամանակաւ Ինչոքն-Բեան բառը չկար մեր ազգին մէջ. նոյն խակ Ինչոքն-Բեան հեղինակն անպատճառ Պէշիկթաշ բնակած ըլլալու է և հոն զգացած ըլլալու է այսպիսի գիրք մը յօրինելու և հրատարակելու պէտքը: Արդ առջևդ նայէ որ չիյնաս և ողջ առողջ երևենք սա թաղէն:

Սա նեղ փողոցէն վեր երևենք ու եկեղեցին մտնենք — վասն զի շատ թաղերու մէջ անպատճառ նեղ փողոցէն անցնելու է եկեղեցի երթալու համար — ս'չ ապաքէն նեղ ճանրան միշտ արքայութիւն կը տանի: Ժամանակաւ այս թաղին մէջ ժողովուրդը մեծ ջերմեռանդութիւն ունէր իւր Կաթնի մէջ. Կաթնեբուն վերնալէն ի վեր ժողովրդեան մէջ բարեպաշտութիւնն ալ վերցաւ: Կրօնական ժողովը տղայական խնդիրներով զբաղելով տղայական սրտումներ տալու տեղ պարտաւոր էր ժողովուրդը եկեղեցասիրութեան վարժեցնելու համար անոր գլուխը Կաթնի անցումներ: Տե՛ս սա եկեղեցեցին, ինչ ճաշակով շինված է. այլ ինչ օգուտ, մէջը հաւատացեալէն աւելի փոշի կայ և փոշինե-

րէ մաքրվելու համար զրան քով գոնէ մէկ վրձին ալ չկայ: Թաղականներն ո՛ւր են... քահանաներն ինչ կընեն, քարոզիչն ո՛ւր է...: Մի՛ հարցունք, քահանաները իրենց քարոզիչին հետ շաբաթը հինգ անգամ կուր կընեն և վեց անգամ կը հաշտվին: Թաղեցւոյն ժողովրդական մասը քահանայներու կողմը կը բռնէ խկ ազնուական մասն՝ քարոզիչինը: Ի՞նչ է ասոնց կուռոյն պատճառը: Ի՞նչ կրնայ ըլլալ կրօնականներու կուռոյն պատճառն, կամ իրենց յուսացածին չափ մարդ չմեռնիր և կամ հարսանիք ու կնուսք չըլլար, որով իրենց Կաթնի հաւատարակչութիւնը կը կորստի: Միթէ ասոնց Կաթնի հաւատարակչելու համար ամեն օր մեռնելու է, ամեն օր կին մ'առնելու է, ամեն օր զաւակ ունենալու է: Այո, եթէ այս անկարելի է Գերմանիայէն ելմտագէտ մը բերելու է որ կանոնաւորէ ասոնց Կաթնի:

Այս թաղն ալ ունի երկու վարժարաններն որոնց մէջ օր մը մեր թոռներու թոռները պիտի կրթվին եթէ Պէշիկթաշցին յաջողի մինչև նոյն օրը բարեկարգել իւր դաստիարակութեան շէնքերը: Պէշիկթաշցին, իւր վարժարանները կանոնաւորելու համար, քսան տարիէ ի վեր դասատու կը փոխէ, հոգաբարձու կը փոխէ, գը-

բասեղան կը փոխէ , անտես կը փոխէ , գրեչ կը փոխէ , թաղական կը փոխէ , գերք կը փոխէ և դարձեալ չյաջողիր , թող անգամ մ'ալ դարձցին աշակերտները փոխէ , տեսնենք ինչպէս կըլլայ . եթէ դարձեալ յուսացուած արդիւնքը չտեսնվի՝ այն ատեն հարկ կըլլայ թաղեցւոյն փոխել իւր . . . իւր . . . լաթերը . . . ոչ , իւր . . . գլուխը : Այս թաղին մէջ կը բնակի Իւթիւճեան , Մասիսի խմբագրապետը , որ կարող է այդ վարժարաններու սնօրէնութիւնն իւր վրայ առնել և թաղին զաւակներուն դաստիարակութեանը աշխատիլ , սակայն կը վախնայ խեղճն որ ասանկ պաշտօնի մը գլուխ անցնելուն պէս քանի մը ամիսէն իւր տունը պիտի քարկոծեն — Պէշիկթաշցին ասոր փորձը տուած է դժբախդարար — : Իւթիւճեան այս քարկոծումէն չէր վախնար՝ եթէ Մասիսի եկամուտը ներէր շաբաթը մէկ անգամ նոր ապակիներ անցունել իւր տանը պատուհաններուն :

Մասնաւոր վարժարան մը կայ հոս որ աշակերտներու Հայոց Պատմութիւն միայն կը կարդացունէ : Մէկ դասագիրքը երկու անգամ կը կարդացունէ , աշակերտն զայն լմնցնելուն պէս Փափագեանի Հայոց Պատմութիւն մը կը արվի իրեն . աս ալ երեք անգամ կարդալէն ետքը

Սուրենանը կը կարդայ , ասոնց կը յաջորդեն միւս Հայոց Պատմութիւնները զորս երեքական անգամ կը կարդայ իրարու ետեւէ : Աստուած քառասուն տեսակ Հայոց Պատմութիւն տուած ըլլալով մեզի՝ խեղճ աշակերտները դեռ չկրցին ասոնց ամենը կարդալ լմնցնել որ մենք ալ տեսնէինք թէ այս դասատունն Հայոց Պատմութիւն էն վերջը ինչ դասագիրք պիտի տայ աշակերտներուն : Այս դասատուն , կրտսեր , միայն քանի մը հարուստ ծնողներ կը հրաւիրէ քննութեան :

Պէշիկթաշի մէջ մաս մը կայ որ վաճառականութեամբ կամ արհեստով կապրի , մաս մ'ալ կայ որ չզիտցվիր ինչպէս կապրի , մաս մ'ալ կայ որ պարտք գիղելով կապրի , մաս մ'ալ կայ որ շաբաթականով կամ ամսականով կապրի : Այս վերջինն ամենէն մեծ մասն է որ մեծ վարժութիւն ըրած է գետինը ծուրով գետնէն . . . բան մը առնելու . . . ոչ , գետնէն բարև առնելու և տալու : Այս մասին բերանէն բնառ չպակիիր «կուսան և շուսայ ե՛ք» : Եթէ օր մը հարիւր անգամ շուսայ ե՛ք չըսէ հետեւեալ օրը պաշտօնէն կը հանվի : Այս խեղճերը պաշտօնէ չզրկվելու համար վարժապետի մը երդ մը շինել տուած են շուսայ ե՛ք նաքարաթով և ամեն իրիկուն սեղանը չնստած այդ երդը կերդեն : Միջագիւղ ալ կեր-

գեն նոյն երգը Յերէմէ Խաչէ՛յի մէջ պաշտօն վարող երիտասարդներն որոնք Միջագիւղի աղօղայիններուն կէօը կը կաղմեն :

Ով որ այս թաղը կերթայ պարտաւոր է աբատ հանող փոշիէն քիչ մը հետը տանելու , վասն զի քիչ մարդ կայ որ այս թաղը մտած ըլլայ և վրան արատ քոված չըլլայ . հոս արամն առատ է :

Անցեալ դարէ մնացած փաստաբաններ կը գտնուին հոս և որոնք Աստուծոյ վերաբերեալ դատերը կը փաստաբանեն : Ասոնք ժողովրդեան կողմէ վաւերացուած փաստաբաններ ըլլալով Պէշիկթաշի ճարտասանները կը համարուին :

Աղաչելու և սլաղատելու այնքան վարժված են որ երբ այդ խեղճուկ բարեներով գէմդ ելնեն՝ կստիպվիս կամ պաշտօն մը և քսակդ անոնց տալ . ասոնք երբ ուզեն՝ իրենց աչերէն արտասուք ալ կը հանեն :

Երիտասարդութիւն չկայ հոս . երբ ազգային խնդրոյ մը համար խորհրդակցել հարկ ըլլայ՝ Սամաթիայէն կամ ուրիշ թաղէն մարդ կը կանչեն . իսկ եթէ թաղն անղէն առնես տանիս՝ ժողովուրդը ձայն չհաներ . այնքան խաղաղասէր է :

Ինքզինքն ազնուական կարծող մասն առանց

գինեաուն կամ նպարալաճառի մը խանութը հանդիպելու շիտակ տուն կերթայ . իսկ մնացած մասերը գինեաուն ալ կերթան զբօսարան ալ և նարա կամ թուղթ կը խաղան կերակի օրերը մինչև երեկոյ : Ոմանք ալ գիշերները մէյմէկ տուն հաւաքվելով Երէ՛ք կը խաղան :

Ասոնք , երբ վողոցի մէջ գտնուին , իրենց բարեկամը չտեսնելու կը զարնեն և բարե տալու կը վախնան որ չըլլայ թէ իրեն բարեկամին խահուէ մը հրամցնելով քսան բարա վաճառեն :

Ընկերականութիւնն հոս այնչափ յառաջ գացած է որ երկու դրացի դիրտը չեն ճանչնար և Միջագիւղցիին կը հարցնեն թէ ով է իրենց քովի տունը նստող ընտանիքն :

Պէշիկթաշցին այն աստիճան քաջասիրտ է որ չորս պէշիկթաշցի կարող է մէկ մուկի գէմ կրուելու : Ամեն անգամ որ Լապէլ ելնի ներկայացում տրված է՝ Աւստրալիոյ դերերը կատարելու համար պէշիկթաշցի դերասաններ փնտռված են :

Այրերը հոս շաբաթն երկու անգամ շապիկ կը փոխեն : Երբ ազգասիրութեան վրայ խօսք բացուի՝ կըսեն . նախ բայնիք և ապա ազգ : Ասոնք , քիչ բացառութեամբ , ժամերով սափրիչներու առջև կը նստին , և ամիրուէլէն ա-

ուսջ երեք ժամի չափ մազխելով կը փեթտեն իրենց պեխերուն ծայրերն և կըր ձև մը կուտան անոնց :

Իսառանք իգական սեռին :

Գեղեցիկ սեռն փողոցը քալած ժամանակը գետինը ճայիր այլ երկինք , և աս ալ թերևս իւր պարանոցն ցոյց տալու համար : Կիները հոս մեծ ազդեցութիւն ունին իրենց էրկներուն վրայ որոնք միշտ կիներնուն ետեւէն կը քալեն ըստ աւետարանին թէ՛ Բողոքս աս զհայր և զմայր և երեքն զհօր և զմայր : Կիներն այրերու հնազանդելու տեղ՝ այրերը կիներու կը հնազանդին : Պէշիկթաշի կիները գեղեցիկ են , տան տիկին և տնաչէն . հոս բրինձի փոշին շատ յարգ չունի : Պարզասիրութիւնն ալ քիչ յարգ ունի , վստահ Պէշիքթաշի թաղն Բէրայի շատ մտաբլայով թաղիս իգական սեռը շաբաթը գոնէ մէկ անգամ Բէրա կերթայ և նոր ձեռ կտանէ տունը կը բերէ :

Այս թաղին կիներն այրերէն աւելի ազգասէր են , բայց օրուան մեծ մասն իրենց հագուստ ձեւերու և կարելու յատկացուցած ըլլալով ժամանակ չեն գտներ աղջիկներու վարժարանն անգամ մը աչքէ անցունելու :

Պզտիկ աղջիկներուն գալով ասոնք փողոցէն

անցնողներէ չտեսնուելու եղանակով մը պատահաններուն առջևը կը նստին , և քովի տունը զարնուելուն պէս՝ իրենց գլուխը պատահանէն դուրս կը հանեն և դուռը զարնողը շլէն մինչև ոտները քննելէն ետև վազելով վար կերթան և իւրաքանչիւրն իրեն մօրը կիմացունէ թէ այս կազմով , այս հասակով այս դոյնով մէկը եկաւ դրացւոյն տունը : Մայրերն շնորհակալութիւն յայտնելով այս փոքր գեսպաններուն՝ նորէն վեր կը դրկեն զանոնք որ աղէկ մը մտիկ ընեն թէ ինչ կը խօսուի դրացւոյն տունը և իրենց խմացունեն :

Պէշիկթաշին գարնան Փետրուար կերթայ և ամառն Օգոստոսը ըսված զբոսավայրն ուր կիրակի օրերը օգոստոս կը խաղան և անբարոյական խօսքեր ընելով բարոյականութիւն կը քարոզեն հանդիսականներուն որոց մէջ պատուաւոր այրեր և կիներ գտնվելէն զատ վեց եօթը տարու աշխատներ ալ պակաս չեն . իսկ ձմեռը տան մէջ կը փակվի կը նստի մինչև որ անունի տօնախմբութիւններն սկսին : Այս տօնախմբութիւններն սկսելուն պէս ալ տուն նստին արգիլված է , ամեն գիշեր անուի երթալու է և մինչև առաւօտ գոնէ օրս մը օդի և հինգ օրս գինի խմուելու է որ սիրտը հանգիստ ըլլայ :

— Ո՛չ, ո՛չ, ես այդ շողեհաւաները չեմ մըտ-
ներ :

— Տղայութիւն պէտք չէ, մի վախնար :

— Ուխտ ըրած եմ չմտնելու :

— Կնիկ մի ըլլար, աշխարհիս վրայ ամեն
բան մեղի համար է : քաջալերվէ, նետվէ նա-
յիմ սա շողեհաւին մէջ, մահէն վախցողը մարդ-
ըսվելու չէ արժանի : Օ՛ն անդր, քաջալերու-
թիւն, հապ օն յառաջ :

Ահա շողեհաւուն մէջն ենք . . : հասնատէ .
քաջութեամբ նստէ, ծունկերդ շատ մի բանար
որ սա խեղճ մարդն ալ նստի . . . ծունկերդ
վրայ եկան նստեցան, փաստ չունի համբերէ . . .
— Բայց տես կռնակա ալ կեղնեն կը նստին . —
Հոգ չէ, խեղճ բեռնակիրները հոգի չունին .
— Շունչս կտրիլ սկսաւ . — Բան մ'ալ չես ըլ-
լար, կը վարժվիս . — Շողեհաւն ո՞րչափ ծռե-
ցաւ, մէջը ջուր առնել սկսաւ պիտի խղդվինք .
— Բան չկայ, ամեն բան տեսնելու չէ . ահա
եկանք Պալատ, պատրաստվէ որ ելնենք, սա-
կայն կամաց կոխէ նաւամատոյցին որ չիլի . . . :
Եփրայեցիներու շուկայէն պիտի անցնինք հիմա,
ժամացոյցդ և քսակդ պահպանէ : Ահա Բեռ-
տեմ կոչված զան ի վերը ուսկից վեր ելնելու
համար գոնէ չորս կանգուն երկայնութեամբ

չնչաութիւն ունենալու է : Զառ ի վերին գը-
լուխը հասանք . Սալմաթօմրուքն է հոս : Մեծ
փողոցին վրայի զբօսարանը թաղին ազգային
զբօսարանն է, տես քարերուն վրայ հինգ տե-
սակ Ազգ. լրագիրներ դրված են որոնց երե-
սը նայող չկայ . թանգարան մ'ալ կայ որուն
տէրն է սոյն թաղին Գրասիրական Ընկերութիւնն որ
վեց տարեկան ըլլալով ակռայի վախն անցու-
ցած է և օր ըստ օրէ աճելու վրայ է : Աս ընկե-
րութեան նպատակն է լրագրով, դիրքերով և
կիրակնօրեայ դասախօսութիւններով թաղին մէջ
ընթերցասիրութիւն տարածել : Այս զբօսարա-
նին մէջ կը գտնվին դիւանագէտներ որոնք ա-
մեն օր կը քննադատեն կամ Պիսմարքի ընթաց-
քը կամ Կլատսթնի աշխարհավարութիւնը :
Յառաջանանք գէպ ի Քարակէօմրիւկ : Այս գի-
նետունները քանի մը ամիս առաջ գոցված էին
խսկ հիմա նորէն բացվեցան դեսպաններու շը-
նորհիւ : Թաղեցիները շորհակալութեան ուղերձ
մը կատորագրեն դեսպաններու տալու համար,
վասն զի խեղճերը իրիկունները Պալատու գի-
նետունները կերթային խմելու և գիշերուան
ժամը չորսին հաղիւ կրնային իրենց տունները
մտնելու, որով իրենց ընտանիքներէն յանդի-
մանութիւններ կը լսէին : Զրոյց կը պտրտի թէ

Թաղեցիկն պիտի պնդէ եղեր, իրիկունները կանուխ տուն երթալը դիւրացնելու համար, որ իւրաքանչիւր տան քովը պղտիկ գինետուն մը բացվի:

Այս թաղին փողոցներուն թիւը երեսունը մէկի կը հասնի, բայց ասոնց մէջ կան անանկ փողոցներ որոնցմէ անցնելու համար կատարեալ մարմնամարդութիւն գիտնալու է. առանց ասոր կամ գլուխդ կը կոտրես կամ թեղ եւ կամ ուրիշ մէկ կողմդ: Փողոցներ կան որ Կ. Պօլսոյ առուամէն ի վեր նորոգուած չեն և նորոգուելիք ալ չունին:

Ահա Քարակէօմրիւկի եկեղեցին որուն տունն է Ոսկեբերան և ուր կայ հրաշագործ Աստուածածին: Ուխտատեղի է, Չերմեռանդ և բարեպաշտ ուխտաւորները պղտիկ չար-խափան կանուանեն այս աղօթից տունը: Չաւակ չունեցող այրերն ու կիները հոս ուխտի կուգան, շատ զաւակ ունեցողներն ալ հոս ուխտ կընեն: Պարապ պտըտողները, հիւանդութենէ եխողները, իրենց սպասաւորներուն իրաւունքը ուտողները, իբրև աւանդ առնուած աղամանդներն ուրիշի ծախողներն, որբևայրիներուն ստակը կըլղնեն ընդհանրապէս հոս ուխտի կուգան:

Այս տեղի քահանաներն ալ քիչ շատ ուսած

են հրաշագործութիւն և երբեմն երբեմն պղտիկ հրաշքներ ալ կը գործեն: Չերմեռանդի մը կողմէ Աստուածածնայ պատկերին նուէր տրուած զուտ ոսկիէ դօտի մը երկու օրուան մէջ ոսկեղօծ պղինձի փոխվեցաւ. ուրիշի մը նուիրած Խաչիկէն ալ «Ե» ի այլափոխուեցաւ:

Երբեմն ինքնիրմէ ասանկ այլակերպութիւններ տեղի կունենան այս եկեղեցւոյն մէջ, այլակերպութիւններ որ ուրիշ եկեղեցիներու մէջ ալ պակաս չեն:

Թաղիս քարոզիչն ալ կարուկ մարդ մ'է, շատ ախօսութիւն չիրեր. շատ անգամ պաշտօնական գրութիւններն և երբեմն ալ աւետարանը կը համառօտէ և այնպէս կը կարդայ ունկընդիրներուն ձանձրոյթ չտալու համար:

Թաղական խորհուրդը մօտերս պիտի որոյն որ օրինաւոր տետրակ ունենայ եկեղեցական անօթներու, որպէս զի անոնք ալ հրաշքով չըփօթվին կամ երկինք համբառնան: Մեծ դպրութիւն և խնամք պէտք է այն թաղերը ուր հրաշքներ կը գործուին:

Սոյն միացեալ թաղն, որ կը բաղկանայ Քարակէօմրիւկ, Սարմաթօմրուք, Սուլթան համամ, Պղտիկ և Մեծ Մարտի թաղերէ, ունի հինգ հարիւր յիսունըչորս տուն հայ: Ամենէն բազմա-

մարդն է Սալմաթօմրուք որ ունի չորս հարիւր քսան և ութը տուն, մէկ եկեղեցի, մէկ նախակրթարան, մէկ ուսումնարան և աղջիկներու վարժարան մը: Յիշեալ դպրոցներուն մէջ կան հարիւր երեսուն և ութ աշակերտ և ութ տունը չորս աշակերտ: Կամ աշակերտ: Կամ աշակերտաբան: Վեց տարեկանէն վեր աշակերտ կամ աշակերտուհի չընդունվիր, վասն զի այս տարիքին մէջ հոն կը սորվին հայերէն, տաճկերէն, ֆրանսերէն, անգլիերէն, գերմաներէն, սլավերէն, երբայերէն, թուաբանութիւն, տրամաբանութիւն, պատմութիւն, աշխարհագրութիւն, կրօնագիտութիւն, գծագրութիւն, երաժշտութիւն, բնագիտութիւն, քիմիաբանութիւն, փիլիսոփայութիւն, մարմնամարզութիւն, հոգեմարզութիւն: Հոս ընթերցանութիւնը իրենց մօրն արգանդին մէջ կուսանին: Թագեցին իւր վարժարաններուն այս հրաշալի յառաջադիմութիւնն պարտաւոր է ուսումնական Խորհուրդոյն որ բնաւ հոգ չընեն նոյն խակ եթէ աչերովն ալ տեսնէ որ մնավտճառ մը վարժարանի անօրէնութիւն կամ հոգաբարձութիւն կընէ:

Ժողովուրդը մեծ մասամբ տղէտ է և արգիտութիւնն, պաշտպանութիւն դասնելով, որ

լստ օրէ յառաջ կերթայ: Եթէ այս վարժարանին մէջ գիտութեան տեղ տգիտութեան դասեր աւանդվէին՝ առաջին կարգի վարժապետատանոց մը կըլլար տգիտութեան:

Իրենց վիճաբանութեան եղանակին վրայ թեթև դաղափար մը տալու համար կը հրատարակենք հոս վիճաբանութիւն մը որ երկու հոգւոյ մէջ տեղի ունեցած է.

— Բարեկամ, այս տեսուչն մեր զաւակներուն ապագայն կապաննէ:

— Ո՛չ, այս տեսուչն մեր զաւակներուն ապագայն կը շինէ, երէկ Եւրօ՛՛ն Ահմէտ աղան վարժարաններու այցելութիւն մը ընելով շատ դժհացուցիչ դասեր է դանոնք:

— Բայց երէկ Եւրօ՛՛ն Տիմիթրօն կը պնդէր թէ այդ մարդն այդ պաշտօնին մարդը չէ:

— Սխալ է, Եւրօ՛՛ն կիրք ունի մեր Տեսուչին դէմ որ իրիկունները Եւրօ չխմեր:

— Խորհուրդ մը ընենք և սա Տեսուչը փոխենք, մեզք է մեր զաւակներուն:

— Ատանկ բան չըլլար, դուն քու նոտած խանութիդ վարձքը չես կրնար վճարել և կեկնես ազգային գործերուն մէջ կը մտնես:

— Ես քեզի պէս ուրիշին իրաւունքը չեմ ուտեր, դուն ինձի աղէկ նայէ:

— Բերանդ ժողովէ՛ , հիմա ակօռը դիտուդ կիջեցունեմ հա՛ անպիտան :

— Դուն ալ ասկէ վերջը եկուր տէ , մեր տունէն կնկանդ համար շաղիս առ :

— Անցեալ շաբթու չէր որ եկար քանի՞նք առիր և Գարակէօմբիւք ուխտի դացիր :

— Գուկին ինչ վատ ըլլալդ ամեն մարդ դիտէ :

— Վատը դու ես . . . :

Ծեծկրուքը կսկսի , ապտակ և կից փոխանակուել կսկսին :

Երրորդ մը կուգայ և կը միջամտէ . . . :

— Բանիւք մը համար կը վայլէ որ . . . :

— Վատ ըստ ինձի :

— (Այնքն է վար) Դու ալ այդ աւանակին խօսքին կարևորութիւն մի տար :

— Ան ալ ինձի անպիտան ըստ :

— (Այնքն է վար) Անթի է , այդ իշուն խօսքերուն կարևորութիւն կուտաս : (Բարձր) Հաշտուեցէք , եղբայր էք դուք . . . բայց այս քանի խնդիրը ինչպէս ծագեցա :

— Վարժարանի վրայ խօսք բացուեցա . . . :

— Վարժարանին քանի՞նք պիտի հազցունէիք ինչ պիտի ընէիք որ . . . :

— Չէ , Տեսուչը . . . :

— Առնենք , եղբայր , առնենք , Տեսուչին քանի՞նք մը առնենք , ինչ կըլլայ եղեր :

— Չես հասկնար , եղբայր , խնդիրը վարժարաններու վրայ էր :

— Վարժարաններու համար կը վիճաբանէիք :

— Այո՛ ,

— Դուք երկուքնիդ ալ աւանակ էք եղեր . . . վարժարանի մը համար իրարու սիրտ կուտրել ինչ պիտի ըլլայ , ես ալ կարծեցի որ օգտակար բանի մը համար կը վիճէիք . . . այ աւանակներ :

Վիճաբանողներն այս դիտողութիւնն իրաւացի կը դռնեն , կը գղջան որ չնչին խնդրոյ մը համար զիրար վիրաւորած են , կը պաղտուին կը հաշտուին և ուխտ կընեն որ մէյ մ'ալ վարժարանն իրենց բերանը չառնեն :

Թաղականի կռիւները հոս պակաս չեն : Երբ Թաղական խորհրդոյ ընտրութեան ձեռնարկվի՛ մարդուն մէկը Դիողինէսի լապտեր մը կառնէ երեք հազար հոգիէն ինը հոգի դռնելու համար և դարձեալ չյաջողիր : Թաղական ըլլողն կամ վեց ամիսէն հրաժարական կուտայ և կամ խը անկողինը Թաղական խորհրդարանը կը փոխադրէ :

Ստըմաթօմբուրի մէջ կան քանի մը մարդեր

ներն Հայերէնի մէջ տաճկերէն բառեր կը խառնեն մինչդեռ ասոնք տաճկերէնի մէջ Հայերէն բառեր խառնելով յառաջ կը տանին մայրենի լեզուն : Ասոնք կարող են Մշակէ մէջ Հայերէն յօդուածներ գրել :

Այս թաղն առողջ օդ մ'ունի . և եթէ թաղեցին գէշ օդի մը մէջ աշխարհ գալու ստիպվէր՝ մեռած պիտի ծնէր :

Է Յ Ո Ի Պ

Էյուպի մէջ երկու Սուրբ կայ որ իրարմէ կէս ժամու չափ հեռաւորութիւն ունին . Այս Սուրբերէն միոյն անունն է Աստուածածին և միւսինը Եղիա : Այսօր Ս. Եղիայի Էյուպի վրայ պիտի խօսինք :

Այս թաղին մէջ բնաւ սատանայ չկայ , գրեթէ մեծ մասամբ աղանիի պէս միամիտ են : Ժողովուրդը պահպանողական ըլլալով քայլ մը յառաջ գնացած չէ այն վիճակէն որուն մէջ ստեղծած է զինքն Աստուած : Այս թաղին մէջ պտըտողը ինքզինքն Սղամայ ժամանակակից կը կարծէ :

Հարիւր տասը հայ սուն կայ հոս : Ժամանակաւ երկու վարժարան ունէին , մին աղջիկներու և միւսը մանչերու . իսկ հիմա այդ չէնքերն այրած ըլլալով աշակերտներու մէկ մասը տան մը մէջ կը խաղան և մէկ մասն ալ փողոցներու մէջ : Աշխատող պղտիկ մաս մը կայ որ հանգանակութեամբ վերաշինել կաշխատի թաղին վարժարանները :

Ժողովուրդն իւր զաւակներուն դատտարա-

կութեանը համար սիրա չհատուներ. եթէ Աստուած կամենայ, կրտէ, մեր զաւակներն առանց վարժարան երթալու ալ կրնան ուսումնական ըլլալ:

Հոս ո՛չ ընկերականութիւն կայ և ո՛չ երկառասարդութիւն, այլ առանձնասիրութիւն և տրդայութիւն կայ. ամեն մարդ պարտաւոր է իւր տունը քաշի՛լ ու նստիլ. մեծ անիրաւութիւն է գրացւոյն տունն երթալ և մէկ երկու ժամ նստելով ժամանակ անցունելը:

Այս թաղին մէջ արհեստն ալ իւր օրորոցին մէջ է դեռ: Էյուպի ազգայիններուն մէկ մասը բրուտ ըլլալով՝ հողէ տեսակ տեսակ ամաններ և անօթներ կը շինեն: Հողէ տեսակ մ'ալ անօթ կը շինեն որուն հայերէնը չենք յիշեր, բայց մեր ընթերցողներուն կատարեալ գաղափար մը տալու համար յիշեալ անօթին վրայ՝ կը պարտաւորինք ըսել թէ շատ մը կիներ հիմա ճիշդ այդ հողէ անօթը յարդէ շինելով՝ վրան լաթ մը կանցունեն և քիչ մը ծաղիկով և Կրօնականութեամբ կը զարդարելէն ետքը իրենց գլուխը կանցունեն:

Այս թաղին մէջ գինեառուն չկայ և օղի ծախսիլը արդիված է . . . ինչ գժբախտութիւն: Թաղեցիներեկոյնները ընդհանրապէս Իլիմն Իսկելէսի կը հանդիպի և հոն քանի մը գաւաթ օ-

ղի խմելէն ետքը կերթայ իւր թաղը՝ ուր տան մը մէջ ալ գաղտնի օղի կը ծախսի: Շատ մը ընտանիքներ իրենց զաւակներն օղիէ կտրելու համար այս թաղը կուգան, ինչպէս որ տենդ ունեցողներն ալ հիմա Միջագիւղ կերթան ջուր խմելէ կտրելու համար:

Ժողովուրդն եկեղեցասէր է, սակայն քարոզիչ չուղեր. եթէ տարին մէկ երկու անգամ Պատրիարքարանէ քարոզիչ մը զրկի՛ն հոն՝ թաղեցին սիրով կրնդունի զայն այն սլայմանաւ որ քարոզը տալուն պէս թաղէն դուրս ելնէ:

Կիները մեղուի պէս ժրջան են, վայրկեան մը պարտալ չեն նստիր, Էմբոյէ շուքը հազած քեհաւէի համար քեհ կը հիւսեն նստած իրենց տանը գրան սեմին վրայ որու առջևէն կանցնի թաղին կոյանոցը — Թաղին աշխատաւորները գոնէ հանգանակութիւն մ'ալ բանային և անոր արդիւնքովն մաքրէին սոյն կոյանոցն որուն մէջ երբեմն կիյնան Էմբոյէի շատիկէկ խմողները. իսկ եթէ թաղեցւոյն քիթը շահ մ'ունի այդ կոյանոցին հոտէն՝ ասոր ըսելիք չունինք —:

Կիները լայնածաւալ սիրտ մ'ունին, և այս պատճառաւ երկարակեաց են. ամենէն կարճ կեանք ունեցողն կինն իննսունըինը տարեկան է, և երբ հարիւր տարեկան կին մը մեռ-

նի՝ ծաղին հասակին մէջ առ Աստուած փոխված
կը համարվի, իսկ երբ մէկ տարեկան աղջիկ մը
մեռնի՝ վիժամ կը սեպվի:

Իգական սեռին մէջ փոքրիկ մաս մը կայ ու-
րուն հետ խօսելու համար զրահ հագնելու է,
վասն զի ասոնք փատով կը խօսին, և եթէ կան-
խաւ գգուշութիւն չընես՝ գլուխդ կը սպատառեն:

Քամբասանքն հոս յուսացվածէն աւելի է,
միայն թէ սահմանափակ ըլլալով Եւֆրէ Էփրատին
վրայ կը դառնայ միշտ:

Թաղին բերքն է փայտէ շինված տղու խա-
ղախիկներ, որոնցմէ երբեմն մեծ մարդեր ալ
ծախու կառնեն իրենց համար:

Օգը թէպէտև աղէկ է, բայց բնակիչներուն
թմբութեանը նայելով կերևի որ քիչ մը թմբե-
ցուցիչ է: Ե յուսոցիներէն ուսանք փողոցը քալած
ժամանակնին կը քնանան և աղուոր երայներ
կը տեսնեն:

Գ Ա Տ Ը Գ Ի Ի Ղ

Աշխարհագրական հնաւանդ սովորութեան
դէմ խօսած չըլլալու համար պարտաւոր ենք
ըսել թէ այս գիւղն ալ ունի իւր արևելքն, արևմուտքն,
հիւսիսն և հարաւն. բայց մեր խիղ-
ճըն ալ յարգելու համար կըստիպվինք խոստո-
վանելու որ արևելքին, արևմուտքին և հիւսի-
սին գոյութիւնն անուանական է, հարաւն է մի-
այն որ կը տիրէ այս գեղին վրայ: Հիւսիսն իսկ
եթէ երբեմն քանի մը խօսք ընել ուղէ՛ հարաւ-
ւին բերնով կը խօսի: Արևն հոս հարաւային
կողմէն կեղնէ և հարաւային կողմէն կը մտնէ,
վերջապէս ամեն բան հարաւ է հոս:

Այս տողերը գրելով մեր նպատակն է իմա-
ցունել արդոյ հասարակութեան որ ձմեռուան
եղանակին մէջ այս գիւղն երթալ փափաքող-
ներն ամառուան հագուստ հագնելու են. իսկ
ամառուան տաք օրերուն մէջ երթալ ուզողնե-
րը մերկ երթալու են հոն, այսինքն ուրիշ հագ-
նելու են:

Մահաւոյնի ընկերութիւնն իւր ճանբող-
ները զովացնելու համար է որ այնպիսի ձևով

չողեհնաւներ կը բանեցունէ որոնք միշտ ծովու ալիքներ կընդունին իրենց մէջ, որով ճանրորդները ծովու ջրով կը լուացվին և կը զովանան, եթէ այս չըլլար՝ ճանրորդները տաքէն կը մուրէին:

Այս գիւղն այնչափ օրհնեալ գիւղ մ'է որ քանի մը տարիներ առաջ երբ Հրէային մէկը գուշակութիւն ընելով ըսաւ թէ՝ գետնին տակն պիտի անցնի այն գիւղն որու անուան սկզբնատաւը է է՝ ամեն մարդ միաբերան սոբապ թէ՝ Գատը գիւղն ըլլալու է այդ գիւղը: Հրէային գուշակութիւնը չեղաւ, բայց, ինչ օգուտ, գեղին պատիւը հրապարակի վրայ կոտրեցաւ: Այն թուականին ըսողներ ալ գտնուեցան որ այս լուրը տարածողները մեր կեսարացի ազգայիններն էին որոնք աժան գնով տուն վարձելու համար հնարած էին այդ լուրը: Եւ արդարև տուներուն գիւները հարիւրին վաթսուն իջան, շատ մը վաճառականներ իրենց առնելիքն ուղեցին գեղիս մէջ նստող վաճառականներէն, շատերը հեռացան գեղէն. իսկ մեր կեսարացի ազգայիններն իրենց նստած տեղէն չշարժեցան և ոչ աժան նստին ու գետնին դակն անցնին ըսելով:

Այս գեղին մէջ թէպէտ և երեք հարիւր յիսուն տուն հայ կայ, բայց բնիկ ազգային հա-

ղիւ քսան երեք ու երեք քառորդ մարդ կայ, մնացածն այլ և այլ թաղերէ դաղթած է:

Ժամանակաւ ամայի դաշտ մ'էր այս գեղը. իսկ երբ քանի մը եւրոպացիներ, որոնք որսորդութիւն ընելու մոլութիւնն ունէին, այս գեղն եկան զայն որսորդութեան յարմար գտնելուն համար, մեր ազգայիններէն ալ շատերը անոնց հետեւելով եկան բնակութիւն հաստատեցին հոն: Այսօր եթէ եւրոպացիներն հեռանան այդ գեղէն՝ մեր ազգայիններն ալ կը թողուն զայն: Ո՞վ կրնայ սնդեղ թէ մեր ազգայիններն եւրոպացիներու նմանիլ չեն ուզեր . . . :

Այս գեղին մէջ բաց ի հարաւէն կը տիրէ նաև ազնուապետութիւնն որ հարաւին չափ տենդ կը պատճառէ գեղին ազգային գործերուն և թերևս անկէ աւելի փաստակար է:

Ամեն անգամ որ թաղական խորհուրդ ընտրված է՝ անդամներու մէջ անհամաձայնութիւն գոյացած է: Թաղական խորհուրդն այնքան կարծիքներէ բաղկացած է որքան անդամներէ որ կազմուած է, և այս շատ փաստ տուած է ազգային վարժարանին յառաջադիմութեան: Թաղական խորհրդոյ իւրաքանչիւր անդամն իրեն հաճելի եղած գրութեամբ կուզէ առաջ տանիլ վարժարանը, մին ֆրանսական դրու-

Թիւնը կը պաշտպանէ , ուրիշ մը դերմանա-
կան դրութեան վրայ կը յարձակի , երրորդ մը
անգղիական դրութիւնը իբրև փրկարար միջոց
կը նկատէ , չորրորդ մը թրքական դրութեանէն
մաղիւ չափ չչեղիր , հինգերորդ մը աւստրիական
դրութիւնը կը փաստաբանէ և կարծիքներուն այս
անհամաձայնութեան մէջ վարժարանը կը գոցվի ,
և բացվելու համար կապասէ որ թաղական խոր-
հուրդն հաճի դրութիւն մը ընդունիլ : Թաղա-
կան խորհուրդն չկրնար համաձայնութիւն գո-
յացնել . բայց վարժարանը կը բացվի և կսկսի
կառավարվիլ , որ մը գերմանական դրութեամբ ,
որ մը ֆրանսական դրութեամբ , առաւօտ մը
թրքական դրութեամբ և երեկոյ մը անգղիա-
կան դրութեամբ . այսպէս թաղականի մէջ հա-
մաձայնութիւն կը գոյանայ և թաղեցին ուրախ
սրտով զիրար կը շնորհաւորէ ըսելով . « Ապրին
թաղական խորհրդոյ մեծապատիւ անդամներն
որ իրարու հետ համաձայնած են » : Սակայն այս
վարժարանին անկանոն ընթացքը մեծ օգուտ
բերաւ ազգին , ճնունդ տուաւ Պէրպէրեան վար-
ժարանին , այժմ իճատիէ , որ պատիւ կը բերէ
ազգին :

Գիւղիս բնակիչները շատ քաղաքավար են ,
իրարու սիրտ չկոտրելու համար սովենամեծ դո-

հողութիւններու յանձնառու կըլլան :

Անցեալները աղնուապետական դասէն մէկը
կացնում մը վարժարանին հիմը տեղէն կը հա-
նէր . ուրիշ մ'ալ քանի մը քայլ հետուէն կը դի-
տէր : Երբ այս վերջնոյն հարցվեցաւ թէ ինչո՞ւ
անտարբեր կեցած էր՝ հետևեալ պատասխանը
տուաւ .

— Մտերիմ բարեկամս է եղբայր , միտքս
դրի որ երթամ երկու խօսք ընեմ , բայց վեր-
ջէն մտածեցի որ մեր բարեկամութիւնը պիտի
վիրաւորվի , անոր համար թող տուի որ ուզա-
ծըն ընէ :

Մաս մը կայ հոս որ աղնուապետներու գոր-
ծիք ըլլալով այն ատեն միայն աղնուապետնե-
րու առջև ձայն կրնայ հանել երբ շո՛ւ մը եր-
դել հարկ ըլլայ :

Մէկ մասն բոլորովին անտարբեր ազգային
գործերու կամ ծովեզերեայ սրճարաններու մէջ
նարտ կը խաղայ և կամ նախէն կը քաշէ :

Ուրիշ աղնուապետական մաս մ'ալ կայ որ
միայն Ունիւով կամ Պեռնով կը ծառայէ ազգին :

Այս դեղին եկեղեցին , որու անունն է Ս.
Թաղաւոր և ուր Ս. Սատուածածնայ օրը մեծ տօ-
նախմբութիւն կըլլայ , ուխտատեղի մ'է և ուխ-
տաւորներէն շատ դրամ կընդունի : Այս թա-

դաւորն ալ ուրիշ թաղաւորներու պէս բաւական հատոյթ ունի, բայց զայն գործածելու կերպը չգիտեր եղևագէտ թաղականներ չունենալուն համար : Եթէ ուխտաւորներէն առնուած դրամներն լաւ մատակարարուէին՝ երջանիկ Ս. Թագաւոր մը կունենայինք՝ և իւր վարժարանն ալ միշտ բարեկարգ վիճակի մէջ կը յարատեւէր :

Այս գեղին մէջ ընդհանրապէս կամչնան աղ-գային զգացում կրելու, ինչպէս դու կամչնաս տունդ ջուր կրելու : Եթէ երբէք ստիպվին ասոնք օր մը աղգային զգացման պէտքը ճանաչելու՝ դարձեալ իրենք անձամբ չպիտի կրեն զայն այլ իրենց սպասաւորներուն պիտի տան զայն որ իրենց ետեէն բերեն :

Բայց այս գեղին մէջ կը գտնուին նաև այնպիսի անձեր որոնք աղգային զգացում կը կրեն :

Ասոնցմէ է Մուրատեան բարեհամբաւ գերդաստանն որ ծանօթ է իւր աղգասիրական գործերովս :

Մեծ. Մկրտիչ Էֆէնտի Մուրատեան՝ աղջիկներու վարժարան մը բացած է հոս 1868 էն ի վեր և ամիսը 6-700 դահեկան ծախք ընելով աղքատ աղջիկներ դաստիարակել կուտայ հոն : Զմեռուան եղանակին մէջ աղքատներու ձրի ա-

ծուխ կը բաշխէ, ինչպէս նաև աղքատներու ձրի բժիշկ կը զրկէ և ձրի դեղ կուտայ : Մուրատեան եղբայրներն իրենց մօրը թաղման համար եկեղեցւոյն եօթանասուն ոսկի և կտակի պաշտօնի համար ութսուն ոսկի, վարժարանի շինութեան համար հարիւր ոսկի նուէր ընելէն զատ երկու հարիւր յիսուն ոսկի դարձեալ նուիրած են վարժարանի շինութեան համար :

Նմանապէս հոս կը բնակին Մեծ. Սէրովբէ Կիւլպէնիեան, Աբիկ-Ունճեան և Շաչեան Պօղոս Էֆէնտիներն, Մփեւոյ Մանուկազոյ անդամներէն երեքն՝ որոնք իրենց միւս ընկերներուն հետ մինչև այսօր դիշեր ցերեկ աշխատելով ամեն աղգասէր սիրտերու մէջ անմուայ յիշատակ մը թողած են, թէպէտ և մեր Ազգայն Զօջէն հնգական օրինակ առած չեն : Ասանկ աշխատող աղգասէրներ ունենալնէս ետքը՝ սովն դեռ քառասուն տարի ալ տևէ՝ բնաւ փոյթ չենք ընել :

Թաղիս բնակիչներն ընդհանրապէս հարուստ են և ընդհանրապէս մէկ ձիթապտուղը, կրսեն, չորս պատառ կրնեն. անտեսագիտութիւնն մինչև այս աստիճան յառաջ գնացած է, բայց շատ հարուստներ այս ալ չուայլութիւն համարելով որոշած են սեղանին վրայ մէկ ձիթապտուղ միայն դնել :

Քանի մը հարուստներուն համար ալ արևը սողորականէն երեք ժամ վերջը կը ծագի . երբեմն ալ բնաւ չծագիր և այդ հարուստներն մինչև երեկոյ քնանալով՝ դիշերը կարթննան և կակսին իրենց բռնօրին :

Ուրիշ թաղերու հետ բաղդատմամբ օղիի և դինիի գործածութիւնը քիչ է հոս . ընդհանրապէս բնաւ կը գործածվի :

Իգական սեռն բնաւ տեղ բամբասանք կը գործածէ և առանց ջուրի : Իրարու ետեւէ դիրար գետինը կանցունեն , իսկ երբ դէմ առ դէմ գան՝ զիրար երկինք կը բարձրացունեն :

Եթէ գործ չունիս՝ եկուր սա պատուհանին առջև քիչ մը կայնինք ու մտիկ ընենք :

— Տիկին Քաթիկ , օրիորդ Աղաւնին տեսար երէկ :

— Բարով խերով չտեսնէի , աս որչափ ճերմակ քալած էր . . . գլուխն ալիւրի սլարկին մէջ է խօթեր կնչէ ըրեր :

— Անանկ ալ շրջազգեստ մը հագած էր որ չորս կողմը բաց էր :

— Թերևս ասոր պակասած է :

— Գոնէ ոտները պղտիկ ըլլային :

— Այսու ամենայնիւ սատանան շատ դեղնցիկ է :

— Գեղեցկութիւնն ալ ո՛ւր է ատոր . . . երեսը բնաւ տեսնել չեմ ուզեր , կռողք տեսնէ :

Ահա օրիորդ Աղաւնին դուռը կը զարնէ այն տան ուր այս խօսակցութիւնը կը լլայ :

— Բարի եկաք , օրիորդ Աղաւնի , աս ո՛ւր էք , հիմա տիկին Քաթիկին քեզի համար կը խօսէի և կըսէի թէ օրիորդ Աղաւնին մեզի բարորդին մուցաւ :

— Ես ձեզի կը մոռնամ , ամեն օր գալ կուզեմ բայց տան գործերը թող չեն տար (Բնաւ) Կռողք տանի երկուքնիդ ալ :

— Օրիորդ Աղաւնի , իրաւ որ ձեզի տեսնամ նէ՛ք ղոյրս տեսածի պէս կըլլամ (Բնաւ) Սատանան տեսնէ երեսդ (Բնաւ) Օրիորդ Աղաւնի , ամեն օր տեսնամ նէք ղեզի չեմ վշտանար :

— Ծնորհակալ եմ . (Բնաւ) խենդ ըլլալու էի որ խօսքերուն հաւատայի :

— Այդ շրջազգեստիդ ձեն ո՛ւսկից առիք Աղաւնի :

— Հաւնեցա՞ք :

— Ծառ հաւնեցայ , օրիորդ Աղաւնի , հասմ՝ ալ ես պիտի չինեմ անանկ :

— Հաւնը վերու բան մը չէ կարծեմ :

— Ի՛նչ կըսես , օրիորդ Աղաւնի , շատ ձեւաւոր էր : Օրիորդ Աղաւնի , խահվէ՞ կուզէք , ա-

նուշ կուղէք, պտուղ կուղէք, կերակուր կուղէք, գինի կուղէք, սիկարա կուղէք, կաղաչեմ, օրիորդ Աղաւնի, առանց քաշվելու զըրուցեցէք :

— Բան մ'ալ չեմ ուզեր, ձեր ողջութիւնը կուզեմ :

— Անուշ մը հրամանեցէք :

— Շատ լաւ կընդունիմ :

— Քեզի բան մը պիտի հարցնեմ, բայց չիտակ պիտի դրուցես, վասն զի շաբաթ մը կայ որ առնեննուս մէջ կուր պակաս չէ. տիկին Թէրէզային առջևի ակոյսները շինծու չեն մի :

— Ետեխններն ալ շինծու են :

— Ողջ բլլաս, ես կըսեմ նէ՛ ինծի չեն հաւատար . . . անուշ մ'ալ կը հրամանէք օրիորդ Աղաւնի :

— Չէ, չնորհակալ եմ :

— Բան մ'ալ պիտի հարցունեմ, բայց կը քաշվիմ կոր . . . :

— Մի քաշվիք :

— Տիկին Մարթային գիրութիւնը բնական է թէ բամպակ թխմած է :

— Տիկին Անթառամին ըսածին նայիս նէ բամպակ է, իսկ տիկին Շուշանին խօսքին հաւտանք նէ՛ բուրդ կը թխմէ եղեր :

— Շնորհակալ եմ, օրիորդ Աղաւնի, մեղի մեծ հոգէ մը աղատեցիր, չգիտես քանի մը օրէ ի վեր որչափ անհանդիստ էի . . . օրիորդ Աղաւնիին կերակուր բերէք :

Օրիորդ Աղաւնին հա՛ր Քուրճ կըսէ և կմեկնի միմուարով. « ասոնք ալ միշտ ուրիշները վարդարնելու խօսքեր կընեն : »

Իգական սեռին մէջ կայ ընտիր մաս մը որ երբեմն աղգային խնդիրներու վրայ կը խօսի. կայ մաս մ'ալ որ Աղգանուէր — Հայուհեաց ընկերութեան մէկ ճիւղը կը կազմէ այս գեղին մէջ և որ մեծ գործեր տեսնելու պատրաստուած է :

Նորաձևութիւնը տեսակ մը ախտ եղած է հոս. գեղեցիկ սեռը շատ անդամ դիտակով Մարտիկայի շոգենաւին կը նայի որ վերջին ձևն ամենէն առաջ իւր վրայ երևի :

Գեղիս զբօսավայրն է հոս պարտաւ ըսված տեղն որ ծովու վրայ կը նայի, բայց հոն գայողները ծովին չեն նայիր այլ գեղեցիկ սեռին, որ անշուշտ ծովէն աւելի զուարճութիւն կը պատճառէ :

Գեղիս բերքն է առաջին կարգի տենդ. աղքատները տենդին երբորդ տեսակէն կընան առնել, առաջին տեսակը հարուստներու համար պահուած է և շատ սուղ կը ծախվի :

Չարմանայի է սակայն որ բժիշկներն երբեմն
հիւանդներ կը դրկեն հոս օգտօրօտութեան հա-
մար :

Օգին վիճակը խեղճ է . Իւսկիւտարը թող
չտար որ հիւտիսք մտնէ հոն և բարեկարգու-
թիւն մտցունէ օգին մէջ :

ԲՈՒՄԷԼԻ ՀԻՍԱՐ

— Հրամմեցէ՛ք , ազն , պատուական ^{օրտու}
աժան պիտի տամ :

— Մի քաշեր , եղբայր , թո՛ղ տուր օձիքս :

— Պատուական ^{օրտու} , աղա , օղիի հետ ա-
ղէկ կերթայ :

— Թո՛ղ տուր , պէտք չունիմ :

— Ինձի նայէ դուն ազն եկուր քեզի ա-
ղուոր ^{էքու} տամ , անոնց մի նայիր դուն . . . :

Չուկ առնելու համար չեկայ հոս , եղբայր-
ներ :

— Աս դին եկուր , բարեկամ , անոնք խար-
դախ մարդեր են . . . օխա մը ձուկ ունիմ պա-
հած , քեզի տամ , օղիին վրայ շատ աղէկ կուտ-
վի , այս առտու բռնեցի , բարեկամի տրվելու
բան է . . . :

— Չեմ ուզեր :

— Եկուր քեզի օղի մը հրամցունեմ :

— Ծնորհակալ եմ , ես թաղը պարտելու հա-
մար եկայ և ոչ թէ օղի խմելու համար :

— Այս գեղին մէջ օղի կը խմուի բարեկամ ,

և առանց օղի խմելու պտրտին անկարելի է հոս :

— Սովորութիւն չունիմ :

— Գոնէ սա ձուկէն առ , աժան պիտի տամ :

— Ձեռ ուզեր :

— Ի՞նչ կուղէք մարդէն անպիտաններ, թող տուէք որ դործն երթայ , ինչո՞ւ օձիքին փակեր էք :

— Ձեր մարդասիրութենէն չնորհակալ եմ :

— Ասոնք անանկ մարդիկ են որ նաւամաւոյցին վրայ մէկը տեսնե՞նուն պէս չորս կողմէն կը պաշարեն :

— Այո :

— Եւ կուզեն որ բռնի ձուկ առնել տան քեզի :

— Ճիշդ է :

— Քանի անգամ ըսած եմ իրենց որ այս բնաւորութիւննին փոխեն :

— Շատ բարի մարդ էք :

— Մնաք բարով , թաղը քիչ մը պիտի պտըտիմ :

— Հազար անգամ պատուիրեցի իրենց որ դեզը եկողներն մի ձանձրացունէք , բայց որո՞ւ կըսես :

— Շնորհակալ եմ , մնաք բարով :

— Ասոնք անանկ մարդիկ են որ դըւխնուն դրածը կընեն :

— Շնորհակալ եմ :

— Գեղին վարժարանին համար քանի մը դուրուշ նուէր կուտա՞ք աղա , ծառադ իմ վրաս առած եմ դպրոցին տնօրէնութիւնն և կը կառավարեմ :

— Թաղեցին ի՞նչ կընէ :

— Թաղեցին ձուկ կը բռնէ :

— Գպրոցն եկամուտ ունի :

— Ոչ , դպրոցը եկամուտ չունի , և առանց եկամուտի ալ շատ աղէկ կառավարվելու վրայ է . . . փառք Աստուծոյ , մենք եկամուտի պէտք չունինք :

— Առանց դրամի ի՞նչպէս կը կառավարվի :

— Վարժապետներու ամսական չեմ տար :

— Լա՛ւ :

— Տեսեսի ալ ամսական չեմ տար :

— Շատ աղէկ :

— Թուղթի , գրիչի և մերմնի ալ ստակ չեմ տար :

— Կեցցես :

— Փայտի ածուխի համար ալ բան մը չեմ վճարեր :

— Սքանչելի՛ . . . դոնէ բոլոր վարժարանն

ներու անօրէնութիւնը դուն առնէիր վրայ :

— Հիմա , հարցուր ինձ թէ ի՞նչպէս կը կառավարես :

— Հարցուցի :

— Հարցուցի ըսելով չըլլար : հարցուր :

— Շատ աղէկ , ի՞նչպէս կը կառավարես :

— Ռոպէրթեան վարժարանի հայ ուսանողներէն մէկ քանին կուգան ձրիաբար դաս կուտան . էյ ըսէ :

— Էյ :

— Տնտեսի համար պէտք չունիմ , աշակերտներն իրենց ուտելիքն ու խմելիքն իրենք կը բերեն . էյ ըսէ :

— Էյ :

— Թուղթը գրիչը և մելանը ասդիէն անդիէն կը մուրամ . էյ ըսէ :

— Էյ :

— Փայտի , ածուխի պէտք չունիմ , վասն զի մեր աշակերտները մտելու սովորութիւն չունին : Ահա այսպէս կը կառավարեմ գպրոցը , բայց դարձեալ կը բամբասովիմ :

— Ի՞նչ ըսելով կը բամբասես :

— Կըսեն թէ՛ երբեմն քանի մը ընկերներուս հետ վերը այգին կեղնեմ օղի խմելու և դպրոցին աշակերտներուն խաղ կանչել կուտամ : Կը-

սեն թէ՛ ձկնորսներու օղի խմցունելով զանոնք շահած եմ և դեղին մէջ հասարակաց կարծիքը խղզած եմ : Անցեալները վարժուհիի մը խնդիր ծագեցաւ . ես կուզէի որ վարժուհին ելնէ , դեղին բոլոր ձկնորսներն ժողովքի եկան և միաբերան պօռացին շարժումն չե՛ր ուղեր : Քանի մը լուսաւորեալներ սկսան հարցնել թէ վարժուհին ինչո՞ւ չէք ուղեր , եթէ յանցանք ունի՛ ըսէք յանցանքն և ան ատեն մենք ալ ձեզի հետ կըլլանք և չենք ուղեր : Ձկնորսները որ բարի մարդիկ են նորէն պօռացին .

— Ձենք ուղեր :

— Ինչո՞ւ չէք ուղեր :

— Մենք ի՞նչ գիտնանք , Բառնիկ աղային հարցուցէք :

— Բայց վարժուհին յանցանք չունի :

— Յանցանք չունենալուն համար չենք ուղեր , ըսին և վէճը գոցվեցաւ . եթէ չգոցվէր՝ ձկնորսներն աղէկ մը պիտի ծեծէին այդ լուսաւորեալները :

— Վարժարանն հիմա ինչ վիճակի մէջ է :

— Աղէկ է , ես ուրիշ գործ չունիմ , առաւօտէ մինչև երեկոյ դպրոցի համար կաշխատիմ . ուզած ժամանակս ալ այգին հանդէս ըսելով լըրագիրներու մէջ ծանուցում կընեմ , հանդէս մը

կուտամ, քանի մը հարիւր դահեկան ալ անկէ կը վրցունեմ:

— Ի՞նչ բանի հանդէս է այն. Սահմանադրութեան տարեդարձի հանդէս է եկեղեցւոյն տօնախմբութեան հանդէս թէ վարժարանին . . . :

— Իրաւ որ կարեորութիւն տուած չեմ անուն մը դնելու համար, եկն տես որ հարցը նոզ վնասող ալ չկայ, բայց դալ տարի անուն մը պիտի դնեմ:

— Քանի տուն հայ կայ:

— Սմառը ութսուն տուն է, աշունը եօթմաստունը հինգ, ձմեռը վաթսուն և գարունը վաթսունը հինգ:

— Թաղեցիին արհեստն ի՞նչ է:

— Թաղեցիին մէկ մասը նաւաւար է և մէկ մասը ձկնորս: Ամենքն ալ մաքուր սիրտ կը կրեն և մաքուր օղի կը խմեն, բայց այնչափ առողջ են որ սովորական խօսակցութեան մը մէջ անգամ իրենց ձայնը թարապեայէն կը ըլլի: Հաստանդամ մարդիկ են, շատ կապրին. անուշ անուշ հայհոյել մը ունին:

— Ողջ ըլլան: Կիներն ի՞նչպէս կեանք կանցունեն:

— Ես չեմ կը շինեն, կը ծախեն և էրիկնին կը նային: Ուրիշ թաղերու մէջ՝ գործը կարգին գը-

նողն միայն կը կարգվի որ կարենայ իւր կինը ապրեցունել. հոս հակառակն է, ապրուստը ճարել չկրցողը կը կարգվի որ կինը ղինքը նայի: Հոս պճնասիրութիւն, բամբասանք, շոայլութիւն, թատրոններ, զբօսարաններ չկան. հոս կեանքն անմեղ է:

— Մեծապէս շնորհակալ եմ տուած տեղեկութիւններէդ:

— Օգը շատ քաջառողջ է, եթէ առջի իրիկունքն էրկու օխա օղի խմես՝ առտուն անանկ թեթև կարթնաս որ կը կարծես թէ առջի գիշերը բան մը խմած չես. շատերը հոս կուգան օղի խմելու:

— Շնորհակալ եմ:

— Եթէ վարժարանին համար նուէր մը ընես՝ ես ալ շնորհակալ կըլլամ:

— Եկուր սա ձուկը մի փախցուներ աղա:

— Սա սոսի առ ու օղիի Բրէ, տղաս:

— Սա Բեքուր չառնես:

— Պէտք չունիմ, ըսի և ինքզինքս նաւակի մը մէջ նեւեցի:

Ս Է Լ Ա Մ Ս Ը Զ

Ահա վիճաբանելու, հայհոյելու և իրարու գլուխ պատառելու յարմարութիւն ունեցող թող մը, որու մէջ մարդս եթէ վայրկեան մը մնայ՝ ինքզինքն ազգային երեսփոխանական ժողովոյ մէջ կը կարծէ և դուրս ելնելու ճար մը կը մտաածէ: Հարցո՞ւր աս թաղեցւոյն թէ ի՞նչ է այս անսպառ վիճաբանութիւններու պատճառն և վատահ եղիր որ հետևեալ պատասխանը պիտի առնես:

« Սահմանադրութեան գործադրութիւն: »

Այս թաղին մէջ մտնալուդ պէս գինետունէ մը հետևեալ խօսակցութիւնը պիտի բնս.

— Այս շաբաթ անսպատճառ փոխվելու է:

— Այո՛, ես ալ ձեր կարծիքէն եմ, վար առնելու է և տեղը ուրիշ մը դնելու է: Թաղական խորհուրդը ընտրվողը գործ տեսնելու է:

— Ասանկ թաղական խորհուրդութիւն չբլլար:

— Ներեցէ՛ք, բարեկամ, թաղական խորհուրդը դեռ երկու օր է որ պաշտօնի անցաւ . . . սպասեցէ՛ք նայինք ի՞նչ պիտի բնէ . . . :

— Բանի օր կուղէ թող ըլլայ՝ փոխանակադիր ընդունել տալու չենք որ օր համբենք:

— Եւ դեռ գործ մը չտեսաւ որ . . . :

— Տեսա՞ր խեղացի խօսքը . . . գործ մը տեսած չըլլալուն համար պէտք է որ խնայ, մենք թաղական խորհուրդը ընտրեցինք որ վարժարանները բարեկարգէ, թաղին գործերը կարգադրէ, մէկ երկու գանձապետներու քով մնայած դրամն ուղէ . . . :

— Երկու օրուան մէջ ի՞նչ կրնայ ըլլալ եղբայր . . . :

— Երկու օրուան մէջ ի՞նչ կրնայ ըլլալ: . . . երկու օրուան մէջ գանձապետին մէկը թաղականին ամբողջ ստակը պարպեց . . . շիշ մը օղի բեր ծօ, ինձի մի բարկացներ, Աստուածդ սիրես, քիչ մ'ալ մէկէ բեր:

— Ես ալ համակարծիք եմ բարեկամիս . . . շիշ մ'ալ ինձի դրկէ Յակօբիկ:

— Թաղին մէջ քանի խաղաղութիւն ըլլայ, վարժարանները շտկուին կըսենք նէ՛ միշտ բան մը կեցայ . . . ազգերնիս անոր համար ետ ետ կերթայի որ աս . . . օխա մը ճերմակ գինիէն զըրկէ ինձ վարպետ . . . սէր և միութիւն ըլլայ նէ՛ դէ՛շ կըլլայ . . . դինիի հետ քիչ մ'ալ ձուկ զրկէ . . . որո՞ւ պիտի հասկնես, ամեն մարդ

մէկ կողմ կը քաշէ, կենդանութիւն . . . Ինչ պատուական զինի . . . փոխենք եղբայր փոխենք սա թաղական խորհուրդը և տեղը մեր ծանօթներէն քանի մը հողի դնենք . . .

— Սա Տ . . . աղան դնենք, մօտերս շատ ինկած է խեղճը, տունը օխա մը ածուխ առնելու համար դրամ չունի. ան ալ մեր ազգն է, թող քանի մը ղրուշ ալ ան վաստկի :

— Սա շէշը լեցուր ծօ . . . չեմ ըսեր որ Տ . . . աղան չվաստկի, բայց մեր ալ վիճակն աղէկ չէ եղբայր . . . գործերը շատ դադրած են :

— Իմ կարծիքս ալ սա է որ սահմանադրութենէն գոնէ մեր ածուխին ու փայտին ստակը հանենք . . . բայց սահմանադրութիւնն ալ գործադրուելու է . . . սահմանադրութեան դէմ եղողն իմ առաջին թշնամիս է . . . մեզք է սահմանադրութեան, թէպէտ և Տ . . . աղային ալ մեզք է :

— Ելէք, աղգային դեղարանը երթանք և հոն ըւծենք խնդիրնիս :

— Շատ աղէկ :

Տեսարանն է աղգային դեղարանին մէջ .

— Բարև, էֆէնտի :

— Բարև :

— Բարի իրիկուն :

— Ատուծու բարին :

— Բարեկամներու հետ եկանք ձեզի ձանձրութիւն տալու :

— Ձեր տալիք ձանձրութենէն շնորհակալ եմ . . . ո՞վ է հիւանդ մէջերնիդ :

— Թաղական խորհուրդը հիւանդ է :

— Հասկցայ . . . բայց մարդիկը դեռ երկու օր է որ անցան պաշտօնի :

— Աղէկ ան, մինչև որ տասպալենք նէ՛ երկու շաբթուան կըլլան :

— Ի՛նչ յանցանք պիտի գտնենք, զայն տասպալելու համար :

— Եղբայր, նախ և առաջ տասպալելու վրայ խորհինք, վերջը յանցանք մը կը գտնենք հարկու . . . յանցանքներու սով չկայ, փառք Աստուծոյ :

— Իրտէք որ ես ղձեղ միշտ պաշտպանած եմ բայց այս խնդրոյն մէջ կէտ մը կայ որուն հակառակ եմ ես :

— Ի՛նչ կէտ :

— Թաղականը յանցանք չունի դեռ, սպասեցէք քանի մը օր որ սխալ քայլ մ'առնէ և ան ատեն իրաւունքով հրասարակ ելնենք :

— Պիտի համաձայնիս մեզի :

- Անկարելի է այս կէտին մէջ :
- Մեղմէ չպիտի բաժնուիս :
- Խղճիս կը դպչի :
- Ռոյ ու լաճեթեր մը կուտան ինձի դուն :
- Գլխուս վրայ :
- Ինձն ալ շիշ մը Պօրտոյի գինի տուէք :
- Շատ լաւ : Զհասկընաք թէ ես թաղակա-
նը չտապալելու կողմն եմ, ես ալ կուզեմ որ
տապալվի, բայց . . . :
- Երկար մի ըներ, թխա մը ձկան իւղ տուր
ինձի :
- Զեր ալ սիրտը կոտրել չեմ ուզեր . . .
կաշխատիմ այս գիշեր մէկ աղուոր պատուա-
կան և ընտիր յանցանք մը դանել և անով տա-
պալել թաղականը, բայց պայմանաւ մը . . .
- Այսինքն մէկու բան չըսենք :
- Ո՛չ . . . Սա պայմանաւ որ եթէ ասիկց
վերջը հիւանդանալով դեղ գներու ստիպվիք՝
իմ դեղարանս հրամմէք :
- Պարտքերնիս է եղբայր, այս գիշերուը-
նէ բոլոր բարեկամներուս կըսեմ որ վաղուընէ
անդին հիւընդնան և հոս գան դեղ առնեն .
հիւանդ չեղած ատեննին ալ թող գան առնեն,
էֆէնտիմ, ինչ կըլլայ եղեր . . . պարապ տեղը
հազարումէկ բանի ստակ կը տրվիկոր . . . :

- Շնորհակալ եմ :
- Մնաք բարով :
- Երթաք բարով :
- Հետևեալ օրը կուիւր կը ծագի թաղին մէջ,
թաղեցիներէն խումբ մը պատուաւոր աղբային-
ներ փայտերով զինված թաղ . խորհրդարանի
վրայ կը յարձակին և թաղականներուն մէկուն
ոտներէն, միւսին մօրուքէն, մէկակին ականջէն
քաշելով խորհրդարանէն դուրս կը հանեն : Պատ-
րիարքարանը եղելութիւնը կիմանայ և հրա-
հանգ մը կը զրկէ որ շատեւ յո ով կսկսի և եր-
հարար լաճեթ և ով կը վերջանայ :
- Ինչ որ կը պատմենք հոս՝ տարին հինգ վեց
անգամ՝ կը պատահի այս թաղին մէջ : Սահմա-
նադրութեան հաստատութենէն ի վեր չէ եղած
թաղական մը որ իր պաշտօնավարութեան ամ-
բողջ շրջանն լրացուցած ըլլայ : Առժամանակեայ
թաղական խորհուրդ մը մէկ քանի տարի պաշ-
տօն կը վարէ երբեմն : Եւ ոչ մի թաղական խոր-
հուրդ կանոնաւոր հաշիւ կրցած է տալ այս
թաղին մէջ, թաղեցին ալ թաղական խորհուրդ
ընտրելէն գլուխը քերելու ժամանակ չունի որ
հաշիւ պահանջէ և առնէ :
- Հինգ հարիւր քսան և հինգ տուն կայ հայ
հոս, վեց հարիւր երեսուն քուէարկու և երկու

հազարի մօտ բնակիչ . . . բայց երբ թաղականի համար քուէ տալ հարկ ըլլայ՝ քուէարկուներու թիւը վեց հազարը կանցնի . ալ հասկցիր թէ մէկ հոգի քանի քուէ կուտայ հոս . Սէլամըզցին շատ շուայլ է . . . քուէի մասին :

Երեք կուսակցութիւն կայ հոս , կեդրոնական , աջակողմեան և ձախակողմեան :

Կեդրոնականն է՝ թաղական տապալող , աջակողմեան է՝ վայրահաջ մասն որ քահանայներու գործիք է , իսկ ձախակողմեանն է՝ անտարբեր մասը որ միշտ խոհեմութիւն կը համարի լուին :

Թաղեցւոյն բարեպաշտութեանը գալով՝ կըրնաք շուտով հասկնալ զայն երբ ըսեմ ձեզ թէ կիրակի օրերը եկեղեցւոյ մէջ երկու հարիւրէ աւելի մարդ չըլլար , և ժողովրդեան մէջ շրջաբերութեան հանված գանձանակին մէջ ալ հազիւ եօթանասունը հինգ փարա կը գոյանայ : Այս եկեղեցին տասը քահանայ ունի . Աստուած ամենն ալ անխորձ պահեացէ և Սէլամըզցիին պարգեւեացէ : Եկեղեցւոյ խաչահանգստին ջուրը երկու տեսակ է . մէկն անարատ է իսկ միւսը նենգված : Անարատն գինը քիչ մը սուղ է իսկ միւսը ձրի է , ուղածիդ չափ կրնաս խմել : Առաջին տեսակէն ուզողն լուսարարին կը գէմէ

որ անմիջապէս կերթայ և պահած տեղէն կը բերէ . երկրորդ տեսակէն խմել ուզողը դուին եկեղեցւոյ ջրչեջին վրայ դրված դոյլին կերկընցնէ և ուղածին չափ կը խմէ . այդ ջուրն ախորժակ կը բանայ եղեր :

Հոս ալ թաղային վարժարանն ետ երթալու մասին կը մրցի միւս թաղային վարժարաններուն հետ , և շատերը կը յուսան թէ առաջին մրցանակն աս պիտի վաստկի :

Քանի մը տարիներ առաջ սովորութիւն կար հոս օրը երեք ընկերութիւն կազմել . . . տարուան մը մէջ երեք հազարի չափ ընկերութիւններ կազմվեցան . . . դպրոցներ բարեկարգելու ընկերութիւն , ընթերցասիրութիւն տարածելու ընկերութիւն , ծխախոտը ձգելու և ավիտն կըլնելու ընկերութիւն , ընկերութիւններ կազմելու ընկերութիւն , գիրք հրատարակելու ընկերութիւն , գիրք չկարդալու ընկերութիւն , որ մէկը համբմ՝ բայց ասոնց ամէնն ալ խոտի պէս անցան դնացին : Հիմայ հատ մը միայն կայ որու անունն է Կրթութեան ընկերութիւն . բայց գործը չը գիտենք տակաւին , և չգիտնալու իրաւունք ունինք , վասն զի դեռ նոր է , աղայ է և Աստուած գիտէ մեծնալիքը : Մեր փափաքն է որ գոնէ այդ ընկերութիւնն իւր նախորդներուն չմանի :

Իւսկիւտարցին ուր որ ալ ըլլայ շուտ կը ճանչցուի : Երբ կը տեսնես մարդ մը որ լեցուն ճերմակ տոպրակ մը ունի ձեռքը՝ գիտցիր որ այդ մարդը Իւսկիւտարցի է, և եթէ չէ՝ մտաւորս անպատճառ Իւսկիւտարցի պիտի ըլլայ : Իւսկիւտարցին իւր կեանքին մէջ բնաւ չըսեր իւր մէկ մտերիմ՝ բարեկամին կամ աղգակիանին . « Այս գիշեր մեր սունը հրամմէ , կերակորը մէկ տեղ ուտենք » :

Բայց իւր կեանքին ամեն օրերու մէջ ըսել չգաղբիր այն մարդուն՝ որուն երեսը կեանքին մէջ անգամ մը տեսած է .

« Դիշեր մը խնճոյք մը բրէ ու դիս ալ հրաւիրէ եղբայր , ինչ կըլլայ , մենք ալ օտարական չենք » :

Գինետունները հոս այնչափ համակրութիւն և քաջալերութիւն գտած են որ յանդգնած են եկեղեցւոյն քիթը մտնել , այնքան մօտեցած են անոր : Գինետուններուն յաճախորդները Արամեան զաւակներն են որ գիշերուան երեքին տուն կը գտնան , վասն զի , ինչպէս ըսինք աղգային վիճաբանութիւնները գինետան մէջ տեղի կուտնան և ան ալ ժամը երկուքէն վերջը : Ժամը երկուքէն առաջ վիճաբանութիւնն արգելված է , երկու ժամ շարունակ օդի կը խմլի և ետքը աւսնապիտան — դինեպանը — զանգակ հնչեցը-

նելով դիւանին պատրաստված և ատեանին բացված ըլլան կը յայտնէ :

Իւսկիւտարցիին նմանը չկայ առևտուրի մէջ . Պօլսոյ կողմը տասը բարայի ծախված Բօմբէք երկու դահեկանէն վար չեն տար Իւսկիւտար :

Սէլամըզցին լաւ հմտութիւն և կատարեալ տեղեկութիւն ունի ամուսին վրայ . ուստի երբ ձմեռուան համար ամուսի առնելու երթաք՝ Սէլամըզցի մը առէք ձեր հետը և թող տուէք որ ան ընէ ընտրութիւնը : Ամուսիք առիր , հա՛րաւդ ըսէ ու գործդ գնա :

Սէլամըզցի Ժողովուրդն ընդհանրապէս բարձր ձայնով կը խօսի կամ կը հայհոյէ , և աս ալ քաջութեան և անկեղծութեան նշան կը համարի :

Հնութիւններու մէջ նշանաւոր են Բէյ-Է-Է սրճարանն և անոր բազմոցները : Այս սրճարանի մէջ կը սորվի ամեն մարդ թէ ինչ է ամուսի , փայտի և միսի գիները , թէ որո՞ւ կնիկն էրիկը թողած ու փախած է , թէ էրիկն թողած ու ինչո՞ւ փախած է , թէ որո՞ւ աղջիկն ո՞ր երկտասարդի պիտի նշանվի և թէ ինչո՞ւ պիտի նշանվի : Հոս է նաև Էֆֆէն ըսված զբօսավայրն որ ամեն տեսակ զբօսանք ունի իւր մէջը . մուտքը ազատ է , եղևելու համար ալ դրամ վճար-

րելու հարկ չկայ : Հոս ալ երբեմն ազգ-ին խնդիրներու վրայ վիճաբանութիւններ տալի կունենան : Ազգային վիճաբանութիւնները տեղի չեն ունենար միայն այն տեղերն՝ ուր որ պէտք էին ըլլալ :

Իգական սեռն ալ արականին պէս վիճաբանութիւնը քիչ մը շատ կը սիրէ հոս : Քանի մը անգամներ խնամակալութիւններ կազմակերպան և լուծվեցան աղջիկներու վարժարանն բարեկարգելու համար , չյաջողեցան բարեկարգելու . . . ինքզինքնին նախ և առաջ :

Գեղեցիկ սեռն հոս գեղեցիկ է , աղքատասէր է , զբօսասէր է : Նորաձեւութեան դասերը Գատը գիւղէն կը սովորի :

Այս թաղին մէջ կան պակկայնետող , թուղթ բացող կիներ , որ ամեն բան կը բացատրեն քեզի , ամեն գաղտնիք կը գտնեն : Իգական սեռին մէջ շատ հաւատացողներ կան այս կիներուն , սակայն չմոռնանք ըսելու որ Սէլամըղի այրերուն մէկ քառորդն իգական սեռին մէջն կը հաշուրվի միշտ :

Հոս ամեն տուն Լէպէպէճէ Հօհօւէն մէյմէկ կտոր կը կանչեն , և եթէ օր մը ամբողջ Սէլամը սրբը պտըտելու ըլլաս Լէպէպիճի Հօհօւին ամբողջ օրերն մտիկ ըրած կըլլաս :

Ազգային երգերը մինչև այսօր չեն կարողացած այս տուներէն ներս մտնելու :

Սիրահարութեան համար հոս մինչև հիմա յատուկ տեղ մը պատրաստված չըլլալով թաղեցին շատ անգամ Իճատիէ կերթայ Խալֆային լեռը և հոն խօս-կապ , նշան-տուք կընէ : Կիները շատ անգամ հոն ձեռնոց կը նետեն իրենց անարգանք ընող կիներուն և մենամարտութեան կը հրաւիրեն զանոնք : Դեռ անցեալ օր երկու կին՝ իրարու բաւական հոյհոյութիւններ ուղղեցին և իրարու գլխարկ պատռեցին , և եթէ ոստիկանութիւնը չմիջամտէր՝ իրարու գըլուխ ալ պատռտելու հաւանականութիւն կար :

Դպրոցականներուն մեծագոյն մասը փողոցներու մէջ հայերէն չեն խօսիր , սակայն երբ հայհոյել հարկ ըլլայ՝ մայրենի լեզուն կը գործածեն և Սամաթիացիներու երկրորդը կրնան համարվիլ :

Սէլամըղցին այնքան սիրով է իրեն դրացի եէնիմահալլեցիի հետ որ անցեալներն երբ դըպրոցները միացնելու փորձ եղաւ՝ մազ մնաց որ երկու թաղն ալ զիրար կործանելու չափ յառաջ պիտի երթային : Սէլամըղցին իւր դրացւոյն հետ դժոխք անգամ երթալ չուզեր : Եէնիմահալլեցին ալ անոր հետ արքայութիւն ալ չեր-

Թար : Սէլամնըզցին հիմա այնչափ բաժնըված է Եէնիմահալլէցիէն որ ներքին համոզմամբ զայն ուրիշ ազգ մը կընդունի : Իրարու քահանայէ հաղորդութիւն չեն առներ , և ոչ ալ իրարու եկեղեցի կերթան . արդէն երկու թաղի քահանայներն ալ իրենց ծուխերուն հետ համընթաց կը քալեն :

Եթէ Եէնիմահալլէի վարժարանի մէջ աշակերտ մը կուիւ ընէ՝ իսկոյն զինքը կը յանդիմանեն ըսելով . « Կերևի որ Սէլամնըզի քահանայները կնքած են զքեզ » :

Իւսկիւտարի օդը խիստ է . տկարները անմիջազէս կառնէ կը տանի անդիւն աշխարհ :

Ներքին բերքն է հրաժարեալ պատրիարքոսի որ կուզան այս թաղին մէջ կը նստին տան մը մէջ որ ձրի կը տրվի . թէպէտ և շատ մը պատրիարքներ առանց վարձքի նստելու տուն մ'ունենալով հանդերձ չեն ուզեր իրենց հրաժարականը տալ :

Թ Օ Ր Գ Ա Բ Ո Ւ

— Կաղաչեմ , այս թաղին անունը մի տար , եղբայր :

— Ինչո՞ւ :

— Վասն զի այս թաղին անունը տխուր յիշատակներ կարթնցնէ մտքիս մէջ :

— Ի՞նչ պատահեցաւ :

— Երկու տարուան տղաս զոհ տուի այդ թաղին :

— Օդը այսչափ գէշ է :

— Ո՛չ :

— Շիտակ զրուցէ , եթէ գէշ է՝ մենք ալ չերթանք :

— Ո՛չ , բարեկամ , օդը պատուական է :

— Ի՞նչպէս եղաւ որ տղադ մեռաւ հոն :

— Կիրակի առաւօտ մը տղաս հետս առի ու եկեղեցին դնացի . ես ալ ուրիշներու պէս աղօթքիս զբաղած էի . . . մէյ մ'ալ ժամերգու թեան միջոցին անանկ ձայն մ'երաւ որ . . . անհմիսնչ և այսօր ականջէս չեխեր այդ ձայնը . . . անհ , եղբայր , անանկ ձայն մ'երաւ որ տղաս վախցաւ , մարեցաւ , ինկաւ :

— Տէր ողորմեա . . . որոտում էր :

— Ո՛ւր էր թէ որոտում ըլլար . . . անբա-
ցատրելի ձայն մ'էր :

— Թնդանօթ էր :

— Երանի թէ թնդանօթ ըլլար . . . անմեկ-
նելի բան մ'էր :

— Ի՞նչ էր ուրեմն :

— Տիրացուին ձայնն է եղեր . . . : Անմիջա-
պէս սղաս գիրկս առի ու բժիշկներու դիմե-
ցի . յոյս չկայ , լեղին բրդած է , ըսին , և զա-
ւակս մեռաւ :

— Այո՛ , պարոնին խօսածը սուտ չէ , իմ
կրնս ալ օր մը վախցաւ այդ ձայնաւորին ձայնէն
և երեք ամսու զաւակ մ'անցուց :

— Օր մ'ալ ես լեղապատառ դուրս փախայ
այդ եկեղեցիէն :

Այս տեղեկութիւնները կարդալէն ետքը բը-
նական է որ մեր ընթերցողներն դժկամակին
մտնել . Թօք դարուի եկեղեցին ուր թաղեցին
ալ մտնել շատ չսիրեր : Թաղեցիին եկեղեցի չեր-
թալուն պատճառն՝ եկեղեցւոյն զանգակ չունե-
նալն է կըսէր . իսկ երբ երկու տարի առաջ
Խրիմեան հոն քարոզ խօսելու գնաց և եկեղեց-
ւոյն մէջ մարդ չտեսաւ՝ թաղականներուն դառ-
նարով ըսաւ .

— Պարապ բան է որ ծախքեր կրնէք ասանկ
ժողովուրդին զանգակ շինել տալու համար . իմ
տեսածիս ու հասկցածիս նայելով սա պարիս-
պէն թնդանօթ ալ նետելու ըլլաք՝ աս տեղ
մարդ եկեղեցի չպիտի գայ :

Ձերմեռանդներուն դալով ասոնք կը պա-
տասխանեն թէ՛ իրենք կուզեն ամեն օր եկե-
ղեցի երթալ բայց կը վախնան որ ձայնաւորին
ձայնէն կը վախնան և կը հիւանդանան :

Մենք ալ ուրեմն եկեղեցւոյն դռնէն նայե-
լով շատանանք , վասն զի բժիշկի ստակ տալու
ժամանակ չէ :

Այս եկեղեցւոյն մէկ կողմն է թաղային վար-
ժարանն ուր , եթէ Աստուած կամենայ , ման-
չեր պիտի դաստիարակվին օր մը : Այս վարժա-
րանին դրան վրան տախտակ մը կար ժամանա-
կաւ , որու վրայ գրված էր Լեւոնեան վարժարան :
Հիմայ այդ տախտակը վերցված է և տեղն ու-
րիշ բան մը դրված չէ : Երկու հարիւրի մօտ ա-
շակերտներ կան սոյն վարժարանին մէջ որու
ուսման ընթացքը վեց տարուան բաժնված է
հետևեալ եղանակաւ .

Ա. տարի	Ուղղական	Բան
Բ. »	Սեռական	Բանի
Գ. »	Տրական	Բանի 'ի Բան

- Գ. » Հայցական զԲան
Ե. » Բացառական ՚ի Բանէ
Զ. » Գործիական Բանիւ

Աշակերտ մը վեցերորդ տարին շրջադաս-
ընէն պէս վարժարանէն կենէ և հայրը վաճա-
ռական մը կը փնտռէ որ տղան անոր քով գրագ-
րութեան տայ : Իսկ երբ հայրն չյաջողի զաւա-
կը վաճառականի մը քով գրագրութեան դը-
նել՝ կը սրբողի և կը զղջայ իւր տղուն այնչափ
ուսմունք սորվեցուցած ըլլալուն համար :

— Կարապետ աղա , զաւկիդ տեղ մը գտա՞ր :

— Զէ , ուսմունքն ալ պարապ բան է եղեր ,
եղբայր , տղաս տասնևվեց տարի կարգալ տուի
որ ուսումնական ըլլայ և վարժարանէն ելնե-
լուն պէս վաճառականի մը քով դնեմ որ մարդ
ըլլայ , ամեն բան դիտէ , կրակի պէս է , գրիչէն
արիւն կը կաթէ , բայց ինչ օգուտ :

— Վաճառական մը չգտա՞ր :

— Քանի մը վաճառականներու ներկայացու-
ցի զինքը , բայց այդ վաճառականներն ալ տը-
գէտ ըլլալով՝ տղուս յարգը չեն ճանչնար . միւս
տղաս պիտի հանեմ վարժարանէն և արհեստի
պիտի տամ :

— Շատ լաւ կրնէք :

Եկեղեցւոյն միւս կողմն է աղջիկներու վար-

ժարանն որու վրայ ալ ժամանակաւ Գահաբէկեան
Վարժարան գրված էր և վարժարանին մէջ քիչ
չատ ուսում կար . իսկ հիմա Գահաբէկեան Վարժարան
անունն և ուսմունքն վերցված են իբրև աւե-
լորդ բաներ և միայն վաթսուների չափ աղջիկներ
կերթան կուգան իրենց կերածը մարսելու և
քալել սորվելու համար : Վերջինը կրնայ օգտա-
կար ուսում մը համարվիլ , վասն զի շատ աղ-
ջիկներ քալելու կերպն ալ չեն գիտեր :

Թաղիս թաղականները գրեթէ բնաւ չեն
փոխվիր . մէկ կողմէ հրաժարական կուտան ,
միւս կողմէ հրահանգ կը զրկվի Պատրիարքարա-
նէն , հին թաղականները նորէն կընտրվին և ա-
ռօք վառօք պաշտօնի գլուխ կանցնին և կսկը-
սին գործել :

Վիճաբանութեան մէջ թաղականներու գոր-
ծածած պաշտօնական լեզուն հետևեալն է .

— Շունչանորդի , ես քեզի չըսի որ այդ գու-
մարը հաշուոյն չանցունես :

— Փատի կտոր , ինչո՞ւ պիտի չանցունեմ ե-
ղեր :

— Իրարու ինչո՞ւ անվայել խօսքեր կրնէք
իշու կտորներ , չէք ամչնար , մենք թաղական
պիտի ըլլանք , ամեն մարդ մեզմէ բարի օրինակ
պիտի առնէ . . . աւանակի պէս կը վարվիք ի-

ըարու հետ . . . արջու պէս կը խօսիք . . . :

— Հիմա հօրդ պառկած տեղէն կսխլամ հա . . . քեզի քնչ կըլլայ կոր . . . մենք իրարու հետ հաշիւի մը վրայօք մարդու պէս կը խօսինք կոր . . . :

— Սա աթոռն բռնելուս պէս գլուխդ կիջեցունեմ հա , իշու թու , իրարու հետ քաղաքավարութեամբ խօսեցէք ըսի , աւանակ , գոմէշ . . . դէշ ըսի :

Թաղականի մէջ մէկ հոգի կայ միայն որ Ս. Զատիկի կամ Ծնունդի օրերը առատ առատ շաւոյ կուտայ իւր քսակէն , մնացածներն ալ առատօրէն շաւոյ կուտային բայց թաղականի սընտուկէն կուտային ժամանակաւ . իսկ հիմայ , որ թաղին մէջ իմացված է սնտուկէն շաւոյ տըրվիլը , Ս. Զատիկի և Ծնունդի օրերը յիշեալ թաղականներն եկեղեցիէն կանուխ կեղնեն կերթան որ չստիպվին շաւոյ տալ իրենց քսակէն . . . :

Եթէ հարցվի թէ քնչ է թաղական խորհրդոյ տեսած գործը , կը պատասխանենք որ առոր գլխաւոր գործն է չորս կարուածներէ գոյացած եկամուտը հաւաքել և մէկ լուսարարին ու երկու ժամակոչին ամսական վճարել : Եթէ լուսարարին ու ժամակոչին հրահանգ տրվի որ իրենց ամսականներն երթան այդ կալուածները

վարձողներէն առնեն ամսէ ամիս՝ թաղականներուն գործ չմնար : Զմոռնանք ըսել սակայն որ թաղականն երկու ամիսէ ի վեր թաղին վարժարանին հոգաբարձութիւնն իւր վրայ առած է . . . Տէր Աստուած ընդունելի արասցէ . . . : Ենող հոգաբարձութիւնը , կըսեն , ողջ ըլլայ , վարժարանները բաւական կործանեց և հեռացաւ : Յիշեալ հոգաբարձութեան անդամները երկու տարի առաջ Ս. Ստեփաննոսի տօնախմբութեան օրը չորս տակաւ օղի և ութը տակաւ գինի բերել տալով վարժարանը , հոն սեղան շտկեցին և մինչև երեկոյ այնքան օղի և գինի խմեցին որ չկրցան քալել և տակաւի պէս գլտորվելով կրցան իրենց տունները մտնել : Վարժարանին աշակերտներն տեսան իրենց հոգաբարձուներն նոյն վիճակին մէջ և իրենք ալ գինետուն մը մտնելով մէյմէկ հատ անկեցին ի փառս սրբոյն Ստեփաննոսի նախավկային :

Եկեղեցին երեք քահանայ ունի որք խօսք կառնեն այն խնդիրներու մէջ որք հարսանիքի , կնունքի կամ ննջեցեալի հետ վերաբերութիւն ունին . ուրիշ խնդրոյ մը վրայ խօսք բացված ժամանակ կը քննանան :

Թաղեցին ալ շատ հոգ չտանիր իւր վարժարանին ու եկեղեցւոյն , միայն առ օղիին վրայ է

իւր խելքը : Թօք դաբուցին միշտ մինչև առա-
ւօտ կը նստի գինեատունը՝ իւր առջևն ունենա-
լով Ռեւի հետ քիչ մը եփած լուբիա կամ քիչ
մը պտուղ՝ եթէ ոստիկաններ չգան ժամը երե-
քին և գինեատան դուռը զարնելով դուրս չհա-
նէ զայն գինեատունէն : Իւր խօսակցութիւնը ե-
ղանակով է , կամ շրթն պիտի կանչէ կամ ծանի :
Ազգային գործերուն վրայ բան մի հարցունք
իրեն , վասն զի սովորութիւն չունի ատանկ բա-
ներու վրայ խօսելու : Իսկ եթէ Կլատտիքն , Պի-
քօնսֆիլա , Կրանվիլ անուններէն մին փախցու-
նես՝ անմիջապէս ապտակ մը կուտայ երեսօդը ը-
սելով թէ ֆրանսերէն լեզուով հայհոյած ևս ի-
րեն : Չայնաւոր վարժապետն այս գինեատունը
բերելու է որ ձայնը հանէ և հոն եղողները վախ-
ցունէ որ մէյ մ'ալ չերթան հոն :

Ուրիշ գինեատան մը մէջ խումբ մը կայ որ
թաղին ազնուական մասն է : Ասոնք իրարմէ մէյ-
մէկ կանգուն հեռաւորութեամբ աթոռակնե-
րու վրայ նստած են . իրենց առջևն ունին ե-
րեսուն փարանոց մէյմէկ շիշ Ռեւի : Բնաւ իրա-
րու հետ չեն խօսիր , կարծես սրդողած են ի-
րարու , իրենց երեսը կախած լռիկ մնչիկ իրենց
շիշը պարպելու և նորէն լեցնել տալու կը նա-
յին : Այնպիսի ձևով մը և պարկեշտութեամբ կը

խմեն որ կարծես թէ օղի խմելն պարտաւորիչ է
և մեծ պատիժի պիտի ենթարկվին եթէ կա-
թիլ մը օղի մնայ շիշերուն մէջ : Լուութիւնը կա-
նոնաւոր կերպով կը ախրէ հոն . . . մէկը աչքը
վեր առնելով իւր քովինն օղիի շիշին շընայիւր ,
հոն արտասանված խօսքերն են Բարի Երեկոյն . . .
Երբ . . . Բարի Բարի : Խօսելու վարժված երեսօտ-
խան մը կը ճաթի եթէ վայրկեան մը նստի ա-
սոնց մէջ :

Կիները բնական է որ բամբասանքը սիրեն
բայց իրենց աշխատասիրութիւնն վարքն ու բար-
քը մեծ գովեստի արժանի են : Ասոնք չատա-
խօսութիւն ընելու համար տունէ տուն պար-
տող ու փողոցները չափող կիներէն չեն , կաշ-
խատին և իրենց ձեռագործները ծախելով ստակ
կը վաստակին : Պճնասիրութիւն բնաւ չունին .
պարկեշտութեամբ կը հագվին՝ և մեծ հնազան-
դութիւն ու հաւատարմութիւն կը ցյունեն ի-
րենց ամուսիններուն : Շատ մը այրեր իրենց կի-
ներուն , հայրեր իրենց աղջիկներուն , մանչեր
իրենց մայրերուն բեռ եղած են և անոնց վաս-
տը կած դրամով կապրին . . . կեցցէ՛ արական
սեռին պատիւը . . . :

Թաղիս մէջ 400 տուն կայ Հայու , որուն իւ-
րաքանչիւրին մէջ գրեթէ երկու ընտանիք կայ :

Թօփ գարույի օղը շատ առողջ է, և եթէ
այսպէս շարունակէ՝ քահանայները այդ թաղէն
հրաժարիլ պիտի ստիպվին, վասն զի բնաւ նրն
ջեցեալ չըլլար եղեր :

ԿԷՏԻՔ ՓԱՇԱ

Այս թաղին ազգայիններն իրարու խօսք չեն
հասկնար, լեզուները խառնված են հոն. վասն
զի վերջին հրդեհէն ի վեր Պօլսոյ բոլոր թաղե-
րէն ինչպէս նաև գաւառացի ազգայիններէն
գաղթականութիւն հաստատուած է հոս :

Ինչպէս որ աշտարակը շինողներն իրարու
լեզուն չհասկնալնուն համար չկրցին աշտարա-
կին շինութիւնն աւարտել, այնպէս ալ ասոնք
գեռ չյաջողեցան իրենց վարժարանին շինու-
թիւնն աւարտել :

Եօթը կամ ութը ամիս է որ ձեռնարկած են
վարժարանի շինութեան առանց անոր ծախքը
նախապէս հողալու, ի սկզբան այնպէս կարծած
են ասոնք որ վարժարանի հիմը դրվելուն պէս
ուրիշ բան չմնար ընելու եթէ ոչ առաւօտ երե-
կոյ քիչ մը ջուր տալ շէնքին արմատին որ բոյ-
սի պէս աճի ու բարձրանայ : Ուստի հիմը
դրվելուն պէս թաղեցին ուրախացաւ որ վար-
ժարանի խնդիրն ալ լուծվեցաւ և սպասեց որ
ինքնիրմէ բարձրանայ : Իսկ երբ տեսաւ որ սը-
խալած է իւր կարծիքին մէջ՝ սկսաւ ասդին ան-

դին վաղել դրամ ճարելու համար : Շատ ծանր կերպով բարձրացաւ այս շէնքը , կէս կանգուն բարձրանալուն պէս՝ երկու ամիս դադար կառնէր և կապասէր որ թաղեցին դրամ ճարէ և նորէն սկսի բարձրանալ . եթէ մէկ կանգուն բարձրանար՝ չորս ամիս կապասէր : Հիմայ որ բաւական բարձրացած է՝ դարձեալ կապասէ որ պատուհաններու համար ապակի ճարեն ու բերեն : Այս ընթացքով յուսալի է որ մէկ երկու տարիէն յիշեալ վարժարանն աշակերտ պիտի կրնայ ընդունիլ :

Եկեղեցիէն քիչ մը վեր թաղային սրճարանին դէմ խրճիթ մը կայ ուր կը դաստիարակվին թաղին աշակերտները , որոնց թիւը քսանը հինգ կամ երեսուն է : Իպրոցին մէջ հետևեալ դասերը կաւանդվին :

Առաւօտէն մինչև կէս օր եկեղեցական երգերու վարժութիւն ,

Կէս օրէն վերջը Քերական , Սաղմոս , Նարեկ և քիչ մ'ալ սղակի վրայ դրավարժութիւն :

Այսու ամենայնիւ այս վարժապետը ննջեցեալի մը լուր առնելուն պէս դասերը կը թողու , ննջեցեալին կը դիմէ և ննջեցեալէն վերադառնալուն՝ աշակերտները ծեծելու կը ձեռնարկէ :

Ծեծի դասը շաբաթը երեք անգամ է և ան ալ երեկոցեան դէմ :

Ս. Յովհաննէս Աւետարանիւ անուամբ եկեղեցի մը կայ հոս որուն քարոզիչն ուրիշ մտմտուք չունի եթէ ոչ սա թէ ինչպէս կարելի է քանի մը ամիսէն եպիսկոպոսութեան բարձրանալ : Ամէն կիրակի քարոզ կը խօսի . ամէն քարոզին բնաբան կը դնէ Աւետարանէն մէկ պարբերութիւն մը և քարոզը կը վերջացունէ արևելեան խնդիրով :

Հոս ալ թաղական խորհուրդն ուրիշ թաղական խորհուրդներու պէս կարևորութիւն չտար վարժարանին , այլ կը նայի որ հարուստ ազգայիններէն մէկը մեռնի և անկէ երեք չորս հարիւր ոսկի փրցունելով անոր մարմինն եկեղեցւոյ մէջ թաղէ :

Անհաւատալի չէ որ երբեմն թաղականի անդամներէն մէկը իւր հարուստ բարեկամներէն մէկուն հետ խօսակցի այսպէս .

— Բարեկամ քեզի համար դեղեցիկ տեղ մը կայ :

— Ո՛ւր , Վոսփօ՞ր :

— Չէ , Կէտիկ փաշայի կողմը . . . ծովահայեաց դետին մը :

— Չեմ ուզեր :

— Սքանչելի տեղ : . . երէկ քանի մը բա-
րեկամներ կը խօսէինք՝ ամենքս ալ քեզի ար-
ժանի տեսանք այդ տեղը : Եթէ ես ստակ ու-
նենայի՝ ես կառնէի :

— Առնեմ ինչ ընեմ, եղբայր :

— Եթէ մեռնելու ըլլաս՝ իմաց տուր ինձի
որ այս տեղը քեզի տանք . . . :

— Մեռնելէս ետքը գետինն ինչ ընեմ :

— Թաղվելու համար, եղբայր :

— Հիմայ հասկցայ միտքդ, բայց ես դեռ
մեռնելու միտք չունիմ :

— Ես ալ չեմ ուզեր որ հիմա մեռնիս, Աստ-
ուած չընէ, սակարկութիւնը լնցունենք հիմայ,
դուն երբ որ ուզես՝ այն ատեն մեռիր, միայն
թէ ստակը կանխիկ տուր որ վարժարանսիս շի-
նենք լնցունենք :

Բարձր ձայն ունեցող ժամակոյնները մեծ
յարգ և պատիւ կը վայելէն թաղիս մէջ :

Հոս 300 տուն կայ հայու : Մեծ մասը կեսա-
բացի է. ժողովրդեան մէկ մասին գործը սեղա-
նաւորութիւն է, աննշան մաս մ'ալ արհեստա-
ւոր կը գտնուի :

Եթէ այս թաղին մէջ իժիր և գործունեայ
մէկը տեսնես՝ ան ալ գաւառացի հայն է, բնիկ
թաղեցին գործունէութենէ զուրկ է :

Թաղեցին նշանաւոր է իւր անտարբերու-
թեամբն՝ զոր ցոյց կուտայ ամեն խնդիրներու
մէջ : Հոս եթէ մէկու մը հագուստը կռնակէն
քաշես առնես՝ Եւս գետն կըսէ և թող կուտայ
որ հագուստը առնեն տանին :

Հոս հարուստ և փորը կուշտ մարդ չկայ
չատ, աղքատն ու արբեցողն չափէն աւելի է :

Եթէ հոս վարպետորդի մէկը գտնուի՝ ամ-
բողջ թաղն մատի վրայ կառնէ և ամիսներով
ու տարիներով կը խաղցունէ :

Թաղեցիներն այն աստիճան վախկոտ են որ
եթէ քիչ մը բարձր ձայն հանես՝ ամենքն ալ
կը դարհուրին և կը փախչին :

Այս տեղ ընկերական կեանք չկայ. իրենց
ամենէն գլխաւոր դրօսանքն է դրօսարանի մը
մէջ մտնել և ի՛նչ ի՛նչ խաղալ :

Իգական սեռն ոչ գործ ունի և ոչ արհեստ,
իր կեանքը քնանալով և կամ պատուհաննե-
րու առջև նստելով կանցունէ : Պարոններէն և
օրիորդներէն ոմանք գիշերները փողոցները կը
չըջին և անմեղ սիրահարութիւններով ժամա-
նակ կանցունեն :

Այս թաղին մէջ կը բնակի Փանոսեան, խըմ-
բագիր Մանուկի, բայց չգիտցուիր թէ թաղին
վարժարանին վրայ ինչու հող չտանիր : Հոս կը

բնակին նաև քանի մը բժիշկներ որոնցմէ մին անցեալները մինչև որ ստակը չառաւ՝ տունէն դուրս չելաւ աղքատ հիւանդի մը երթալու համար : Հարուստներն ալ պարտաւոր են հոս նախ բժիշկին այցելութեան դինը զրկել և ապա աղաչել բժիշկն որ բարեհաճի գալ և իրենց հիւանդն . . . մեռցունել : Այն ատեն բժիշկը վազելով կերթայ :

Հոս է Վարդովեանի թատրոնը որ ձմեռուան եղանակին մէջ ներկայացումներ տալով ժողովուրդը կը կրթէ : Քանի մը ատենէ ի վեր հայերէն ներկայացումներն արգիլված ըլլալով Բ. Դրան կողմէ՝ միայն տաճկերէն լեզուով ներկայացումներ կը տրվին : Թաղեցին ալ վախէն հայերէն չխօսիր որ Բ. Դունէն դիտողութիւն մը չըլլով իրեն :

Այս թատրոնէն օգուտ քաղելով քանի մը խաբեբայներ չորս կանգուն երկայնութեամբ և մէկ ու կէս կանգուն լայնութեամբ յայտարարութիւններ կը հրատարակեն՝ փառասոր ներկայացում, ստանկի ներկայացում, իհաս չեղ ներկայացում, որոտոյ կարէի ներկայացում, ներոյ կարէի ներկայացում ևն. ըսելով խեղճ ժողովրդեան քթէն կը բռնեն և անճուռնի ներկայացումներ տալով ժողովրդեան քսակը կը պարպեն : Հոս թատրոնի դուստպանն

հեղինակ կըլլայ և ողբերգութիւն մը կը գրէ եթէ առաւօտ մը քսակին մէջ ստակ չգտնէ : Թատրոնի տեսարանին վրայ փառաւոր ներկայացումներ տրված են շնորհիւ Վարդովեանի անդուլ աշխատութեանը, բայց տեսարանէն դուրս օթեակներու մէջ ալ ներկայացումները պակաս չեն եղած : Քիչեր են որ թատրոն կերթան ներկայացված խաղը տեսնելու համար, շատերը օթեակներու մէջ կը նային իրենց փրնտըռած անձերը գտնելու համար :

Երբ վարագոյրը բացվի՝ հանդիսականները ուժգին ծափահարութեամբ կողջունեն դերասաններն և իրենց երեսը կը դարձունեն դէպ ի օթեակները . շատ անգամ ծափահարութիւն մը կը լավի այնպիսի վայրկենի մը մէջ ուր բնաւ հարկ չկայ ծափ զարնելու : Հանդիսականներէն ոմանք կըսեն .

— Ի՞նչ անպիտան մարդեր կան, հիմա ծափահարութիւն ընելու ի՞նչ կայ :

Եւ չեն գիտեր խեղճերն որ ծափահարութիւն ընողն խաղին համար չքրաւ այլ իւր սիրուհիէն ժպիտ մը կամ նշան մը առած ըլլալուն համար ծափ զարկաւ :

Ընդհանրապէս ուրիշ թաղերէն աղգայիններ կուգան թատրոն : Կէտիկ բաշացին շուայ-

լուծիւն կը համարի տարին անգամ մը թատրոն երթալը : Եւ արդէն հոս բնակողներուն մեծ մասը ոսկւոյ միայն երկրպագութիւն կընեն և ոչ ուրիշ բանի : Կան քանի մը հոգիներ որ տարին անգամ մը կընան թատրոնէն ներս մտնել՝ ան ալ եթէ յաջողին չքշված պակաս ոսկիները թատրոնի տոմսավաճառին կլլեցունել : Եթէ տոմսակավաճառն դիտողութիւն ընելով յայտնէ ոսկւոյ պակաս ըլլալն՝ սա պատասխանը կառնէ .

— Եթէ մեր ոսկին պակաս է՝ ձեր տալիք խաղն ալ ըման չէ ս :

Ուրիշներն ալ տնտեսագիտութեան համար իրենց ընտանիքները կառնեն և փողոցի մէջ թատերաբեմին ետեւի կողմը կը կայնին որ անկից լսեն ներկայացումն . մէկ մասն ալ տոմսակավաճառի և կամ ուրիշ պաշտօնեայի մը հետ խօսքը մէկ ընելով՝ ձրի կը մտնէ թատրոնէն , և վարդօվեան կը կարծէ թէ այս անկարգութիւններուն առաջքն առնելով դրամ պիտի վաստկի :

Կէտիկ բաշայի դիրքը բարձր է և օդն ալ դէշ չէ . միայն թէ մարդս իւր տունէն մինչև որ շուկայ երթայ՝ հազար ու մէկ գոյն փոշիներու մէջ լողայ , եթէ լողալ չգիտնայ՝ խղդվի :

ԻՒՍԿԻՒՏԱՐ ԵՒՆԻ ՄԱՀԱԼԷ

Լսած էք անշուշտ որ ախտ մը կայ որու անունն է Ինչի Գ' Կուրե , բայց չէիք իմացած հարկաւ որ այդ ախտն այս թաղին մէջ ծնունդ առած է :

Հիմայ հասկցաք ալ որ այս թաղին մատ դպցունելու չէ , եթէ չէք ուզեր աւելի ևս վատթարացունել զայն :

Մեր ուշադրութենէ վրիպելու չէ որ եթէ այս թաղին աղաներուն դպչելու չըլլաք՝ թաղին բոլոր իրաւունքներն օտարի կը ծախեն , իսկ եթէ գպչելու ըլլաք՝ ազգին իրաւունքներն օտարի կուտան , ահա դպչելու և չդպչելու տարբերութիւնն :

Փոքրիկ պատմութիւն մը ընենք հոս .

Բաւական տարիներ առաջ տեղւոյն յոյները՝ գերեզմանատուն չունենալով հոն , կը փախաքին աժան գնով ծախու առնել գետին մը ուր թաղել կուզէին իրենց ննջեցեալները :

Թաղին քանի մը հայ աղաները յոյներու այս դիտաւորութիւնն լսելով՝ անոնց հետ բանակցութեան կը մտնեն .

— Իմացանք որ թաղիս մէջ տեղ մը կը փընտրուէք եղեր ձեր ննջեցեալները թաղելու համար :

— Այո՛ , անանկ միտք մը ունինք :

— Այս մասին մեր ձեռքէն եկած ծառայութիւնը չենք զլանար ձեզի , երկու եկեղեցիներն արդէն քոյր եղբայր են , իրարու շատ կը նմանին , երկուորեակ են կարծես . . .

— Շնորհակալ ենք :

— Քոյրն եղբօրը վրայ կը խենդենայ :

— Ողջ ըլլայ :

— Ըսէք մեզի հիմայ . դուք ո՞ր կողմ կուղէք գետին ունենալ :

— Մենք կուզենք որ ձեր գերեզմանատանը կէսը մերն ըլլայ :

— Ադ ըլլալու բան չէ , ասոր խօսքը մի ընէք . . .

— Ինչո՞ւ , քոյրն իւր եղբօրն այս ծառայութիւնը չ'կրնար ընել :

— Անկարելի է :

— Ինչո՞ւ անկարելի ըլլայ , ասկէ գիւրին ինչ կրնայ ըլլալ . . .

— Մեր գերեզմանատունն ինչպէս ձերինը կրնայ ըլլալ . . .

— Դիչերուան մը մէջ մեր Պալքըլէ գե-

րեզմանատունէն գերեզմանաքարեր բերել կուտանք , կը դնենք և հետեւեալ օրը կըսէք թէ յոյները մաս ունին եղեր մեր գերեզմանատան մէջ :

— Ատանկ բան մը կարող ենք ընել :

— Կարող էք հապա , դուք թաղին երեւիներն էք , մեծերն էք , դուք ամբողջ թաղն ալ կրնաք ծախել :

— Հապա մեր խիղճը . . .

— Խիղճն ասանկ գործերու մէջ մտնելու իրաւունք չունի , խղճին ապտակ մը կը զարնէք դուրս կը փնտտէք . . . կամ թէ ձեր խղճին քանի մը ոսկի կուտաք . . .

— Իրաւունք ունիք , խղճի դպչելու բան մը չկայ հոս , մեր ըրածը գողութիւն չէ , սպանութիւն չէ , եղբայրն իւր քոյրէն գետին կուղէ և քոյրն ալ կուտայ , ասոր ո՞վ կրնայ բան մը ըսել . . . :

— Խղճի վերաբերեալ խնդիր չէ աս . . . փառք Աստուծոյ , ձեր ըրածը գողութիւն չէ , ազգին մէկ կալուածէն մեզի ալ բաժին պիտի հանէք : Աւետարանը կըսէ . երկու շապիկ ունեցողն մէկն ընկերին տալու է , և որովհետեւ դուք հոս մէկ գերեզմանատուն ունիք պէտք է որ կէսը մեզի տաք . . . Աստուածահաճոյ գործ մ'է աս :

— Մեզի ալ այնպէս կը թուի . . .

— Ձեր այս աստուածահաճոյ գործին համար վարձատրութիւն ալ պիտի ընդունիր . . .

— Ձէ, չէ, մենք կաշառքով գործ չենք տեսներ :

— Կաշառք . . . Աստուած չընէ :

— Ձենք ուզեր որ ըսեն թէ աղաները ստակ կերած են ու ազգին տեղն ուրիշի ծախած են :

— Մենք ալ չենք ուզեր :

— Ինչո՞ւ բամբասովինք :

— Ինչո՞ւ բամբասովիք . . . Ես վարձատրութիւն բառը գործածելով հասկցնել ուզեցի թէ Աստուծոյ կողմէ պիտի վարձատրվիք . . .

— Ասոր ըսելիք չունինք, բայց կաշառք չենք ընդունիր, ուրիշ բան է եթէ դուք մեր տեսած գործէն դո՛հ քլաք և ձեր շնորհակալութիւնն յայտնելու համար մեզի դրամական նուէր մը ընէք . . . նայէ, ասոր ըսելիք չունինք, իբրև նուէր կընդունինք, բայց իբրև կաշառք, բնաւ երբէք, աս մեր պատուոյն կը դպչի :

— Շատ լաւ . մնաք բարով :

— Երթաք բարով :

— Քանի մ'օրէն կը տեսնովինք :

Քանի մ'օրէն ետքը յունական տապանաքա-

րեր կը տեսնովին մեր գերեզմանատան մէջ . Ժողովուրդն իրար կանցնի :

— Իմացա՞ր Պ. Կարապետ :

— Չիմացայ, ի՞նչ կայ :

— Մեր գերեզմանատան մէջ յունաց քարեր կան :

— Անկարելի է :

— Ես տեսայ :

— Թերևս մեր քարերը յունարէնի թարգմանած են :

Ժողովուրդն աղաներու կը դիմէ :

— Աղաներ, ինչո՞ւ նստած էք :

— Ի՞նչ ընենք հապա :

— Գերեզմանատունը երթալու վրայ է :

— Ո՞ւր :

— Չգիտենք ուր . . . յունաց քարեր կան :

— Օրհնեալ ժողովուրդ, ասաջուց չկային այդ քարերը :

— Չկային :

— Մեր գիտցածին նայելով՝ այդ քարերը շատուց ի վեր կային հոն, և յոյներն իրաւունք ունին այդ գետնի վրայ :

Ժողովուրդը կը յուզուի . գերեզմանատան մէջ կռիւր կսկսի, յիսունէն աւելի հայ երիտասարդներ կը բանտարկվին և ազգը մեծ դժուար-

րութեամբ կարող կըլլայ առնելու գերեզմանա-
տան կէսը յոյներէն որք ամբողջ գերեզմանա-
տունը կընել կուգէին: Հոս կը վերջանայ այն
փոքրիկ պատմութիւնն որ այն ատեն մեծ յու-
զում պատճառած է ժողովրդեան մէջ:

Թաղականութիւնը հոս մենաշնորհ մ'է քա-
նի մը անձերու որք քսան փարիէ ի վեր իրենք
զիրենք կընտրեն, ամեն տարի հրաժարական
կուտան, նորէն կընտրվին, դարձեալ կը հրա-
ժարին, վերստին կընտրվին: Ասոնց քաղաքա-
կանութիւնը միապետական է. խեղճ Սահմա-
նադրութիւնը ինքզինք կը պատռուէ և դարձ-
եալ չէ կարող իւր ձայնը լսելի ընել: Թաղա-
կան խորհուրդն ուղածին պէս կը կառավարէ
վարժարանն որ այժմ անդըրհեղեղեան կարգի
դպրոց մը կընայ համարվի: Ճեմարանն այն աս-
տիճան հինցած է որ ամենաթեթև հոլմը փը-
ղած ժամանակ երկրպագութիւն կընէ: Եկեղե-
ցին բաւական հարուստ ըլլալով՝ կարող էր իւր
թաղին վարժարանին ծախքերը հողալ՝ եթէ
Աստուած կամենար. . . : Թաղեցին այս մասին
բողբոլին անհող է, ինչ որ չէր, թաղա-
կան խորհուրդն հարկաւ իրաւունք ունի որ,
կըսէ, այսպէս կը վարուի: Ազնուապետական
մասը թաղական խորհրդոյ համամիտ է ամեն

խնդիրներու մէջ, և այս մասն պատարագի ժա-
մանակ երկու անդամ, առիւտըն և օրնեալ եղբարս
ին, թաղական խորհրդարանը կերթայ, սիկար
քաշելու և խահվէ խմելու, եթէ երբեմն այս մա-
սէն մին մոռնայ թաղական խորհրդարանն եր-
թալու և խահուէ խմելու՝ թաղականէն ժամա-
կոյ մը կը շրկվի եկեղեցին և իմաց կը տրվի այդ
աղային որ խահվէն պաղած է, հրաման թող
խմէ:

Եկեղեցւոյն մէջ առաջին փնտովելիք բանն
է իրենց համար փառաւոր ձայնաւորներ ունե-
նալ. ասոնք կուզեն որ իրենց ձայնաւորին ձայ-
նը Գատը գեղէն ալ լսվի որ այդ գեղէն ալ ժո-
ղովուրդ գայ իրենց եկեղեցւոյն:

Եէնի մահալէն երկուքի բաժնված է. վերին
Եէնի մահալէ և ստորին Եէնի մահալէ և Եէնի
մահալէ — նոր թաղ — կոչվելուն բուն պատճա-
ռըն ալ թաղին հին ըլլալն է:

Վերին Եէնի մահալէն բողբոլին ազնուապե-
տական է, ամեն մարդու հետ տեսնվելու չղի-
ջանիւր, Ռեիմպոսի աստուածներուն հետ միայն
տեսնվելու արժանի կը համարին զիրենք: Այս
մասն, ինչպէս ըսինք, իւր կարծիքը թաղական
աղաներուն տուած է և բնաւ բանի մը չխառ-
նըվիր. միայն կը խառնվի այն խնդիրներուն ու-

րոնք աղէկ միտի, կարագի, բանջարեղէնի, գինիի, օղիի և վերջապէս մարմինը ուռեցնելու արհեստին հետ կապակցութիւն ունին :

Ահաւաստիկ վերի թաղին բնակիչներէն մէկուն խօսակցութիւնն Սէլամըզցիի մը հետ .

— Էֆէնտի, այսօր աղգային ժողով գացիր :

— Երթալու միտք չունէի, բայց այդ կողմէն միս առնելու ստիպուած ըլլալով քիչ մը ներս նայեցայ :

— Ի՞նչ կար :

— Շունչանորդիները պատուական միս կը կտրեն կոր . . .

— Սղգային ժողովին համար ըսի . . .

— Վեց ու կէս օխա առի, բայց ասանկ ընտիր միս . . .

— Երեսփոխանները ամբողջ եկած էին :

— Բաշ Իճանէ գինիով ինչ աղուօր կերթայ, գիտե՞ս :

— Եղբայր աղգային ժողովոյ մէջ ի՞նչ խօսեցան. այսօր :

— Ինչ գիտնամ եղբայր . . . փորձած էք, ոչխարի միսէն պէ՛տէ՛ կը շինվի մի :

— Իմ խօսքիս պատասխանէ :

— Ի՞նչ պատասխանեմ, ես գիտեմ ինչ խօսեցան, երեսփոխանին մէկը դուրս ելած մէ-

կուն կը պուար ըսելով թէ՛ ես քեզի պէս աղգին ստակները կերած չեմ և քեզմէ աղէկ օրէնք գիտեմ . . . աղէկ օրէնք գիտնալն ստակ չըներ, Գաբա՛ն անանկ մէկ կը կլլեցունեն որ . . . այսօր ինչո՞ւ համար Իճա՛ն չկար :

— Մնաք բարով :

— Երթաք բարով, գիշերը եկուր նարտ խաղանք :

— Տեղս հեռու է, մնաք բարով :

Վերի թաղին իգական սեռը գեղեցիկ է բայց արական սեռն այդ գեղեցիկութենէ զըրկված է : Իգական սեռին մէջ բամբասանքն այն աստիճան յառաջ գնացած է որ եթէ ուրիշ մը բամբաստելու համար նստին՝ շաբաթէ մը հաղիւ կրնան լմնցունել : Հոս կիներն պատուհաններու առջև կը նստին և փողոցէն անցնողին հասակին, քթին, մօրուքին, հագուստին վրայ դիտողութիւններ կընեն : Կիները հոս երկու գլխարկով եկեղեցի կերթան թէպէտև մէկ գլուխ ունին : Գլխարկին մէկն իրենց գլուխը կը դնեն և միւսն սպասաւորն կը տանի իրենց ետևէն : Եկեղեցւոյ մէջ գլխարկը կը փոխվի : Կիներուն գլուխներն այնքան փոքր են որ հիմակուան գլխարկներէն հատ մը բաւական էր չորս կնկան գլուխ գոցել եթէ սովորութիւն ըլլար չորս հինգ հոգիի մէկ

գլխարկ դնելը : Նորածնութիւնն հոռ կը պաշտարվի . Եէնի մահալէցուհին Սէլամնրզ կերթայ և անկէ հագուստի նոր ձեւեր կը գողնայ :

Վարի թաղն հասարակապետական է : Երիտասարդութեան մէջ երբեմն չարժուժ կը տեսնըվի բայց այդ չարժուժն միշտ ապարդիւն կը մնայ , վասն զի միապետութիւնն թող չտար որ երիտասարդութիւնը գործէ :

Այս թաղին մէջ ալ ընկերութիւններ հաստատուած և կործանված են . թէպէտև այժմ չգիտենք թէ ընկերութեան մասին ինչ վիճակի մէջ է , սակայն դիւրին է գուշակել որ կամ ընկերութիւն մը կազմվելու վրայ է կամ ընկերութիւն մը կործանվելու վրայ :

Երիտասարդութեան մէջ մաս մ'ալ կայ որ ինքզինք ձայնաւորութեան տուած է և ազուոր խաղեր երգելով պօռալ կը փափաքի . այս մասին կարծիքն այն է թէ՛ դեղեցիկ ձայնով խաղ կանչելն մեծապէս կը նպաստէ ազգային յառաջադիմութեան և թէ՛ եթէ քիչ մ'ալ օղի կամ գինի խմելով խաղեր կանչվին՝ ազգին վերականգման գործը դիւրացած կը համարվի :

Թաղեցւոյն ընդհանուր լեզուն տաճկերէն է , իսկ աղքատներունը հայերէնով խառն տաճկերէն :

Գինետուն յաճախողները մեծ մասամբ աղքատ են և մոլի , իրենց սովորութիւնն է ժամը չորսին տուն դառնալ : Հարուստները չեն երթար գինետուն և չերթալու ալ պատճառ ունին , վասն զի գինետուններն իրենց տուներուն մէջ փոխադրած են : Այս թաղին թէ հարուստն և թէ աղքատն ընդհանրապէս ուտելու , խմելու , պառկելու և ընանալու համար միայն աշխարհ եկած կը կարծէ զինքը :

Հոս կը բնակի Պ. Խաչատուր Մխաբեան ուրուն գործերուն հրատարակութեանը կոպտակ գեռ ազգն :

Հոս կը բնակէր Փունջ լրագրի խմբագիր Պ. Համբարձում Սլաճաճեան որ իւր թերթը շաբաթն երկու անգամ հրատարակել բաւ կը համարի ազգին ծառայելու համար :

Այս թաղն նոյնն է այսօր ինչ որ էր հարիւր տարի առաջ , և եթէ երիտասարդութիւնն թաղին գործերուն ձեռք չերկնցնէ՝ երկու դար ալ այսպէս կերթայ : Ուստի Սէլամնրզցիին կլինայ որ շաբաթը մէկ անգամ հսկումընէ իւր դըրացւոյն համար :

Շատերը կը պնդեն թէ եթէ Եէնի մահալէցիք քանի մը շաբաթ ուրիշ դեղ մը փոխադրըվին օգտափոխութեան համար՝ թաղին օղը կը

փոխյի և թաղեցին ալ իւր կարծիքներուն մէջ
փոփոխութիւն զգալով քիչ մը կարթննայ քու-
նէն :

Տեղւոյս քարոզին է Մատթէոս եպիսկոպոս
Իզմիրլեան որ եպիսկոպոսանալու համար Ղաւթնոյ
օճախը գործիք եղած է ժամանակաւ , և իւր
ձեռներէն բռնելով քաղեցնող Հայրիկն տապա-
լելու աշխատած է դիշեր ցերէկ . . . թերևս օր
մը արդարանար այս մարդն եթէ աշխատակից
չլինէր այնպիսի խմբակի մը որ իրեն անձնական
շահուն համար կը գործէ միայն : Արդեօք Պատ-
րիարք ըլլալու համար զով պիտի մտանէ այս
կրօնաւորը . . . :

Բ Է Ր Ա

Բէրայի սահմանն է արեւելքէն խաղամուլու
թիւն , արեւմուտքէն պճնասիրութիւն , հարա-
ւէն շուայլութիւն և հիւսիսէն խարդախութիւն :

Ալ ասանկ սահմանակիցներ ունենալէդ ետ-
քը հանդարտ սրտով կեանք անցնը :

Այս թաղը Պօլսոյ Բարիզն է եթէ Բարիզն
իրեն նուաստութիւն չհամարիր իւր ամուսնն Բե-
րայի վրայ տեանելը :

Անուանի են հասարակաց պարտէզներն որք
դրախտ ալ կը կոչվին և ուր կը գտնվի ծառ քե-
րասեան բարոյ և շարի . բարոյ ծառը դեռ պտուղ-
ներով բեռնաւորված է իսկ շարի ծառն վրայ ոչ
թէ պտուղ այլ տերև անգամ չես կարող գրա-
նել :

Փողոցները բաւական լայն են , միայն թէ ա-
ռաւօտներն այդ փողոցներէ անցնելու չդար ,
վասն զի ամեն առաւօտ կաւրովին և փոշեղէն
մառախուղ մը չորս կողմը կը պատէ :

Ունի գեղեցիկ խօսարաններ որոնց մէջ եր-
գեցիկ աղջիկներ մինչև առաւօտ եղանակով կը
խօսին այլ և այլ նիւթերու վրայ : Ունի նաև

համալսարաններ որոնց մէջ աղէկ թուղթ խաղալու, վարպետութեամբ դիմացինդ կողոպտելու գիտութիւնը կաւանդվի դիւրուսոյց եղանակով:

Տուներուն գրեթէ երէք մասը քարուկիր է: Այս տուները շատ քաջ են, կրակէ բնաւ չեն վախնար բայց կայրին:

Չեռագործներն մեծ կատարելութեան հասած են, գեղեցիկ սեռէն անոնք որ գող կըլլային եթէ արական սեռին վերաբերէին, հոս խանութներ բացած մեր ազգին աղջիկներուն և տիկիներուն զբազաններէն ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկեան, ամեն բոլի բազում դրամ կը քաշեն:

Փոքրիկ դիւարիկ մը համար երկու ոսկի կուղեն, իսկ զայն շտկելու համար, այսինքն վրան ծաղիկ մը կապելու համար մէկ ոսկի կը պահանջեն. Բարիզէն եկած դաղափարին համեմատ շապիկներ կը կարեն, զոր առաջին անգամ կոճիկը կոճակները կը բռնին, եթէ քիչ մը երկար շունչ առնես՝ կարերը կը քակվին. այսպէս հասկցիր բոլոր հազուստներուն համար: Այս տեղէն շապիկ կամ զգեստ ծախու առնողն ուշադրութեամբ և նրոշեալ չափով շունչ առնելու է:

Նշանաւոր է իւր լիճն որ ձմեռ առնն կը

գոյննայ Թագախմէն. մինչև վալսթիայ Սեբայր: Ընկերութիւն մը այդ լճին վրայ նաւակներ բանեցնելու արտօնութիւն ինդրեց բայց չը կրցաւ լսանալ:

Եթէ արտօնութիւն տրված ըլլար այդ մտք դը մեծ գումարներ կը շահէր. ոսկայն այս արտօնութեան հակառակեցան կիներէն որ մանք որք քարեպատէ՛ պսիթ կը համարէին սոյն լիճն իրենց խոշոր սրունգներն արդոյ հասարակութեան ցոյց տալու համար. վասն զի երբ այդ լճակէն անցնէին՝ մինչև ծոռակերը վեր կառնէին իրենց շրջագոգեստն. Գալով այն կիներուն որք նիհար սրունգներ ունէին, առնք բաւական աշխատեցան որ շնորհի այդ արտօնութիւնն որպէս զի իրենք ալ ձմեռուան եղանակին մէջ կարողանային դուրս ելնելու ազատութիւնը վայելել. վասն զի ասոնք կզգուշանային իրենց տկար սրունգներն ուրիշներու ցցունելէ, միանգամ ընդ միշտ հաստատելու համար այն ճրջմարտութիւնն թէ՛ կիներն իրենց սոգեղ կողմերն ծածկելու համար միշտ մեծ զահողութիւններ կրնեն:

Այս թաղին ազգայիններուն վրայ կատարեալ տեղեկութիւն տալու համար պարտաւոր ենք շատ մասերու բաժնել զանոնք:

Մաս մը կայ որ բնիկ Բերացի չէ այլ կամ Հասդիւղցի կամ Եէնի Գաբուցի է որ ժամանակաւ շատ հարուստ ըլլալուն պատճառաւ այս թաղն եկած է և սնանկացած է, որպէս թէ Հասդիւղի կամ Եէնի Գաբուցի մէջ սնանկանալն մեծ դժուարութիւններ ունենար: Արդ սնանկացած բոլոր ամիրաներն դրեթէ այս թաղին մէջ կը բնակին: Եւ արդարեւ այս թաղն շատ դիւրութիւններ կընծայէ այն անձերուն որք հաստատապէս որոշած են դադրեցնել իրենց վճարումներն, և ասոր համար է որ շատ վաճառականներ հոն կերթան երբ սնանկանալ փախաքին: Շատերն ալ սնանկանալէ վերջը հոն կերթան իրենց ծանօթներէ հեռու մնալու համար, վասն զի սնանկութիւնն ժամանակաւ այնքան անպատիւ բան մը նկատված էր որ սնանկացող մը նորընծայ քահանայի մը պէս քառասուն օր ապաշխարանք կը քաշէր և տունէն դուրս չեր ելնէր: հիմա, փառք լուսաւորութեան, սնանկութիւնն թէպէտև սովորական բան մը դարձած է, բայց դարձեալ կը գտնուին խաւարեալ մարդեր որոնք իրենց փոքրկութիւն և ամօթ կը համարին ուրիշին իրաւունքն կընելը: Ահա այս խաւարեալներն են որ Բէրա կը գաղթեն. լոյս մտղթենք իրենց համար որպէս զի նախապաշարումը մէկդի

թողլով հանդարտ խղճով սնանկանան և իրենց մեծ պատիւ համարին ուրիշներու ստակներն ուտելը: Արդէն հարստանալու համար ամենէն կարճ ճանքան է աս. և այն բոլոր հարուստներն զորս այսօր կը տեսնենք բայց տեսնել չենք ուզեր այդ ճանքով հասած են իրենց նաւահանգիստը: Ահա մարդ մը՝ որ իւր կեանքին մէջ բնաւ վաճառականութեամբ չէ զբաղած և այսօր վտախորի երկու ափերուն վրայ բարձրացած հոյակապ շէնքերու տէր է: Ինչպէս կառուցած է զանոնք. մի հարցուններ, յափշտակութեամբ կառուցած է: Ասդէն դարձիր և կը տեսնես այնպիսի անձեր որք իրենց կեանքին մէջ հազիւ ապրելու համար դրամ վաստկած են, բայց այդ անձերն այսօր չգիտեմ որ կղզւոյն մէջ տէր են այնչափ գետիններու՝ որոնցմէ նոյն նահապետին օրէն ի վեր մաս մաս կը ծախեն և այդ գետինները չեն սպառիր. ոչ թէ միայն չեն սպառիր, այլ որքան ծախվին այնքան կընդարձակվին: Ինչպէս. մի հարցուններ, վասն զի պատասխանը գողութիւն է, և այս գողերն մեծ յարգ ու պատիւ կը վայելեն հասարակութեան մէջ որ կըսեն իրենց համար:

— Շատ խելացի, շատ ճարպիկ մարդեր են, կանխաւ պատրաստած են իրենց ապագայն:

Եթէ ասոնք ուրիշ հողի մը վրայ գտնվե-
ին ցմահ բանտարկութեան կը դատապարտու-
ին :

Դաս մ'ալ կայ որ ոչ գործ ունի և ոչ եկա-
մուտ և ոչ ալ հող ապրելու համար : Այս մա-
սին վրայ եթէ ակնարկ մը ընես՝ կը զարմանաս
թէ ինչպէս կապրի և ինչու անօթութենէ չը-
մեռնիր , բայց երբ իր ընթացքը քիչ մը քննես՝
կը զարմանաս թէ ինչու միլիոնի տէր չըլլար :
Այս մասին բոլոր գրամագլուխն է իւր կրած
հագուստն զոր կը շինէ բարեկամներէ նախ փոխ
առնելով և յետոյ չվճարելով : Բոլոր հարստու-
թիւնն իւր վրայ կը կրէ , Պիասի աշակերտներէն
է : Այդ հագուստին տէր ըլլալուն պէս բարե-
կամէ մը քանի մը դահեկան կը գտնէ և կերթայ
թաղին ամենէն նշանաւոր սրճարանին մէջ կը
նստի : Աչերը կը յառէ սրճարանին դրանը՝
ուսկից անձանօթի մը մտնելուն կոպտէ ճիշդ
այն ձկնորսին պէս որ կարթը կը ձգէ ջուրին մէջ
և ձուկի մը դալուն կսպասէ : Օտարական մը
մտաւ , անոր հետ խօսոյն բարեկամ կըլլայ , քո-
վը կերթայ և կսկսի խօսակցութեան :

— Ե՛րբ եկաք , կը հարցնէ անոր :

— Երէկ գիշեր եկայ :

— Ես զձեզ տեղ մը տեսած եմ , զձեզ պի-

տի ճանաչեմ . . . բայց յիշողութիւնս քիչ մը աը-
կար է ու . . .

— Կարելի է :

— Մարտիրոս աղային քեռորդին էք դուք :

— Ո՞ր Մարտիրոս աղային :

— Մարտիրոս աղա մը կար . . . սա իքը . . .
սա Մարտիրոս աղան որ վերջը . . . վերջը բան
մը եղաւ :

— Վերջաբան մի եղաւ . . .

— Վերջը բան մը եղաւ ըսին այն ատեն
ները :

— Մարտիրոս անունով մօրեղբայր չունիմ ես :

— Չունիք մի :

— Չունիմ :

— Ո՞վ է ան ուրեմն որ Մարտիրոս անունով
մօրեղբայր մը ունի որ վերջը բան մը եղաւ . . .
ներեցէք , ներեցէք , հիմա յիշեցի . . . դուք
չէք , ես ձեզի ուրիշի մը նմանցուցի . . . Կա-
րապետն էր այն , որ ձեզմէ աղէկ չըլլայ , բարե-
կամն էր , և որ Մարտիրոս աղային քեռորդին
էր , պատուական երիտասարդ մ'էր , բայց վեց
տարի կայ որ զինքը տեսած չունիմ : Մարտի-
րոս աղան ալ բարի մարդ մ'էր որ վերջը . . .
վերջը . . . տէր որդմեա , ինչ եղաւ այս մար-
դը վերջը . . . հա՛ , վերջը շատ աղքատ եղաւ ,

վասն զի իր բոլոր հարստութիւնը +մասնէր մէջ
թաղեց . . . խեղճ Մարտիրոս ազան : Բայց ես
զձեզ ալ անպատճառ տեղ մը տեսած եմ , և
ձեր դէմքն ինձի ծանօթ է :

— Հաւանական է որ Եէնի Գաբու տեսած
ըլլաք :

— Ճիշդ Եէնի Գաբու , ճիշտ , ահ , եղբայր
կաղաչեմ սր +մասնէր չխաղաք , +մասնէր կը սնան-
կացնէ մարդու , ինչպէս նաև երբեմն ալ մարդու
կը սնանկացնէ +մասնէր :

— Ես չեմ խաղար :

— Կեցցես , հիմա սիրեցի զքեզ . . . ներե-
ցէք , խօսքի բռնովեցանք և մուցայ հարցնելու
թէ ինչ պիտի հրամէք . . . խահուէ՛ թէ օղի :

— Բերանս չեմ դներ օղի :

— Իարձեալ կեցցես , դարձեալ սիրեցի զքեզ ,
քանիներու խրատ տուած եմ որ սա անիծեալ
ըմպելիքէն ետ կենան և խրատս լսելի չէ ե-
ղած : Խահովէ մը բեր : Տունը ինչպէս են , աղէկ
են , մայրդ ինչպէս է :

— Մայր չունիմ :

— Դուք ողջ եղէք : Ներելի է հարցունելթէ
ինչով կղբաղիք :

— Պղտիկ վաճառականութեամբ մը . . . կը-
տաւի դործ :

— Շատ լաւ , կտաւի գործը ամենէն աղէկն
է , հօրեղբորորդի մը ունիմ զոր միշտ յորդորած
եմ կտաւի գործ ընել բայց մտիկ չէ ըրած իմ
խօսքերս :

— Հրամանքնիդ ինչով կղբաղիք :

— Շիտակը խօսելով ես հիմակուհիմա գործ
մը չունիմ , մեր հօրէն մնացած քանի մը տու-
ներ կան անոնց եկամուտովը կապրինք . կուզեմ
գործի մը ձեռն զարնել բայց չգիտեմ թէ ինչ
գործ բռնեմ . . .

Այս պահուն տան սպասաւորի կերպարան-
քով մէկը կը մտնէ և ատենաբանին խօսքը կընդ-
միջէ անոր ականջն բան մը փոփոխելով :

— Առաջ ինչու իմաց չտուիք :

— Ինքն քսան ոսկի ուղած էր մենք ալ ձեր
մեծապատուութենէն այնքան ուղեցինք :

— Տէր ողորմեա . . . հիմա ինչ ընելու է . . .
Ղալթիա գնա՛ սենեակը բաց . . .

— Մարդը հիմա կուզէ , վասն զի վար չը-
պիտի իջնայ և հոս մէկու մը պիտի ապ եղեր :

— Ճաթեղու բան . . .

— Ի՞նչ կայ , կը հարցունէ օտարականը :

— Ոչինչ , քսան ոսկինոց հայելի մը ապրա-
պրած էի մարդն երեսուն ոսկինոցէն բերած է
և հիմա տասն ոսկի ալ կուզէ . չսպասեր ալ որ

սպասաւորը Ղալաթիայէն երթայ բերէ . . . սս
եւրոսպանները զարմանալի մարդեր են . . .

— Եթէ կընդունիք՝ ես տամ և ժամէ մը
ինձի կուտար :

— Ձէ, չէ, ինչ ըսել է, ամօթ բան է, մա-
նաւանդ թէ ես չեմ սիրեր փոխառութիւն ընել :

— Ի՞նչ ֆրաս ունի, ժամուան մը փոխա-
ռութեան խօսքը կըլլայ . . . եկուր պարոն սո . . .

— Աս մեծ ամօթ եղաւ շիտակը :

— Վնաս չունի :

— Մինաս շուտ ըրէ, Ղալաթիայէն տասն
սոկին բեր :

— Շատ աղէկ :

Սպասաւորը կը թռի :

— Ներումն կը խնդրեմ, բարեկամ :

— Ձարժեր :

— Ի՞նչ բանի վրայ կը խօսէինք :

— Դորձ մը բռնելու վրայ :

— Այո՛, կուղեմ դորձի մը սկսիլ բայց կը
վախեամ որ գրամագլուխս կը կորսնցնեմ, վա-
սըն զի հիմակուան դորձերն շատ աղէկ չեն . իմ
բռնած ընթացքս աւելի շահաւոր է :

— Իրաւունք ունիք . . . դորձ բռնելու ժա-
մանակը չէ :

Ժամ մը կը խօսակցին դորձի վրայ . սպասա-

ւորն որ տասը սոկին բերելու զնացած էր, վա-
զելով գրօսարանին առջևէն անցած ատենը ներս
կը կանչվի իւր տէրէն .

— Ուր է, կը հարցնէ իրեն, ստակը :

— Բանալին սխալ առած եմ, փոխելու կեր-
թամ :

— Այ ապուշ, շուտ ըրէ . . . ապուշ սպա-
սաւորներն ալ քաշվելու բաներ չեն շիտակը,
քառասուն սպասաւոր փոխեցի, սո քառասու-
նը մէկերորդը պիտի բլլայ : Խելքը գլուխն սպա-
սաւոր մը կը ճանաչէք :

— Ձեմ գիտեր անանկ մէկը :

Այս խօսակցութեան միջոցին մեր բարեկամը
մէկէն ի մէկ գրօսարանէն դուրս կը ցատկէ և
երեսուն տարու մէկու մը վիզը կը փաթտվի և
կսկսի անոր հետ պագտովիլ : Համբոյրի արարու-
ղութիւնն լմնալուն պէս իւր համբոյրակիցին
հետ գրօսարանին դրան առջև կուգայ և իւր
բարեկամին կրտէ .

— Եղբայրս է, որ Մարտիիայէն եկած է . . .
հետը տուն երթամ և քառորդէ մը դառ-
նամ, ներեցէք : հազար ներումն, միլիոն ներու-
ղութիւն . . . :

Մարդն մինչև այսօր կսպասէ այդ սրճարա-
նին մէջ սպասաւորին որ մինչև այսօր բանալին

չէ կրցած գտնել, բարեկամին որ եղբօրը հետ
դեռ կը պազտովի և տասը ոսկիին որ ետ դառնա-
լու միտք չունի: Ահա այս դասին մէկ գործն ու-
րու ականատես ըլլալու պատիւն ունիմ: Տարա-
կոյս չկայ թէ այս տեսակ գործերն այսօր վա-
ճառականութենէն աւելի շահ կը բերեն եթէ
ամեն օր պատահին:

Ուրիշ մաս մը իւր բոլոր ժամերը խաղամո-
լութեամբ կանցունէ. նարտ թուղթ և կամ ու-
րիշ տեսակ խաղ մը իւր արհեստն է. ատով իւր
ընտանիքը կը կերակրէ կամ անօթութենէ կը
մեռցունէ: Այս խաղամոլներն ալ երկու կար-
գի կը բաժնրվին, հարուստներն ոսկիով կը խա-
ղան, աղքատներն արծաթով:

Մաս մ'ալ կայ հոս որ միջնորդ է կամ տան
կամ սիրոյ և կամ երբեմն երկուքին մէկէն:

Չմոռնանք յիշել որ ընդհանուր կանոն մ'է
հոս շարաթ մը անօթի մնալ և դարձեալ հին
հադուստներով չպարտիլ. քսան փարա չունե-
ցողն Ռօչիլտի տղուն պէս կը հազվի և ասկից է
որ Բէրան ուրիշ թաղերէն աւելի հարուստ կը
կարծվի:

Այս թաղին մէջ կը բնակին ազգին ամենէն
նշանաւոր հարուստ ազգայիններն որք վերջին
տարիներս իրենց քսակը բացած են բարենը-

պատակ գործերու համար . . . միայն այդ տե-
սակ բարենպատակ գործերու համար կուտան
որոնց շնորհիւ իրենց անունները լրագիրներու
մէջ կը հրատարակվին և իրենք ալ կը փառա-
ւորվին. իսկ լուծա մը չեն տար այդ բարենը-
պատակ գործերու համար որք ազգին պատի-
ւը և փառքը կը կազմեն, վասն զի այդ լու-
մայն լրագիրներու մէջ պիտի չհրատարակվի և
մեծ անխելքութիւն է որ մէկն ազգին երկու
դահեկան տայ և անունը լրագիրներու մէջ չը-
հրատարակվի: Բացառութիւնները մոռնալու
չէ:

Կայ երիտասարդութիւն մը որ հինգ տարին
անդամ մը կսթափի և մտքէն կանցունէ կազ-
մել ընկերութիւն մը, եթէ չկայ, իսկ կործա-
նել, եթէ կայ: Ատենօք Հասկա՞ ընկերութիւն
մը կար, այժմ չիք: Կազմուած էր նաև Օտանդակ
ընկերութիւն մը որու նպատակն էր աղքատ հի-
ւանդներու ճրիարբար բժիշկ ղրկել և դեղ տալ:
Այս ընկերութիւնն բաւական դրամ հաւաքեց
բայց ետքը անոր քանի մը անդամներն որ աղ-
քատ էին, հիւանդացան, և իրենց հիւանդու-
թիւնն ալ ծանր ըլլալով ընկերութեան դրամով
ինքզինքնին դարմանեցին, որով ընկերութիւնն
ալ իւր նպատակին հասած համարվեցաւ:

Հոս կը բնակին ազգին ամենէն երեւիլի բը-
ժիշկներն : Հոս կը գտնվին ընդհանրապէս ազ-
գին ամենէն նշանաւոր հիւանդութիւններն ,
ինչպէս են Կալուածոյ հոգաբարձութեան խըն-
դիրը , Հասունեան խնդիրը ևն :

Քարակէօզեան եղբայրներուն շինելիք վար-
ժարանը այս թաղին դերեղմանատան մէջ պիտի
բարձրանայ եթէ . . . ասիւնները բարեհաճին
բարձրանալ :

Հոս ալ թաղեցին իւր թաղականէն դո՛՛հ չը-
լար երբէք և այս պատճառաւ թաղականի կը-
ռիւնները պակաս չեն :

Թաղային վարժարանը , նշանաւոր անուն , ու-
րիշ թաղային վարժարաններու հետ բաղդատե-
լով շատ խեղճ է , հարբուխէ բռնված է աս
մինչդեռ միւսերը տենդէ կը տանջվին :

Թաղիս մէջ չորս եկեղեցի կայ Ս. Երեմիայի
Բնիկ , Խոր Վերոյ , Ունեբերան և Ս. Յարութեան և այս
չորս եկեղեցիներու մէջ չորս բարեպաշտ քրիս-
տոնեայ չկայ :

Թաղեցին շատ զբօսասէր է . ամառուան ե-
ղանակին մէջ հասարակաց պարտէզը կամ մաս-
նաւորաց պարտէզները կերթան , և ձմեռն ալ
թատրոններ , պարահանդէսներ և ուրիշ զբօսա-
րաններ կը յաճախեն :

Իգական սեռն ինքզինքը բոլորովին հայե-
լիներու տուած է . ժամերով , օրերով , շաբաթ-
ներով , ամիսներով , տարիներով և դարերով հա-
յելիներու առջև կը կանգնի և ինքզինքը կը
գեղեցկացունէ : Բացառութիւնը խիստ քիչ է
այս մասին : Կիներէն շատերն այն աստիճանին
կը հազվին երբ դուրս ելնել կամ հիւր ընդու-
նիլ հարկ ըլլայ . իսկ եթէ այս հարկը չներկա-
յանայ՝ տան մէջ գիշերազգեստով կը պտրտին .
արդեօք ցերեկազգեստով կմտնեն անկողին :

Կիներուն բամբասանքը հոս քիչ է , եթէ եր-
բեմն բամբասանք մը ընել պետք ըլլայ՝ խիստ
քաղաքավարութեամբ կը վարվին :

— Տիկին Ք . . . իմացայ որ Փ . . . ին կինը
Չ . . . ին էրիկը կը սերէ եղեր , բայց կը խընդ-
րեմ որ այս խօսքս գաղտնի մնայ քովդ :

— Վստահ եղիր որ մէկու մը չեմ ըսեր :
Լուր տուող տիկինը կը մեկնի և Տիկին Ք . . .
իւր դրացւոյն տունը կը զարնէ : Սպասուորը
գուռը կը բանայ :

— Տիկինդ վար կանչէ Մինան :

— Տիկինը չորս ժամ է որ հազվելու հա-
մար սենեակը մտաւ և տակաւին չելաւ :

— Շուտ դնա՛ , ըսէ իրեն որ Տիկին Ք . . . ե-
կամ է և կարևոր խօսք մը ունի ըսելու :

Ապաստուորը վեր կը վազէ իմաց կուտայ Տիկ-
նոջն որ հազված ըլլալով վար կիջնայ :

— Վեր հրամեցէք Տիկին Ք . . . :

— Չեմ կրնար Տիկին Շ . . . խօսք մը ընեմ
և երթամ պիտի , վասն զի գործ ունիմ տունը :

— Խե՞ր է :

— Ի՞նչպէս խեր . . . Փ . . . ին կինը Ձ . . .
ին էրեկը կը սիրէ եղեր , բայց ոտքդ պագնեմ ,
ուրիշի մի ըսեր , գաղտնի պահէ , միաք բա-
րով :

— Ասանկ բան ուրիշին կըսվի . . . անհոգ
եղիր :

Տիկին Ք . . . կը մեկնի և Տիկին Շ . . . ըս-
ապաստուորին կըսէ .

— Սա հովանոցս ինձի բեր :

Հովանոցը կը բերվի և Տիկին Շ . . . ձախ
թևի փողոցը կը մտնէ և տան մը դուռը կը դար-
նէ : Դուռը կը բացվի , վեր կեղնէ և կը դիմա-
ւորվի խոշոր կնիկէ մը :

— Հրամեցէք Տիկին Շ . . . կըսէ տան տի-
կինը , հրամանքնիդ ալ հոս կուգա՞ք եղեր , որ
հովը փչեց ասանկ :

— Սանկ . . . ինչպէս էք , աղէկ էք , ինչ-
պէս է ձեր ամուսինը . . . Փ . . . ին կինը
Ձ . . . ին էրեկը կը սիրէ եղեր , հիմա իմացայ

և շատ ցաւեցայ , ոտքդ պագնեմ , չըլլայ որ ու-
րիշի զրուցես , վասն զի ինձի ըսողն պատուի-
րեց որ մէկու մը չըսեմ :

— Անհոգ եղիր , կըսէ , և Տիկին Շ . . . ին
մեկնելէն անմիջապէս ետքը փողոց կը վազէ իւր
ճանօթներուն աւետիս տալու :

Բայց իրաւ է որ Փ . . . ին կինը Ձ . . . ին
էրեկը կը սիրէ . քաւ լիցի . . . մեծ սուտ մ'է .
. . . արդէն Փ . . . ին կինն իւր էրիկն անգամ
չսիրեր և ինչպէս կարելի է որ Ձ . . . ին էրեկը
սիրէ : Փ . . . ին կինն օր մը այս լուրը ստեղ-
ծող տիկինին շրջազգեստին դիպուածով կոխած
էր եկեղեցւոյն մէջ և զայն քիչ մը պատուած էր ,
այդ տիկինն ալ Փ . . . ին կինէն վրէժ լուծելու հա-
մար ասանկ արատ մը քսելու ելած էր անոր վրայ :

Իէրայի գեղեցիկ սեռին վրայ աւելի խօսիլն
աւելորդ կը համարինք քանի որ ըսինք թէ հա-
յեղին առջև միայն կեանք կանցունէ . այս-
չափը բաւական է , այսչափը շատ խակ է :

Ամառուան եղանակին մէջ այս թաղին մէջ
ջուր չգտնվիր և թաղեցին կատարվի առանց ջու-
րի անցունել . . . իւր օղին :

Օդն աղէկ է , բայց կերևի որ ամառն օդ ալ
չգտնվիր , վասն զի հարուստները գեղերը կեր-
թան օդ առնելու :

Բէրայի մէջ հայու որչափ տուն կայ . այն հարցման այն տունն կրնանք դոհացուցիչ պատասխան տալ երբ օրինաւոր վիճակագրութիւն մը ըլլայ : Առանց այն վիճակագրութեան սպասելու ինչ որ ըսենք վաւերական չպիտի համարվի մանաւանդ թէ այս մասին կարծիքները համաձայն չեն : Ոմանք կը կարծեն թէ Բէրայի մէջ երկու հազար տուն կայ հայու . ոմանք կայնդեն թէ երկու հազար հինգ հարիւր տուն կայ : Ըսողներ ալ կան թէ հազար հինգ հարիւր է Բէրայի տուներուն թիւը . . . չափազանցութիւն , չափազանցութիւն . . . չափազանցութիւն . . . Իմ կարծիքովս հազիւ երեք տուն հայ կայ Բէրայի մէջ . . . :

Պ Ա Լ Ա Տ

Մայրաքաղաքիս թաղերուն առաջինը կը համարվի երբ պժան գնով բանջարեղէն կամ պտուղ ծախու առնելու վրայ է խնդիրը . փառք հրեայ ազգին , բուսային ուտելիքն շատ վար գնով կը վաճառվի հոս . բայց միայն Պարսացին օգուտ կը քաղէ այս աժանութենէ , որովհետեւ Բէրացին կամ Եւսկիւտարցին կաղամբ կամ խընձոր գներու համար Պարստ չկրնար երթալ ինչպէս որ ես ալ Սմերիկա չեմ երթար անտուկ մը կազ գներու համար :

Սյս թաղին մէջ կայ քարուկիր մեծ եկեղեցի մը : Սյս քարուկիր շէնքին անունն է Հրեշտակոյն որ , ինչպէս յայտնի է , մահկանացուներու հողիները կառնէ և որ , ինչպէս յայտնի չէ , բժիշկներու վերատեսուչը կը համարվի : Այսուհետեւ ալ մի զարմանար թէ ինչու ընդհանրապէս շատ համբաւ կատանան այն բժիշկներն որք ընդհանրապէս շատ մարդ կը մեռցունեն . վասն զի անոնք Հրեշտակոյնին պաշտպանութիւնը կը վայելեն :

Հրեշտակապեան էր որ հողին առաւ Ռո .

տոսթօյի առաջնորդ թաղէոս եպիսկոպոսին որուն մարմինն յիշեալ եկեղեցւոյն մէջ թաղված է, եթէ գիտնայինք որ Հրեշտակապետն մամլոյ ազատութիւնը կը յարգէ՝ կիմացունէինք իրեն որ այս բնտրութեան մէջ սխալած է . վասն զի թաղէոս եպիսկոպոսն ազգին շատ ֆրասակար - որովհետեւ բնաւ ֆրասակար չեղողը չկայ - կրօնաւոր մը չէր, և եթէ Հրեշտակապետն անպատճառ որոշած էր կրօնաւորի մը հոգին առնել՝ մենք կրնայինք իրեն ներկայացնել քառասուն ընտրելիներ որոնցմէ իւր ուղածն կարող էր անդիի աշխարհ ղրկել:

Այս եկեղեցւոյն մէջ ատենօք տասնեւութ քահանայ կապրէր, իսկ հիմայ միայն հինգ քահանայ անօթութենէ կը մեռնի . . . ձեզի կը թողում թաղեցւոյն ջեռմեռանդութեան հաշիւն ընել:

Պաշտ ունի մանչերու թաղային վարժարանը ուր հարիւր ութսուն աշակերտ կերթայ: Կայ նաև աղջիկներու թաղային վարժարան մը որ ութսուն աշակերտ ունի: Երկու վարժուհի, ինը դասատու, մէկ տեսուչ և քառասուն ոսկի օսմանեան կը կառավարեն այս երկու վարժարանները: Այս քառասուն ոսկին քսանը եկեղեցիէն կը վճարվի, տասներկուքը աշակերտներ-

րու թոշակէն և մնացած ութը ոսկին հոգաբարնութենէ որ բնաւ չդադրիր վիճակ հանելէ և տւիրատուն տպել տալէ յօգուտ այս վարժարանին:

Հոս թաղական կրնտրվին միշտ այն անձերն որոնց մազն և մօրուքը ձերմկցած են, իսկ երբ սև մազերով ու պելխերով մարդեր թաղական ընտրվին՝ ընտրութիւնն ապօրինաւոր կը համարվի: Այս սովորութիւնն եթէ իւր ֆրասն ունի սա օգուտն ալ ունի որ շատերը, թաղական ընտրվելու փափաքով, իրենց մազերն ու պելխերը չեն ներկեր:

Պաշտու մէջ կար ժամանակաւ Ժողովուրդէն անուամբ բնկերութիւն մը որուն անունը վերջէն Ծահաւիթի փոխվեցաւ և որուն քանի մը հարիւր ոսկիներն քանի մը ազգասէր ստամբաներու մէջ հալեցան: Հիմա Աղաթաթէն անուամբ ընկերութիւն մը կայ որ Ս. Ծնունդին և Զատիկին օրերը թաղին աղքատներուն կը բաժնէ տարուան մէջ հաւաքված գումարը և տարին երկու օր կը խնդացնէ թաղին աղքատները:

Վեց հարիւր քսան և չորս տուն հայ կայ թաղիս մէջ:

Թաղեցւոյն մեծ մասը արհեստաւոր է որուն սովորութիւնն է ամեն կիրակի առաւօտ բաղ-

նիք երթալ և բաղնիքէն ետքը եկեղեցի և եկեղեցիէն վերջը գինեատուն : Աղօթքն և ինչպէս կը տեսնվի , իւր առջևն ունի մաքրութիւն և ետևն օղի : Ըստ մեզ թաղեցին աւելի տրամաբանօրէն վարված կըլլար՝ եթէ նախ գինեատուն երթար , ետքը բաղանիք և ամենէն վերջը եկեղեցի մտնէր : Թէպէտև թաղիս մէջ տասը գինեատուն կայ՝ բայց թաղեցին հազար հինգ հարիւր գինեատուն ապրեցնելու կարող է , վասն զի գինեատուն պահելն վարժարան պահելու պէս գժուարութիւններ չունի , վասն զի ամեն մարդ ամեն երեկոյ աղբասիրաբար առ նուազն քառասուն բարա կուտայ գինեաման :

Պալատցին որչափ քիչ դպրոցասէր այնչափ շատ հիւրասէր է , իւր հիւրասիրութենէ ծընունդ առած է հեռեեալ առածը .

« Պաղտատ գնացողը վերադարձած է լակ Պալատ գնացողը վերադարձած չէ » :

Եթէ թաղիս մէջ գիշեր մը հիւր գանավիս՝ գրքեզ կատարելապէս կը գինովցնեն :

Մեր ազգայիններն հոս գրեթէ մեծ մասամբ գիւրահաւան են , Գաղտնեայ գտող , գուշակութիւններ ընող կիներուն մեծ պատիւ և հաւատք կընծայեն . ամենէն երեւելի կախարդութիւններն այս թաղին մէջ կը բնակին : Առանձնատէր են ,

նախապատիւ կը համարին ամիսներով առանձին նստիլ քան թէ ժամ մը մէկ երկու բարեկամներու հետ խօսակցիլ : Զը մոռնանք ըսել թէ շատակեր են և եթէ այս դարուս մէջ մէկը պալատցի սպասաւոր մը ունենայ՝ հացավաճառին հետ ամեն օր կուի ընելու կտիպվի կարծելով թէ հացավաճառը մէկ հացի տեղ չորս հաց անցուցած է հաշույն մէջ :

Սովորականէն աւելի անգործ շատախօսներ կան որք կոյր են մտօք և դեղ ալ առնելու տրամադիր չեն իրենց միտքը բանալու համար :

Թաղիս մէջ սովորութիւն մը կայ որով մէկն իւր բարեկամներուն բարև տալը կը դադրեցունէ եթէ երկու երեք հարիւր ոսկի մէկէն վաստըլի :

Շատ ուշ կամուսնանան հոս , յիսունէն առաջ կարգվին անխոհեմութեան նշան կը համարվի . և երբ մէկն յիսունէն առաջ կարգվի՝ ամենուն երեսէն կկնայ և իբր շուայլ ոք կը նըկատվի թաղեցիէն :

Երիտասարդութիւն մը կայ սակայն որ ամեն ճիգ կը թափէ թաղը լուսաւորելու համար-կազով չը հասկնաք- : Այս երիտասարդութիւնն աւելի թատրոն կը շինէ քան թէ դպրոց և եթէ իշխանութիւն տրվի իրեն՝ թաղային վարժարա-

նը թատրոնի կը փոխէ, եկեղեցւոյ մէջ ալ ներկայացում տալու համար Պատրիարքարանէն արտօնութիւն խնդրելու կերթայ :

Պալատին կիները նշանաւոր են իրենց պարկեշտութեամբն և հաւատարմութեամբն : Ասոնք շաբաթն երեք անգամ տախտակ կը սրբեն և երեք անգամ լաթ կը լուան : Նորածե հագուստներ հագնելու համար իրենց քունը չեն խռովեր, պարզութիւնը կը սիրեն և նորածեութիւնն միշտ պարզութեան մէջ կը գտնեն :

Թաղիս օդը աղէկ չէ, բայց ինչ ազդեցութիւն ունի աղէկ օդն երբ մարդ իւր քսակին մէջ օդէն ուրիշ բան չունենար :

Ի Ձ Ա Տ Ի Է

Բնակութիւն հաստատելու համար պատուական թաղ մ'է եթէ մարդս նապաստակ ըլլայ ... լեռնէն վեր ելնելու դիւրութիւն ունենալու համար :

Երանի անոնց որք նապաստակ չեն բայց երկար շունչ ունին, վասն զի անոնց համար է այս թաղն. վսյ անոնց որոնց շունչը կարճ է, վասն զի անոնք արժանի չեն այս թաղին մէջ բարձրանալու, անոնց շունչը կէս ճանքան չհասած կսպառի, մանաւանդ երբ Գուգկունճուքէն վեր ելնել ուզեն :

Հոս բնակելու համար լայնածաւալ սիրտ մ'ալ ունենալու է որ չճաթի մարդ թաղեցւոյն ընթացքը քննելով :

Եկնը մոտենք նախ և առաջ թաղիս ծովահայեաց զբօսարանն ուր տասնի չափ ազգայիններ օրուան խնդիրներուն վրայ կը խօսին : Ասոնց ամենն ալ ստոյգ աղբիւրներէ լուրեր կը հաւաքեն և իրարու կը հաղորդեն : Կը փափաքին այս օրուան լուրերն իմանալ :

— Շատ հետաքրքիր եմ նոր լուրերը իմանալու :

— Եկուր , իրենցմէ քանի մը քայլ հեռու նստինք և նոր լուրերն իմանանք : Ահա սկսան խօսիլ :

— « Ի՞նչը հրաժարական տուած է այսօր :

— Այո , տուած է բայց Մէկալը չէ ընդունած :

— Մուշտակը կը պնդէ եղեր այս կէտին վերայ :

— Ես չեմ կարծեր որ համաձայնութիւն գոյանայ , որովհետև Ի՞նչը Բան ընելուն պէս միև կողմէն ալ Բանը Ինք պիտի ընէ :

— Ի՞նչն տեղն ես ալ ըլլամ՝ այնպէս կը վարվիմ :

— Դուն Մէկալը գիտես , ինչ յամառ է :

— Բայց Ի՞նչը իրաւունք ունի Բանին երեսն այդպէս պօռալու :

— Բանն ալ իրաւունք չունէր Ի՞նչը վար զարնելու :

— Ես չեմ կարծեր որ միաձայնութիւն գոյանայ , վասն զի Մուշտակն Ի՞նչը կողմն է , Մեծաւորն ալ Բանը կը սիրէ :

— Վերջին լուրն իմացա՞ք , Մեծը բան մը պիտի խօսի եղեր :

— Պղտիկը երէկ գացեր է :

— Եթէ ասանկ երթայ՝ իմ կարծիքովս Բանը տարիէ մը Ի՞նչը կըլլայ :

— Ի՞նչն ալ Բան կըլլայ :

— Բայց Մուշտակն ալ պիտի ըսէ . ինձի նայեցէ՛ք , եթէ Բանը Ի՞նչը ըլլայ՝ ես ալ Ի՞նչը պիտի ընեմ , ապա թէ ոչ Ի՞նչը չեմ ըներ :

— Իրաւունք ունիս , շատ վարպետորդի է , մինչև որ Ի՞նչը Բան չընէ՝ չպիտի ընդունի . ամիրային կարծիքն ինչ է այս մասին :

— Ամիրան առջի օրը լուր տուած էր ներսէն որ Ի՞նչը պիտի շարունակէ եղեր մինչև որ Բանը գայ » :

— Կարծեմ բաւական տեղեկութիւն առիք այս օրուան դէպքերուն վրայ . ալ լրագիր կարդալու հարկ չմնաց : Օ՛ն , երեսնք և քիչ մ'ալ թաղային վարժարանը երթանք :

— Ի՞նչը ո՞վ է , Բանն ինչ է , Մէկալը կը ճանչնաս . . .

— Եւ ոչ մին կը ճանաչեմ . . . ահա թաղային վարժարանը :

— Ատոր վրայ ներսեւեւ գրված է :

— Ներսեւեւանին մի նայիր դուն , աղգին ըստակովը շինված է ան :

— Ինչո՞ւ ուրեմն ներսեւեւանն իւր անունը գրած է վրան :

— Վասն զի Ներսէսեան արքունի շինու-
թիւններու մէջ աշխատող գործաւորներուն շա-
բաթականներէն զեղչ ընելով գումար մը գոյա-
ցուց և այդ գումարը գումարելով այն գումար-
ըին հետ զոր թաղեցին տուած էր, շինեց այդ-
քարուկիր վարժարանն որ կանոնաւոր . . .

— Ի՞նչ անիրաւութիւն է սա . . . եթէ քը-
սակէն գումար մ'ալ տուած ըլլար, այսպէս գը-
րելու չէր, այլ, ինչպէս սովորութիւն է, գրե-
լու էր « Ներսէսեան նուիրեց այսչափ ոսկի դըպ-
րոցիս շինութեանը համար: » Այս թաղին մէջ
մարդ չկայ եղբայր:

— Ըլլալու է . . . շինեց այս քարուկիր վար-
ժարանն որ քանի մը դասարան և քանի մը
ճեմիչ ունի. ճեմիչները դասարաններէն աւելի
կանոնաւոր եղած են միշտ: Այս վարժարանին
մէջ ժամանակաւ դասատու մը գանակոված է.
կարծեմ մօտերս ալ կարգը պիտի դայ հոգա-
բարձութիւնը ծեծելու:

— Շուտ ընենք, ելնենք սա թաղէն, չըլ-
լայ որ մեղի ալ ծեծեն:

— Թաղեցին պաղած է վարժարանէն վասն
զի անոր շինութեանը համար իր կողմէ արված
գումարն ոչինչ համարվեցաւ և վարժարանին ա-
նունը Ներսէսեան դրվեցաւ:

— Աղջիկներու վարժարանն ինչպէս է:

— Շատ աղէկ է, քարուկիր է: Հոս աղջիկ-
ներու վարժարան մ'ալ կայ զոր Մէզպուրեան
բացած է և զոր թաղեցին դոցել կուզէ: Այս
վարժարանն օր ըստ օրէ յառաջ կերթայ:

— Թաղեցին ինչ կընէ:

— Նարտ, թուղթ և ի՛նչ ի՛նչ կը խաղայ և
ընդհանրապէս լայնածաւալ սիրտ մ'ունենալով
կարևորութիւն չտար վարժարաններուն փակվե-
լուն, միայն իւր քսակը լեցնելու կաշխատի և
միայն հացի պարկ կը կրէ ուրիշ առթի թող-
լով աղգային զգացում կրելը: Թէպէտև բացա-
ռութիւններ կան, բայց շահը կը պահանջէ որ
անոնք ալ ձայն չհանեն:

— Աս ինչ զարմանալի թաղ է եղբայր:

— Ընկերութիւն մ'ալ կայ հոս, բայց չգի-
տեմ թէ ինչ կընէ. կարծեմ մօտերս ուրիշ ըն-
կերութիւն մ'ալ պիտի կազմվի այս ընկերու-
թիւնը առաջ տանելու համար:

— Աս ինչ անտարբեր թաղ է:

— Արդէն այս թաղն հին չէ, քանի մը տար-
ուան թաղ է. ուրիշ թաղերէ ձանձրացողները
հոս եկած են. ուստի այս թաղն Պօլսոյ միւս բո-
լոր թաղերուն թերութիւններէն մէյմէկ քիչ
ունի:

— Ընթերցասիրուծիւնն ինչպէս է գոնէ :

— Հայերէն լրագիր կարդալն արգելլած է . և այս արգելքին դէմ վարվողը կամ երեք ոսկի տուգանք կը վճարէ կամ տասնըհինգ օրէն մինչեւ ամիս մը բանտարկութեան կը դատապարտուի : Հոս կը կարդացվին ընդհանրապէս Թերէմանը հատարի, Վատը, և Ճերէրիէ հաշարի լրագիրները :

— Երիտասարդութիւն չկայ հոս :

— Չկայ . « այս թաղին կլիմայն , կըսէր մէկ բարեկամս , երիտասարդի մազերն շուտով կը ճերմկցունէ բայց ճերմկցնելէն վերջն ալ շատ կապրեցունէ . ասոր համար երիտասարդք դեռ մազերնին չճերմկցուցած եթէ ուրիշ թաղ մը երթան և ուրիշ թաղերու մէջ մազերնին ճերմկցուցած անձինք հոս դանձ շատ լաւ և օգտակար կըլլայ : »

— Անհասկնալի թաղ մը :

— Մեծագոյն մասն առանց օղի խմելու չը կրնար հանդիսա ընել . հոս ընդհանրապէս շատ կը ծխեն և քիչ կուտեն :

— Քիչ ուտելու համար շատ կը ծխեն թէ շատ ծխելուն համար քիչ կուտեն :

— Առաջինը հաւանական է , վասն զի կեստարացիներ կան հոս : Քիչ կուտեն բայց գեղե-

ցիկ օդով կը սնանին : Թաղեցին ընդհանրապէս նիհար է : Թաղս ջերմեռանդ քիչ ըլլալուն պատճառաւ եկեղեցի շինված չէ հոս իբրև աւելորդ ծախք . թաղեցիներէն մէկ քանին երբեմն Սէլամնըղի եկեղեցին կերթան երբեմն ալ Գուղկունճուք :

— Իգական սեռն ինչպէս է :

— Կիները գեղեցիկ են , բարեձև , կըթուլթեան հակամէտ : Կիներն իրենց մայրենի լեզուն Սէլամնըղի կիներէն շատ աղէկ կը խօսին : Այս թաղի կիներուն տանտիկինութիւնը Իւսակիւտարի թաղերուն և ոչ մէկուն մէջ տեսնված է : Երեսի ներկը միայն քիչ մը չափէն աւելի յառաջ երթալու վրայ է հոս . ծեր այրերն ալ երբեմն այս ներկէն կը գործածեն : Նորաձևութեան մասին Գատրգեղցիներու չափ յառաջ գընացած չեն : Հոս կիները գեղեցկաձայն են և միշտ տաճկական երգեր կերգեն ինչպէս որ իրենց ամուսիններն ալ տաճկական «էրէ» կը հագնին : Թաղիս մէջ մեծ ֆէսը շատ յարգի է . երբեմն իրենց գլուխը կը դնեն այնչափ մեծ ֆէսեր որոնց իւրաքանչիւրին մէջ չորս օխա խաղող կը դրվի :

Օդը խիստ է . քաջառողջներուն չըպչիր , վատառողջներն անդիի աշխարհ կը զրկէ :

Հայերէ բնակված տուներուն թիւը հինգ հարիւրի մօտենալու վրայ է, եւ եւեւ խաղացողներուն թիւն ալ վեց հարիւրի :



Ս Ա Մ Ա Թ Ի Ա

Օղի չխմորները զատվին . . . անոնք իրաւունք չունին այս թաղը մտնելու :

Բաժնը վին մեզմէ նաև անոնք որք սովորած են Զարայ եւ ի . հոս ամեն մարդ որ է : վասն զի ամենքն ալ իրենց աշխատութեամբն և արհեստովը կապրին և , հետևաբար , յէջրու , եֆէնիներու ոտները լղելու պարտաւոր չեն :

Մեզի հետ չգան նաև այն անձերն որք արձակ հայհոյել գիտեն . անոնք հոս կը ծաղրըվին , վասն զի սամաթիացիներուն հայհոյութիւնն գրեթէ միշտ ոտանաւոր է :

Բնաւ հոս պտըտելու չեն այն օրիորդներն կամ տիկիներն որոնց երեսներուն վրայ կարմիրը անպակաս է . սամաթիացին կարմիրն միշտ հաւկիթներու վրայ տեսնել կուզէ :

Ամենևին գործ չունին հոս այն կիներն որք ամեն քայլափոխին կէս մէջքէն կը կտարտվին թղթեայ կիներուն պէս զորս հետք կը ներկայացնէ , վասն զի սամաթիացին այնպիսիներու վրայ կը խնդայ :

Այս թաղին մօտենալու չեն նաև այն երի-

տասարդներն որք կամ շատ թեթև են և կամ շատ ծանր :

— Մարդ երթալու չէ ուրեմն հոս :

— Ինչո՞ւ, ամեն մարդ ստիպված է այդ թերութիւններն ունենալու : Եկու՞ք քեզի հետ երթանք, բայց այնպիսի փողոցէ մը մտնենք որ մէկէ մը շտենալինք, վասն զի տեսնվեցնուալէս մեր օձիքէն կը քաշեն ու գինեատուն կը տանին Տեսնըլեցանք . . . ահա քանի մը երիտասարդներ սա փողոցէն ելան և խնդալով մեզի կը մօտենան . . . մօտեցան :

— Օ՛օ՛, բարի էք եկեր :

— Շնորհակալ ենք :

— Եկէ՛ք, նայինք, եկէ՛ք, Հայկական ընկերութիւնը երթանք և քանի մը հատ տնկենք :

— Հայկական ընկերութիւնը օղի խմելու համար հաստատված ընկերութիւն մ'է :

— Նպատակն այն չէ . . . բայց որ ընկերութիւնն է որ նպատակին ծառայած :

— Գոնէ անունը փոխեն :

— Ինչո՞ւ . . . աղէկ գիտես որ Հայկ օղի չէր խմեր :

— Պետրէ, Հայկական ընկերութեան օղին թէ աղէկ չէ և թէ սուղ է, Օրմանօղին տանինք մեր բարեկամները :

— Օրմանօղինն ալ երեսուն առաիճսն է եղբայր, անցեալ չարթու օրն մը քիչ խմեցի հոն և դպաւ ինձի :

— Եթէ ինձի հարցվէր՝ ես Կիւֆու հարգաւ ին կը տանէի բարեկամներս . . .

— Եղբայր, ան ալ օղիի հետ կաող մը պանիր միայն կուտայ :

— Այնչէն օլուին երթանք :

— Եղբայրներ, մենք թաղին մէջ քիչ մը պիտի պտրտինք :

— Թաղին մէջ մարդ չկայ, ամենն ալ գինեատուներու մէջ են այսօր :

— Մահտեսիին երթանք, մարդը հայ է և պատուական օղի ալ ունի :

— Շատ աղէկ Մահտեսիին երթանք :

— Լաւ . . . երթանք . . .

Քանի մը փողոց դառնալով մտանք Մահտեսիին գինեատունն՝ որու գինոյ մեղանին առջև կայնած կը խմէին տասնի չափ հաստաբազուկ ձկնորս ազգայիններ :

— Տա՛ տան, ամա՛ն է՞քնտի՞ տան . . .

— Թարալալա թարի լալալա, թիրալալա, թարիլալալա .

— Պէ՛ի Վա՛ր . . .

— Թարալալա թարիլալալամ . . .

Թիրալալա թարիլլալամ . . .

— Սէնն Կեդն Կեդն Կեդն Կեդն Կեդն . . . Կեդն Լուր

— Այս բարեկ . . .

— Թարալալա թարիլլալալիլա . . . թիրալալալիլալամ . . . օօօօճ

— Այս բար . . .

— Տո՞՞ տո՞ն տո՞ն տո՞ն եէր Կեդն . . .

— Ա՛ն նայինք Կո՞չը և տնկէ՛, ըսաւ ասոնց մին իր քովինն անոր կուրծքին հարուած մը տալով իւր ափով :

Այս հարուածն , որ ասոնց քով մտերմութեան նշան կը համարվի , եթէ մեզ տրվի՝ դիտեղմանի նշան կը . . .

— Պէր Կեդնէ Կեդն օլլաւ եէր Կեդն . . .

— Թարալալա թարիլլալալամ . . .

— Եէր Կեդն . . . Կեդն Կեդն Կեդն Կեդն Կեդն Կեդն . . .

Կեդն Կեդն Կեդն . . .

— Անանան . . . թարալալալալիլալամ :

— Հոս նայեցէք , Կո՞չներ , Կեդն ձգեցէք ու ցնծացէք . . . վարժարանին դանձանակն է :

— Մօ տղաք , դպրոցին ըստինն է , տուէք նայինք . . . խմենք բայց դպրոցնիս ալ չմտնանք :

— Ա՛ն վարպետ :

— Բռնէ վարպետ :

— Ա՛ն :

— Շէն կեցէք :

— Տո՞՞ տո՞ն . . . Կեդն . . .

— Պէր Կեդնէ Կեդն Կեդն Կեդն Կեդն :

— Մօ տղայ , ինչո՞ւ անանկ բռնեք կը խառնես :

— Բեզի ինչ պէ , Լայ Կեդնէ Կեդն :

— Հիմա մեռեցնեքուդ պառկած տեղէն կսկսիմ հա :

— Երթանք . . . աֆ կընէք տղաներ , ձեզի տեղն իմն տուինք :

— Չէ , չէ :

— Զրուցեցէք նայինք բարեկամներ , քիչ մը ձեր թաղին վրայ խօսինք :

— Բարեկամ , մեր թաղին ժողովրդեան մէկ մասին պտտգամուրութիւնը տեսաք ահա . ասոնք ձկնորսներ են որ իրենց օրականը հանելու պէս գլխետուն կուզան և կը խմեն . այսու ամենայնիս , ինչպէս տեսաք , դպրոցին համար միշտ ստակ կուտան , մասնաւոր սէր ունին թաղին վարժարաններուն համար : Միւս մասին ալ ներկայացուցիչները կրնանք համարվիլ մենք , արհեստաւորներս : Հոս ազնուապետութիւն չըկայ , սոր դրօշակն է ազատութիւն , հաւասարութիւն , եղբայրութիւն : Եթէ դրօշակին վրայ

պարապ տեղ մնացած ըլլար՝ ո՛րքառն ալ պիտի աւելցնէինք հոն : Հոս բնիկ էֆէնդի չկայ . երբեւ արտաքին բերք քանի մը էֆէնդիներ կը գտնվին երբեմն :

— Թաղական խորհուրդ ունի՞ք կանոնաւոր :

— Թաղական ըլլալն շատ դժուար է հոս , իսկ ըլլալէն վերջն եթէ առաջին շրջանն առանց կռուոյ անցունէ՝ արուեստահանդէս զրկվելու չափ հազուադիւս բան մը եղած կըլլայ . իսկ եթէ երկրորդ շրջանին դարձեալ թաղական ընտրվի՝ անպատճառ կարտաքսվի : Հոս ամեն թաղէն աւելի շարժում կայ : Ասկէ երկու երեք ամիս առաջ քսան երեսուն երիտասարդներ թաղական խորհրդարանը մտան և թաղական խորհրդին թեւէն բռնելով դուրս հրամցուցին զայն :

— Ինչո՞ւ :

— Վասն զի դպրոցն աղէկ չէին նայեր : Պատրիարքարանն ալ առժամանակեայ թաղական մը տուաւ մեզի :

— Նոր թաղականն երբ պիտի ընտրվի :

— Երբ որ հին թաղականը դուրս հրամցրնող երիտասարդներն փոշոյ ըսեն :

— Եթէ չըսեն :

— Քուէարկութեան չպիտի մասնակցին :

— Վարժարաններն ինչպէս են :

— Երկու տարի է որ շտկելու կաշխատին . ընդհանուր կարծիքն այն է թէ տաս տարիէն կարելի պիտի ըլլայ զանոնք բարեկարգելը : Հոս ծնած է Մինէճի Անդրանիկն որ ժամանակաւ շատ աշխատած է այդ վարժարաններուն համար . անգղիերէն խօսող հայն առաջին անգամ Սամաթիայէն ելած է . ջրհանկիրներու մէջ ալ այսօր անգղիերէն կարդացողներ կը գտնվին :

— Հիմա ո՞վ կը հսկէ դպրոցներուն վրայ :

— Այսինքն ո՞վ չհսկեր ըսել կուզես :

— Հիմա ո՞վ է որ չհսկեր դպրոցներուն վրայ :

— Երբեմն հոգաբարձուներու և հոգաբարձուհիներու մէջ կարծիքներու անհամաձայնութիւն ծագած ըլլալով հիմա որոշված է որ ամուսնացած թաղականներն իրենց կիներովը չըհսկեն վարժարաններու վրայ : Հիմակուան թաղականներն այնչափ օրինապահ են որ ընդհանուր Ընդհանուր Իատախազի դրութիւնն կառավարութենէ ընդունվելէն ի վեր՝ թաղական խորհրդոյ մէջ ալ ամեն օր հարիւրէն աւելի մասնաւոր դատախազներ կը գտնվին :

— Հայկականէն զատ ընկերութիւն չկայ հոս :

— Շատ մը ընկերութիւններ կային ատենօք , բայց հիմա չկայ : Պարտաւորաց ընկերութիւն մը

կայ միայն որ կիններուն պարզ հազնիլ պիտի սորվեցնէ . կարծեմ ասոր ալ անունը կայ միայն :

— Եկեղեցասիրութիւն կայ հոս :

— Այո՛, բոլոր թաղերէն աւելի . թաղեցիկն հաւասարապէս կը սիրէ ազգն և եկեղեցին . բայց ասկէ հետեցնելու չէ թէ նուազ կը սիրէ օղին զոր կը խմէ երեկոյեան ժամը մինչև մէկ ու կէսին : Դինեաան մէջ մէկուկէսէն աւելի նըստողներն կը բամբաւին , իսկ մինչև մէկ ու կէս նստելով ճաթելու չափ օղի խմողներն մեծ համակրութիւն կը վայելեն իբրև օրինաւոր մարդեր : Եկեղեցւոյն գորգերն այնչափ շատ կը համբուրվին որ ամիսն անգամ մը կը պատառվին . թաղականը այս կէտն նկատողութեան անելով տեսաւ որ այդ համբոյրներուն գորգ չը պիտի գիմանայ , ուստի որոշեց գորգերը վերցնել : Ժողովուրդը հիմայ հօղի վրայ կը կայնի և հօղը կը համբուրէ , թող որ եկեղեցւոյ հօղն ալ հինցած է այդ համբոյրներէն :

Սամաթիացիին ցած ձայնով խօսիլ չգիտեր . թէպէտև երբեմն գաղանխք մը հազարդելու համար ականջդ ի վայր կը խօսի բայց գործեալ այդ խօսքը եէնի Գաբուէն կը լսվի :

Ինչպէս վերը յիշեցինք , քծնիլ չսիրեր , շուքորթութենէ կը փախչի , բայց երբ ազգային

կռիւ մը եղնէ՝ հոգւով մարմնով կը նետովի . իսկ եթէ ազգային վէճ մը չըլլայ՝ կաշխատի վէճ մը հանելու : Առանց վէճի կարելի չէ իրեն ապրիլ :

Սամաթիացիներուն մէկ մասն ոսկերիչ է . և այս հերիք է հասկցնելու համար թէ կերակուրի մասին որքան բժականդիր է : Ամենէն լաւ միսն , ձուկն , կարագն , պանիրն , ապուխտն և պտուղն սամաթիացիին կերթան : Մեծ կարևորութիւն կը տրվի հոս փորին զոր գոհացնելու համար բան մը չխնայվիր : Հոս փորը պճնասէր է :

Սամաթիացիին թաղին մէջ հայերէն իսկ շուկան տաճկերէն կը խօսի :

Դառնանք գեղեցիկ սեւին որ իրօք գեղեցիկ է , պարզասէր և աշխատասէր : Սամաթիոյ տիկիները դաստիարակութեան պէտքը զգացած են և կաշխատին որ իրենց աղջիկներն ալ ուսում և կրթութիւն առնեն մինչդեռ ուրիշ թաղի մը տիկիներն կը փափաքին որ իրենց աղջիկներն բրինձի փոշի և կարմիր ներկ առնեն : Թաղիս տիկիներն շատ մը թաղերու այրերէն աւելի ազգասէր են : Առաջին անգամ Սահմանադրութեան տարեգարձը պատուող կինն սամաթիացի էր :

Եթէ Պօլսոյ միւս թաղերն Սամաթիոյ հե-

տևող ըլլան՝ Պօլսոյ ժողովուրդն քիչ ատենի մէջ
դպարի փոփոխութիւն կը կրէ՝ բայց օղիին գինն
ալ շատ կը բարձրանայ:

Թաղիս օդն շատ աղէկ չէ. ուստի զայն բա-
րեխառնելու համար է որ թաղեցին օղին շատ
կը խմէ:

ԳՈՒԶՈՎԻՆՃՈՒՔ

Վոստորի մէկ հոսանքը կը պահանջէ որ,
Գուզկունճուքի նաւամատոյցին մերձենալու հա-
մար, նաւալարն իւր նաւակն միշտ դէպ ի
Պէյլէրպէյ ուղղէ և դէպ ի հոն թի քաջէ. վասն
զի եթէ դէպ ի Գուզկունճուք ուղղվի՝ Իւսկիւ-
տարի առջև կը դանէ ինքզինք: Գուզկունճուք-
ցին միշտ այս ճանքով երթեկեկելուն համար
սովորութիւն ըրած է իրեն եկեղեցի երթալու
համար, դէպ ի Պէյլէրպէյի մաւամատոյցին
դրօսարանն ուղղել իւր դնացքը. վասն զի եթէ
դէպ ի եկեղեցին առնէ իւր քայլերն՝ ինքզինքը
գինետուններու մէջ կը դանէ: Յամաքն ալ ունի
իւր հոսանքները:

Այս թաղն թէպէտև պաշտօնապէս Իճատի-
էյի հետ միացած է բայց ոչ — պաշտօնապէս չէ
միացած և ոչ մէկ թաղին հետ:

Օրհնեալ է Աստուած, հոս բնաւ կռիւ չպա-
տահիր թաղին վարժարանին վրայ . . .

— Փանք քեզ Աստուած, վերջապէս տե-
սանք թաղ մը ուր կռիւ չըլլար եղեր վարժա-
րանին վրայ, կեցցէ Գուզկունճուքցին . . .

Գուգիունճուքցիին օղի մը տար ինձմէ . . .

Այո՛, Գուգիունճուքին մէջ բնաւ կուիւ չեն յարուցաններ թաղին վարժարանին վրայ . և ասոր պատճառն ալ կրնաք դուշակել եթէ ըսեմ՝ ձեզ որ Գուգիունճուքի մէջ ազգային վարժարան չկայ . . .

— Հիմայ հասկցվեցաւ որ թաղին վարժարաններն են եղեր կուուոյ պատճառները :

Արդարեւ կայ պղտիկ չէնք մը ուր պղտիկ աղայներ կերթան քնանալու համար : Թաղեցին անգամ մը սրգողած ըլլալով վարժարանին դէմ՝ ուխտ բրած է լումայ մը չտալ անոր համար , և հիմայ ուխտադրուժ չսեպլելու համար ստիպված է քսակին բերանը չբանալ իւր վարժարանին համար :

Մինչև այսօր հոս թաղային կուիւ ալ տեսնըված չէ , և ասոր ալ պատճառն սա է թէ՛ այս թաղին մէջ . . .

— Թաղ չկայ , այնպէս չէ՞ :

Այո թաղին մէջ եթէ մէկը սխալի և սեկն ճերմակ ըսէ՛ իւր դէմը չգաներ ուրիշ մէկն որ եհնէ ըսէ . ո՛չ , այդ սե է և ոչ ճերմակ : Ահա ասանկով վիճարանութիւն բնաւ չըլլար դըլուխներն առաջուան պէս անփոփոխ կը մնան և միայն ֆէ-երը կը փոխվին , և այն ալ երկու տարին անգամ մը :

Հոս տարին երկու հարիւր յիսուն օր կը տօնեն և կը հանգչին : Ոչ ոք կը փափաքի հարստութիւն դիզելու , փառք վաստկելու և համբաւ հանելու . ամեն մարդ կը փափաքի ձուկ դիզելու , ձուկ վաստկելու և ձուկ հանելու . տըկար ստամոքս ունենալով՝ ոչխարի կամ կովու միսը կը դպչի իրենց : Եթէ իրենց սիրտերուն մէջ քիչ մը դպրոցասիրութեան եռանդ ունին , ան ալ կը մարի այն դինիէն զոր կը խմեն ձուկին վրայ և որ կը թափվի իրենց եռանդին վրայ : Եթէ օղի խմէին թերևս եռանդն բոլորքէր , բայց ասոնք ուրիշ թաղերու ազգայիններուն պէս երեկոյները դինետուներու մէջ շատ չեն անցուներ այլ քանի մը դաւաթ խմելով իրենց սուները կերթան :

Ստոնց սովորութիւնն է ամեն դիշեր կամ ամեն կիրակի կամ տօնի օրերն մէյմէկ տուն հաւաքվիլ և զբօսնուլ : Ստոնց խօսակցութիւնն ընդհանրապէս կը կազմվի նարաէ կամ խաղի թուղթէ : Շատ անգամ ալ նաւամատոյցի զբօսարանին մէջ նարա կը խաղան հրեայներու հետ սրոյմէ զուարճախօտութեան դաս ալ կանեն Սի ոճով : Նարա կամ թուղթ խաղալու ատեն կորսընցնողը իրաւունք կունենայ ուղածին և կըրցածին չափ հայհոյութիւն ընելու , վաստկողը

կատարեալ ըութիւն պիտի պահէ և երբեմն
 քթին տակէն պիտի խնդայ ընկերն ա՛լ աւելի
 բարձրացնելու համար : Հայհոյութեան մասին՝
 այս թաղն պահպանողական կուսակցութեան կը
 վերաբերի :

Այս թաղը կը բնակէր վսեմափայլ և բարձ-
 րագատիւ Ստեփան փաշա Ասլանեան որ, ինչպէս
 յայտնի է, Երուսաղէմի հաշիւները անձնանուի-
 րաբար քննելու համար երկու հարիւր ոսկի օս-
 մանեան առաւ վիհանձնաբար :

Կոկիկ եկեղեցի մը կայ հոս որ կոկիկ և գե-
 ղեցկիւձայն քահանայներ ունի, բայց կոկիկ ջեր-
 մեռանդներ չունի :

Իգական սեռն ալ գրեթէ արականին պէս
 կեանք կանցունէ . ուսումնասիրութեան վրայ
 դաղափար ունենալու պատրաստութիւն չունի
 դեռ . օրուան կէսը կանցունէ տապկելով այն
 ձուկերն որք արականէն կուղղըվին : Ինչպէս
 Քերականութեան նոյնպէս ալ Գուղկունճուքի
 մէջ արականն նախապատիւ է իգականէն . հոս
 կինն իւր երկանը ետևէն կերթայ, մինչդեռ Քե-
 րայի մէջ ասոր հակառակն է և երիկն կնոջը ե-
 տևէն երթալու ստիպված է ըստ Աւետարանին
 թէ՛ թողցէ այր զհայր և զմայր իւր և երթիցէ
 զհետ կնոջ իւրոյ :

Գուղկունճուքի կիները աշխատասէր են : Նո-
 րաձևութեան մասին Իճատիէյէն կառնեն իրենց
 դասերը :

Բամբասանք ընելու տրամադրութիւն չունին
 շատ, իսկ հազուստի մասին բամբասովելու բա-
 ւական յարմարութիւն ունին :

Գուղկունճուքի օգը հոտած ձուկ կը հոտի
 և կտիպէ հոն դացոյն իւր քիթը բերանը ծա-
 մածուելու : Օղին պատճառուն է որ ընդհանրա-
 պէս Գուղկունճուքցիները ծամածռած երես
 ունին :

ԱՐՏԱՔԻՆ ՔՈՒՄՔԱՔՈՒ

Արտաքին Քուժ-Քարուն բոլորովին տարբեր է ներքին Քուժ-Քարույէն ինչպէս որ ամեն մարդու ներքինն տարբեր է արտաքինէն : Քուժ-քարուի ներքինն օձ է իսկ արտաքինն աղանի :

Քուժ-Քարույի ներքինն օտարէն կը վախճի իսկ արտաքինն անոր կը վախճի . օրինակի համար երբ տեղւոյս նաւամատոյցին վրայ գտնովիս՝ բոլոր նաւավարներն շուրջդ կը պատեն և ըզգեստներէդ կսկսին քաշել ու քաշքշել ըսելով .

— Սամաթիս՝ պիտի երթաս , աղա , եկու տանիմ :

— Եկուր երթանք , պարսն :

— (Ալանդը է Վար) Ո՞ր պիտի երթաս բարեկամ :

— Իուն անոր ականջ մի կախեր , անոր նաւակը ծակ է , տակէն ջուր կառնէ :

— Մտի՛ր , աղա , մտի՛ր , մէկ հոգի կուզեմ , եկուր շուտ մը երթանք :

Փառք տուր աստուծոյ եթէ առանց զգեստը պատտովելու կամ մէկ կողմից կտարվելու՝ կարողացար նաւակի մը մէջ նետել ինքզինքդ .

Իսկ , ընդհակառակն , եթէ նաւակ չմտար և ետ դառնալ որոշեցիր՝ ականջներդ բաց և մտիկ ըրէ հետեւեալ ուղերձներն որք ետեւդ կուղղըվին :

— Թո՛ղ տուր , պէ , նաւակ մտնելու դրամ չունի :

— Ինչո՞ւ չունենայ . . . անտեսագիտութեան դար է հիմա , գաղտնի «-խիտով — քայլելով — աւելի շուտ կերթայ :

— Աղա , կոշիկներդ թեւիդ տակն ա՛ռ որ չըպատուին :

— Ոտներդ ալ կռնակիդ վրայ դիր որ չըհողնին :

Թաղիս ազգայիններն գրեթէ ընդհանրապէս կամ ձկնորս են կամ նաւալար , կամ ջրհանկիր և երբեմն ալ երեքն միանգամայն են :

Ասոնք ուրիշ թաղերու ազգայիններու պէս չեն որ կարծեն թէ քաղաքական խնդիրները լուծվելուն պէս Պիղմարք իշխանը պիտի գայ և իրենց հացագործին ստակը պիտի տայ , ուստի քաղաքական գործերու վրայ խօսելով չեն անցուներ իրենց ժամերը : Ասոնց ներքին կացութիւնը այն ատեն կը խոսնգարվի երբ տանք տիկինը հիւանդանայ , և արտաքին գործերն ալ այն ատեն կը վատթարանան երբ Ամբակուժ եղ-

բայրն տկարութիւն ունենայ և չկարենայ գործի երթալ : Երբ նաւակին թին կը կտարվի՝ Ամբար կուժ եղբօր համար նաւայն ցոյցի նշան է , իսկ երբ նաւակը խորտակվի՝ արդարեւ միջամարտեան նշան է . այլ երբ անաւակին մէկն իւր կնիկանը սիրտը գրաւել փորձէ՝ պատերազմ կը հրատարակէ և թող չտար որ ուրիշ մը իր երկրէն մաս մը գրծուէ առանց արիւնհեղութեան :

Թաղիս ազգայիններն քաջ են , ետեւէդ չեն ըներ այն խօսքը զոր չեն համարձակիր երեսդ ի վեր գրուցելու : Հաւատարիմ են իրենց խոստմանը . եթէ խոստանան քեզ ապտակ մ'իջեցնելու՝ անմիջապէս կը գործադրեն զայն :

Ասոնք գպրոցասէր և եկեղեցասէր են . առանց ուսումնական ըլլալու ուսման յարգը կը ճանաչեն և իրենց զաւակներուն կըթուփեանը համար կուտան իրենցմէ պահանջված գումարը , ինչպէս նաև եկեղեցւոյն պայծառութեանը համար չեն զլանար իրենց լուծայն :

Ո՛չ նարա կը խաղան և ս՛չ թուղթ . գիշերները գրօսանքի կամ մարմնամարզութեան համար երբեմն իրենց կիները կը ծեծեն :

Խմելով կը խմեն օղին :

Կիներն ալ ճիշդ այրերու պէս են , աչխատասէր և անկեղծ : Ասոնց ներքինն շատ պար-

կեշտ է , իսկ արտաքինն որ այլանդակ հագուստներով կը ներկայանայ՝ ներքինին հակապատկերն է : Թէև իրենց թեւերը , կուրծքերը և սրբունքները բացած փողոցի մէջ լաթ կը փռեն , սակայն դարձեալ վերադասելի են այն շատ մը կիներուն որք գոց թեւերով , կուրծքով և սրբունքներով տան մէջ լաթ կը փռեն : Այս կիները շատ անգամ իրարու հետ կը ծեծկվին և կը հաշտվին :

Ասոնք ուրիշ կիներու վրայ սա առաւելութիւնն ալ ունին որ ազգը շատցնելու համար մեծ զոհողութիւն , անձնանուիրութիւն կընեն , իւրաքանչիւր կիինն առ նուազն տասնևվեց արջղաներէ՝ մայր կոչվելու պատիւն ունի :

Ժող Երկու հարիւրի մօտ տուն կայ : Այս դուրիքը տասնևութով բազմապատկելով կուսնենանք անձնք հազար վեց հարիւր հոգի : Տէր Աստուած գահացուացէ և բազմացուացէ :

Ներքին բերքն է ընտիր հայհոյութիւն :

Հ Ա Ս Գ Ի Ի Ղ

Այս գիւղն իրաւունք ունի պարծենալու այն մեծ տուներովն որոնց մէջ ամիրաները կը բնակէին ժամանակաւ և որք այժմ զօրանոց եղած են մուկերու : Հարկ չէ, կարծենք, կրկնել թէ ամիրաներու յաջորդեցին մուկերն, և հետևապէս, մուկերը կը գործեն այժմ ինչ որ կը գործէին երբեմն ամիրաները :

Կենդանութեան նշան տուած ըլլալու համար միայն այս թաղը միշտ շարժման մէջ է. շարժում որ կը կայանայ թաղական փոխելու, հոգաբարձութիւն ընտրելու, դասատու փոխելու և երբեմն ալ Պատրիարք փոխելու մէջ :

Թաղեցին միապետութեամբ կը կառավարէր Բարմաք Քարուի բնակիչները թաղակապաշտօն կը վարէին : Ուրիշ փողոցներու բնակիչները չէին կարող թաղական ընտրուիլ. որովհետև Բարմաք Քարուի Աղաներն, վեց տարի թաղականութիւն բնելէն ետքը, երբ օրինաւորապէս հրաժարէին՝ իրենց գահաժառանգ զաւակները կը բազմեցունէին այն աթոռին վրայ որ թաղական կը կոչուի և որուն վրայ նստիլ շատերը կը

վախաւքին : Իսկ երբ Պօղոս պատրիարքին օրով մեծ յեղափոխութիւն տեղի ունեցաւ՝ միապետական կառավարութիւնն փոխվեցաւ հանրապետականին : Այս թուականէն ի վեր կոչկակարներն և ջրհանկիրներն են որ մեծ ազդեցութիւն կը բանեցունեն թաղականի ընտրութեան վրայ : Միապետական կառավարութեան ատեն թաղականը վեց տարի պաշտօն կը վարէր և չէր գործեր ոչ ինչ, իսկ հանրապետութեան ատեն թաղական մը հինգ օրէն աւելի չէ կարող պաշտօն վարել :

Թաղեցին արդարև կը շարժի բայց երբ զայն շարժող գտնովի. եթէ ինք իր գլխուն ձգելու ըլլա՞ տարիներով կը քնանայ : Թաղիս մէջ շարժող երիտասարդներ շատ կը գտնուին երբ խրնդիրն այնպիսի բանի մը վրայ ըլլայ՝ որու մէջ անձնական կիրք շատ գտնովի և դպրոց բնաւ չը գտնովի : Երբեմն Ներսէսեան վարժարանն ընկերներուն նախանձը կը յուզէր, իսկ այսօր ընկերներուն վրայ նախանձելու տրամադիր է : Ժամանակաւ գեղին հրեաներէն և տաճիկներէն աչակերտ կընդունէր, իսկ այսօր անոնց վարժարաններուն աչակերտ կուտայ : Այն ատեն թաղեցին ուրիշ սիրտ ունէր, շատ հաւանական է :

Գիւղիս ազգայինները մեծ ջանք ցոյց կու

տան առաջին անգամը համար այն ֆլասին որ նիւթական է, իսկ մեծ անհողութիւն կը ներկայացնեն այն ֆլասին որ բարոյական է, չգիտնալով անշուշտ որ բարոյական ֆլասէն ալ կը ծագի նիւթական ֆլաս ինչպէս որ բարոյական շահէն ալ կը ծագի նիւթական շահ – կաղաչեմ, մի բարկանաք, տէր երեսփոխաններ – : Այսպէս, երբ թաղին մէջ հրդեհ պատահի՝ ամբողջ թաղեցին տունէն դուրս կը վազէ և կրակը մարելու համար կարողութենէն վեր կաշխատի . իսկ երբ վարժարանն բարոյապէս մոխիր դառնայ ոչ մէկ թաղեցին գլուխը պատահանէն դուրս չհաներ : Թաղեցւոյն ուշադրութիւնն վարժարանին վրայ հրաւիրելու ամենէն դիւրին և կրտուրակ ճանքան, վարժարանը նախ կազով թրջելու է և լուցկիով մը բռնկցնելու է զայն . ամբողջ թաղեցին գիշերազգեստով կը վազէ վարժարան և կրակը մարելու կաշխատի : Մոռնալու չէ սակայն որ Հասգիւղցին լուցկիի պէս մէկէն ի մէկ հայրենասիրութեամբ կը վառի, կը բորբոքի երբեմն . եթէ այս բորբոքումէն անմիջապէս օգուտ քաղես՝ կրնաս իրմէ ստակ հաւաքել, մանրերկրորդ մը անցնելուն պէս Հասգիւղցին կը մարի, Վիէնայի ամենէն գէշ լուցկիներուն տեսակէն է Հասգիւղցին, բռնկին ու մա-

րիւր մէկ է . մինչև իսկ երբեմն «Կ» մը վառելու համար անոնց քսան հատը մէկէն բռնկցնելու է :

Այսօր հինգ վարժարան կայ գիւղիս մէջ . . . մրցումն որպէս թէ յառաջադիմութիւն պիտի արտադրէր . . . հինգ վարժարանէն աշակերտ մը չեղներ տարին :

Հասգիւղցին ինքնիրմէ բանի մը ձեռնարկելու յանդգնութիւն չունի, իսկ երբ գրգռող մը ըլլայ՝ այն ատեն ծայրահեղութեան կը դիմէ :

Լուսաւորեալ երիտասարդներ կան հոս որք իրարու հետ երկար ատեն բարեկամ չեն կրնար մնալ : Ստոնց բարեկամութիւնն շաբաթ մը միայն կը տևէ և այս պայմանաժամը լրանալուն պէս իրարմէ կը բաժնըվին : Ես ասոնց բարեկամութիւնն գէշ տեսէ շինված բանալի կը նմանցընեմ, շաբաթէ մը կը մաշի և օր մ'ալ քիչ մը ուժով նստելուդ պէս երկուքի կը բաժնըվի և շապիկդ ետևէդ կերևայ : Բանալիին այս կերպ բաժնըվելուն ընդհանրապէս կըսեն . « Բանալիս բացված է » . Հասգիւղցին ալ երբ իր մէկ բարեկամէ բաժնըվի՝ կըսէ . « մենք բացված ենք » : Իսկ Հասգիւղի մէջ մտերիմ բարեկամ կը ճանչցըվի այն մարդն՝ որ իւր ընկերին ուրիշ մը դանակոծումը կը տեսնէ և չտեսնելու համար ճան-

բան կը փոխէ : Երբ այս մարդուն յանդիմանես
իւր կամաւոր կուրութիւնն՝ քեզի կը սպասա-
խանէ .

— Իմ սիրտս փափուկ է , երբ կը տեսնեմ
որ բարեկամներէս մին ցաւ ունի , սիրտս դէշ
կըլլայ :

Եթէ այս պատասխանով դո՛ճ չըլլաս՝ ուրիշ
մ՛ալ կուտայ քեզ .

— Եղբայր , ես ազատամետ մարդ եմ , կար-
ծիքներու ազատութիւնը կը յարգեմ :

Հասգիւղցին ոչ շողքորթ է , ոչ կեղծաւոր
և ոչ ազատախօս . բարեխառն բարք մ՛ունի :

Յարատեութիւնը հոս միմիայն վէճ յարու-
ցանելու մէջ կը դանդի :

Ասոնք երբ շողենաւ նստին նախ կը խօսին
սօխի վրայ , ետքը խնդիր կը յարուցանեն վայ-
տի վրայ և վերջը հարցապնդումներ կընեն ա-
ծուխի վրայ . մնչդեռ հրեայն դրամներու գի-
ներուն վրայ կը խորհրդակցի և յոյնը վաճառա-
կանութեան վրայ :

Դեղիս կիներն ընդհանրապէս գեղեցիկ են ,
պարկեշտ և միանգամայն ազատ : Ասոնք կաշ-
խատին կամ մետաքս քաշելով կամ զինուորա-
կանի ճերմակեղէն կարերով : Պտոյտը շատ կը
սիրեն : Հոս միայն ապօրինաւոր ամուսնութիւն

ներ տեղի կունենան . օրինաւոր ամուսնութիւնն
արգելված է և դիւղը լի է ամուրիներով : Ամեն
սնոնք որ աղջիկ կը փախցունեն՝ հոս կուգան
ապաստանելու :

Հազարի չափ տուն կայ հայու . եթէ իւրա-
քանչիւր տունէն ամեն օր մէյմէկ հոգի թա-
ղային խնդիր յարուցանէ՝ ամեն օր 2,77 խնդիր
կունենայ թաղը :

Ներքին բերքն է մայրապետներ և հայրա-
պետներ :

Բժիշկները շատ կը դուրեն գեղիս օդը . բը-
ժիշկներու վկայութենէն կընաք մակաբերելան-
շուշտ որ դիւղս առատ հիւանդներ կը մատա-
կարարէ Ասիկեպիտոյ աշակերտներուն :

Գ Ը Ն Ա Լ Ը Կ Ղ Զ Ի

Նախ և առաջ խօսինք այս կղզւոյն մէկ հրաշագործութեանը վրայ որուն ականատես եղած են շատերը : Այս հրաշագործութեան վրայ խօսելով մեր նպատակն է ծառայութիւն մը մատուցանել ամեն անոնց որք կը փափաքին կղզւոյս մէջ գետին ծախու առնել :

Գիտնալու էք որ կղզւոյս մէջ գետինները շարժուն են և կը քալեն :

— Մենք այդ հրաշքին չենք հաւատար :

— Թերահաւատ էք ուրեմն :

— Թերահաւատութիւնն չենք ընդունիր :

— Շատախօսութիւն ընելու ժամանակ չունիմ. ըսածս ազացոյցներով և կենդանի վրկայներով կարող եմ հաստատելու : Այո, գետինները կը քալեն. ուստի անոնք որ կղզւոյն հարաւային կողմը գետին ունենալ կուզեն՝ պարտաւոր են հիւսիսային կողմէն գետին ծախու առնել. քանի մը օրուան մէջ այդ գետինը դէպի հարաւ ճանրայ կելնէ : Անոնք որ ծովեզերքին վրայ գետնի տէր ըլլալ կուզեն՝ ծովու մէջ քանի մը հազար կանգուն գետին առնելու են :

շարժուան մը մէջ այդ գետինը ծովեզերքին վրայ կուգայ կը հաստատուի : Սա ալ մտքէ հանելու չէ որ եթէ գետին մը ծախու առնելու ըլլաս՝ չորս կողմը պատ քաշելու ես, վասն զի եթէ պատով չըջափակես զայն՝ այնչափ կը քալէ որ ծովէն անցնելով Գարթալ կերթայ և երբեմն ալ այնչափ կերթայ որ բոլորովին անտեսանելի կըլլայ :

— Բայց ինչպէս կը քալեն այս գետինները. բնաւ հաւատալիքս չգար :

— Եթէ չես հաւատար՝ փորձի համար քանի մը հարիւր կանգուն տեղ առ և կը հաւատաս :

— Ուրեմն այդ գետինները քալեցնող մը կայ :

— Չգիտեմ, բայց բարեկամներէս մին կըսէր թէ՛ կղզւոյն գետիններն անխի վրայ գըրված են, կընաս զանոնք տանիլ ուր որ ուզես :

— Այդ անիւր դարձնող մը կայ արդեօք :

— Հարկաւ :

— Այդ դարձնողը կընաս ինձի ներկայացընել :

— Ի՞նչ պիտի ընես :

— Պէտիւք տէրէ տուն մը ունիմ այնպիսի թաղի մը մէջ որ բնաւ յարգ չունի. եթէ այդ մարդն իմ աունս Պէտիւք տէրէի ծովեզերքն

քաղցրունէ՛ հաղար ոսկի կուտամ իրեն : Կը քա-
լէ՛ արդեօք :

— Կղզւոյն մէջ ոչ միայն կը քալէ այլ կը վա-
ղէ , բայց չգիտեմ թէ Պէօյիւք տէրէ յի մէջ ալ
կը քալէ :

— Շատ բան , շատ բան , գետինին ալ քա-
լելը բնաւ լսած չունէի : Ըսել է թէ այդ կղզւո-
ւոյն բնակիչներն չեն շարժիր , կը պառկին և
կը քնանան :

— Ինչո՞ւ :

— Վասն զի այդ երկրին մէջ ուր գետի-
նը կը շարժի՛ մարդերը պարտաւոր են չշարժիլ :

— Թողունք ալ այս շարժման խնդիրն եւ
գառնանք կղզւոյն : Այս կղզւոյն վրայ կատա-
րեալ ծանօթութիւն մը տալու համար կը յիշեմ
քեզ բժիշկի մը պատասխանը զոր տուած է , շո-
ղենաւի մէջ , իւր մէկ բարեկամին որ Քընալը
կերթար : « Կը զարմանամ թէ Քընալը յին ինչո՞ւ
այսչափ կարևորութիւն կը տրվի , ըսաւ բժիշկը ,
հոն ուրիշ բան չկայ եթէ ոչ ռե՛ւ մը և Ասապա
էֆէնտի մը : » Ասապա էֆէնտին՝ որ աղգային
երեսփոխան ալ է , կղզւոյն պետն է : Ով որ ցաւ
կամ դատ ունի՝ անոր կը գիմէ որ խրատելով
և հաշտեցունելով ետ կը դարձունէ զանոնք :
Կղզւոյն մէջ ամենէն կը յարգվի իբրև երկրա-

գոյն բնակիչ և հիւրասէր մարդ մը որ Թաղա-
կան Խորհրդոյ ալ անդամ է :

— Ասապա էֆէնտինն ալ գետինները կը քա-
լեն :

— Չէ , անոր գետինները ծոյլ են , բնաւ չեն
շարժիր և կմնան ուր որ են :

— Կիրակի առաւօտները ռե՛ւին տակը կեր-
թան կղզւոյն բնակիչները որք ձմեռը քառա-
սուն տունէ և ամառը վաթսուն եօթանասուն
տունէ կը բաղկանան : Հոս ձմեռը երեսունի չափ
տուն կայ հայու : Անցեալները կղզեցւոյն և թա-
ղականին մէջ վէճ մը ծագեցաւ որ հաշտու-
թեամբ վերջացաւ : Երեսուն աշակերտի համար
երկու վարժարան կայ , մին թաղային և միւրը
մասնաւոր : Թաղային վարժարանը կը կառավար-
վի բարի քահանայէ մը որ եկեղեցւոյն ալ քա-
հանայն է և աշխատող գաղատուէ մը որ եկե-
ղեցւոյն ձայնաւորն է : Այս վարժարանին մէջ
եղիչէն թարգմանող աշակերտներ կան ինչպէս
նաև Աւետարանը հասկցող աշակերտուհիներ :
Մասնաւոր վարժարանին ալ գաղատու-անօրէն-
ներն են երկու պարկեշտ եղբայրներ որք կը
մրցին թաղային վարժարանին հետ : Երեսուն ա-
շակերտի համար երկու վարժարան . . . յառա-
ջագիմութեան նշան չէ այս . . . :

Կղզւոյն բնակիչներն եկեղեցի չեն երթար :
անոնց միայն մտմտութիւն է թէ ինչպէս կարելի
է տասը բարա արժէք ունեցող մէկ բանը քա-
ռասուն բարայի ծախել : Ամառուան եղանակն
անցունելու համար կղզի զնացողներուն ալ մի-
այն մտմտութիւն է թէ ինչպէս ընեն որ կղզւոյն
բնակիչներուն հետ առևտուր չընեն : Ասոր հա-
մար է որ անոնք իրենց միւր , եղբ , պանիրը ,
հացն և ջուրը Պօլիսէն կը տանին իրենց հետը :

Հոս բնաւ շուն չկայ . փողոցներու մէջ կա-
տունները կը պտըտին և տուներու մէջ ալ մու-
կերը : Կղզւոյն մէջ առատ կով կայ . բաւական
էշ ալ կը գտնվի ինչպէս նաեւ այծեր : Այս կու-
վերն , էշերն և այծերն կանաչ խոտ և ծառ չեն
թողուր կղզւոյն մէջ : Եթէ լուսին չեղած գիշեր
մը կղզւոյն մէջ պտըտելու երես՝ կովերը մաղերդ-
կը փրցունեն մարդագետին կարծելով գլուխդ .
մէկ կողմէ տուն կը քալես միւս կողմէն ալ կովը
մաղերդ կը կարէ :

— Կովը չ'հասկնար թէ մարդ ես :

— Գիշերը ինչպէս պիտի հասկնայ :

— Քալելէդ չ'հասկնար :

— Կարծեմ յիշողութիւնդ շատ տկար է .

քիչ մը առաջ չըսինք որ գետիններն ալ կը քա-
լեն հոս :

Բնիկ կիները գեղջիկական կեանք կը վարեն .
նչ պճնասիրութիւն գիտեն , ոչ բամբասանք և
նչ արտասահման պտոյտ :

Օղափոխութեան համար ուրիշ թաղերէն ե-
կողներն ալ ծովեղերքին վրայ պտըտելէն և կու-
շիկ հինցունելէն զատ գործ տեսած չունին : Ծո-
վեղերքի վրայ շաբաթ և կիրակի իրիկունները
շատ բազմութիւն կըլլայ : Այս հրապարակն բո-
լոր միւս գեղերու հրապարակներէն ամենէն
պարկեշտն է :

Կղզւոյն օդն այնչափ մաքուր և առողջարար
է որ եթէ բժիշկ մը գայ հոն՝ երկու օրուան մէջ
կը մեռնի . . . անօթութենէն :

ՊՕՅԱՃԻ ԴԻԻՂ

Այս գիւղին աղգայինները ժամանակաւ այնչափ կը քնանային որ շատ մը բժիշկներ իրենց չքնացող հիւանդները հոս կը զրկէին : Ու մանք ալ կը պնդէին թէ Եպիմենիդէսը հոս ծընած ըլլայ : Չհաւատալու բան չկայ, իրենց շատ քնանալուն ամենահզօր մէկ փաստն ալ այս էր որ հոն բնաւ թաղականի կռիւ լաված չէր. եթէ չքնանային՝ կարելի էր միթէ որ կռիւ չհանէին և իրենց աղաղակներովն լրագիրներու էջերը չըլեցնէին :

Բայց քանի մը ժամանակէ ի վեր այս գիւղն արթնցած է շնորհիւ երկտասարդութեան որ ընկերութիւն մը հաստատած է գիւղին վարժարանը յառաջ տանելու համար և որ վերջերս իւր հաշուեցուցակն ալ հրատարակած է :

Գիւղիս հայերը շատ ուժեղ ստամուրս ունին, անոնց իւրաքանչիւրն ոչխար մը կարող է ուտել եթէ ուրիշի մը տունը ճաշի հրաւիրվի : Համեղ կերակուրներէն աւելի կախորժին քան թէ խօսարաններէն և լսարաններէն :

Պոյաճիգեղցին շատ կը սիրէ իւր անունը

փոխելու : Կարապետը Կարէ և Մկրտիչը Կարէնի կըլլան հոն : Շարաթէ մը ետքը նորէն կը փոխվին անոնք և Ժան կամ Բու կըլլան, և մարդու կտտիպվի ամեն շարթու առաջին օրն իւր բաւելկամին հարցունել :

— Այսօրուան անունդ ինչ է :

— Ժուլէֆ : Բուկինդ :

— Մարէն :

Չուարճութիւնը շատ կը սիրեն, ամիս մը շարունակ կրնան ուտել, խմել և երգել առանց ամենափոքր անհանգստութիւն մը զգալու :

Հոս սա աղէկութիւնը կայ որ իրարու միս չեն ուտեր և իրարու հետ շատ սիրով են : Եթէ երբեմն պատահի իրարու հետ վէճի բռնվելը քառօրէ մը կը հաշտվին, և դրսէն բնաւ միջամտութիւն չեն ընդունիր իրենց անկախութիւնը պաշտպանելու համար : Ասոնք ընդհանրապէս այնչափ իրարու քիթ մտնելով կը խօսակցին որ հեռուանց տեսնողն կը կարծէ թէ իրենց խօսակցութիւնը քիթ վրայ է :

Կիներէն ոմանք թէպէտ և իրենց անունները չեն փոխեր բայց այնչափ կը փոխեն կերպարանքն որ ցերեկին չես ճանաչեր այն կինն զոր առաւօտուն տեսած ես, ոչ ալ երեկոյցին կը ճանաչես այն աղջիկն զոր ցերեկին տեսած ես :

Միօրինակութիւնն այս գիւղին մէջ շատ ձանձրութիւն կը պատճառէ և մենք կը զարմանանք որ Պոյաճի գիւղցին ինչպէս կը համբերէ և շաբաթը անգամ մը տուն չփոխեր : Խնդրենք աստուծմէ որ այս մոլութիւնն թաղականներուն և վարժարանը կառավարող անձերուն վրայ չգործադրվի :

Իգական սեռն շատ կը սիրէ ճաշակով հագվիլը և ճաշակով բամբասելը :

Ամառուան եղանակին մէջ շատ տեղերէ կուգան հոս օգափոխութեան համար : Ժամանակաուխտի կերթային, հիմա միայն օգափոխութեան կերթան :

Գիւղիս հայ տուներուն թիւը ճիշդ չգիտցրվիլը, բայց վաթսունի և եօթանասունի մէջ տեղը կը կարծվի :

Օդը խիստ է, այսինքն միտոլեոտական է. իսկ բնակիչները մեղմ են :

Գիւղիս անունէն ոմանք կենթադրեն թէ ատենօք կիները հոս պոչներ կը շինեն և իրենց երեաներուն և մագերուն, աչերուն կը քսեն եղեր : Ես ենթադրութեամբ ուրիշներուն մեղքն առնելու կը վախնամ :

ՂԱԼԱԹԻՍ

Ղալաթիոյ սահմանն է հարաւէն քսակահատներ, արեւելքէն գինոյններ, հիւսիսէն ոճրագործներ և արեւմուտքէն երգիչ աղջիկներ :

Իրամի կողմէն սահման չունի. մոլութիւններու մասին անսահման է :

Իսպաի վրայ շինված ըլլալով՝ ամառը գրեթէ միշտ ցամաք է. իսկ ձմեռը՝ թաղիս երեք քառորդը ծով կը դառնայ և մէկ քառորդը ցամաք կը մնայ : Այս թաղը երկու տեղագրութիւն ունի, մին ամառուան և միւսը ձմեռուան. ամառուան տեղագրութիւնն առաջնորդ բռնելով եթէ ձմեռն այս թաղին մէջ պտըտիլ ուղես՝ ջուրերու մէջ կը խղդվիս. իսկ եթէ ձմեռուանոյն ամառ ատեն հոս չըջագայիս՝ նաւը ցամաքը կը նստի : Արդ մեծ զգուշութեամբ քալելու ես այս թաղին մէջ որպէս զի վտանգի մի մէջ չիյնաս :

Գլխաւոր լեռն է Ղալաթիոյ աշտարակը որ Զարեմնի աշտարակ ալ կրնայ կոչվիլ երբ քաղաքական տեսակէտով նայվի հոն : Հրդեհինը շանը կը արվի միշտ այս լեռնէն որուն գագաթը

ձիւն չգտնվիր բնաւ այլ միայն կրակ , և ասոր համար հրաբուխ լեռ ալ կը կոչվի :

Չերմուկներն են գինետուններն որոնց մէջ մարդ չափէն աւելի կը քրտնի : Հանքային ջուրերն են . սպիտակ , ծաւիտ , +ծեւտ+ են : Գլխաւոր շերմուկն է Քովստիօն խանը ուր +ծեւտիտի վրայ գործ կը լինի : Ամենէն աւելի քրտնցնող շերմուկն է այս , որուն մէջ շատերը կը մտնեն ուժ առնելու համար և ուժաթափ գուրս կեննեն անկէ :

Թաղիս ամենէն մեծ ճանբան այն է որ ուղղակի մինչև Միջագիւղ կը տանի եթէ Երուշաղի կառքերուն մէկուն տակը չմնայ մարդ :

Կրօնքը շատ է . գործածականը յայտնի չէ :

Բնակիչն է խաղամուլութիւն , թիւն որոշ չը գիտցվիր :

Թաղիս օդը բնաւ կարևորութիւն չունի . ամենքը կը յարգեն Քօփօն խանին օդը որ շատերուն կը փնասէ և սակայն ամենուն ալ սիրելի է :

Թաղիս մէջ բնիկ հաղիւ քսանըհինգ կամ երեսուն տուն կայ Հայու : Պանդուխտ եղբայրներն որք ստորերկրեայ տեղեր կը բնակին հոս , ամեն կիրակի օրերը թաղին եկեղեցին կերթան և գանձանակներուն ստակ կը ձգեն : Եթէ թաղեցիներուն մնար՝ շատուց ծախված էր եկեղեցին՝ որ այսօր շատ եկամուտներ ունի :

Այս եկեղեցւոյն թաղական խորհրդարանին մէջն էր ժամանակաւ Ղալաթիոյ բժօտը : Այս եկեղեցւոյն մէջ կըլլան ազգային երեսփոխանական ժողովոյ նիստերն որք ամեն արժանիք ունին Ղալաթիոյ աշտարակին մէջ տեղի ունենալու :

Հոս բարձրացած է կեդրոնական վարժարանն որ գեռ բացված չէ :

Ղալաթիացին տասներկու տարիներէ ի վեր կը փափաքէր վար առնելու իւր թաղականն որ ազգային շահերուն ջերմ պաշտպան ըլլալով՝ չէր թողուր որ քիչ մը ատեն ալ ուրիշները թաղականութիւն ընեն և խնդան . իսկ այս տարի թաղեցին յաջողեցաւ հրաժարեցնել իւր թաղականն որ լալով հեռացաւ խորհրդարանէն : Ընտրվեցաւ ուրիշ թաղական խորհուրդ մը՝ որուն անդամներուն մէջ անչահասէր մարդեր կը գտնվին , սակայն ասոնք ալ դասատուներու փոփոխութիւնը շատ կը սիրեն և գրեթէ շաբաթ չանցնիր որ առանց պատճառի դասատու չփոխեն :

Հոս է կեդրոնական թանգարանն որ ըստ ծանուցման շաբաթն երեք օր բաց է և ըստ իրողութեան շաբաթը ժամ մը միայն բաց է «Երես» խմել ուզողներուն :

Այս թաղն է Բաղեալ ընկերութեանց գրասենեակն որ երկու ամուսան մէջ երկու գոր-

Ճադիր ժողով տեսնելու պատիւն ունեցաւ :
Աստուած երրորդէն պահէ :

Վերջապէս այս թաղն կեդրոնական ըլլալով
չատ դիւրութիւններ կուտայ մեզի հոն երթա-
լու և շաբաթը քանի մը անգամ ազգային խորն-
դիրներու վրայ կուխներ յարուցանելու :

ԴՈՒՐՈՒ ԶԷՇՄԷ

Այս դիւղին Գուրու Էշէ կոչվելուն պատ-
ճառն են դեղին աղբիւրներն որ բնաւ չեն վա-
ղեր :

Գեղացին աղբիւրը կը շինէ բայց անոր ջուր
բերելու հոգ չընէր :

Միայն աղբիւրներուն հետ չէ որ այսպէս կը
վարվի իւր վարժարանին և եկեղեցւոյն հետ ալ
նոյն ընթացքն ունի :

Այս դիւղին ազգայիններն այնքան կաշխա-
տին եկեղեցւոյն պայծառութեանը որ անցեալ-
ները եկեղեցւոյն մէջ շաբաթ մը կաթիլ մը եղ-
չկար : Երբ քահանայն իմացուց իրենց թէ եղը
հատեր է՝ ասոնք սրճարանի մը մէջ հաւաքվե-
ցան խորհրդակցելու համար :

— Ի՞նչ կըսէք, եղբայրներ, եկեղեցւոյ եղը
հատեր է :

— Ի՞նչ կըլլայ եղեր, թող առանց եղի կա-
տարվին արարողութիւնները :

— Ես ալ համակարծիք եմ. արարողութիւնն
առանց եղի ալ կըլլայ :

— Յերէկ ատեն կանթեղ վառելն ինչ նշա-
նակութիւն ունի :

— Շուայութիւնն է , շուայութիւնն :

— Մեր քահանայն ալ այլանդակ մարդ-
մ'է , Դիողինէսի պէս ցերէկ ատեն կանթեղ
կը վառէ :

— Առաւօտները մութուն կսկսի եկեղեցին
և անպատճառ ըյս պէտք է :

— Լուսնի լուսովը թող կարգայ :

Եւ վերջապէս որոշում կը տրվի որ քահա-
նայն քիչ մը անտեսագիտական օրէնքներով
վարվի :

Վարժարանին դալով Գուրուչէշմէցին դա-
սատու կը բերէ բայց ամսական չտար : Շատ
դասատուներ մինչև այսօր թաղական խորհրդ-
դարանը կերթան իրենց մնացած ամսականներն
ուզելու համար և չառնելու համար :

Կիրքն այս գեղացիներուն մէջ չափազանց
ըլլալու է որ իրենց մէջ համաձայնութիւն գո-
յայնելն միշտ անկարելի եղած է :

Հոս երեսուն քառասուն տուն կայ Հայու .
եթէ ութսուն տուն ըլլար՝ ամեն օր նոր կիւի-
ներ պիտի ծագէին :

Կիներն այրերէն աւելի դպրոցատէր և եկե-
ղեցատէր են . բայց իրենք իշխանութիւն չունեն-

նալով՝ ըռութիւն պահելու ստիպված են :

Կիներն շատ չեն սիրեր պտոյտն այն պատ-
ճառաւ որ պտըտելու տեղ չկայ :

Օգը շատ աղէկ է գեղին բարձունքին վրայ
իսկ ծովեղերքի օգն աղէկ չէ : Օգին աղղեցու-
թեան շնորհիւն է որ վերի կողմին աղղայիննե-
րըն աւելի աղէկ են քան վարիններն և եթէ
վերիններն վար իջնան կամ վարիններն վեր ել-
նեն՝ օգավտխութեամբ իրենց բնաւորութիւնն
ալ կը փոխեն :

ԷՅՈՒՊ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԱՏ

Ս. Եղևյայի էյուպը պարտած ենք , քիչ մ'ալ Աստուածածնայ էյուպը շրջինք :

Այս թաղն ձեռներն աշխարհէս քաշած է . քայլ մը յառաջ երթալու կամք չունի , և , եթէ չենք սխալիր , աշխարհ եկած ըլլալուն վրայ ալ զոջացած է : Եթէ կարելի ըլլար՝ երկնից դէմ բողոք կը բառնային ասոնք թէ ինչո՞ւ զիրենք աշխարհ զրկած է :

Այս թաղեցին վերջին ծայր բարեպաշտ և ջերմեռանդ է . քիչ կուտէ շատ կաղօթէ :

Գաստիարակութիւնը չսիրեր . ուստի կարեւորութիւն չտար վարժարանին , թէպէտ և երկտասարդներէն ոմանք կը ջանան թաղին մէջ ուսման սէր տարածելու :

Այրերն և կիներն յուսահատ վիճակ մ'ունին . ընդհանրապէս իրենց գլուխներն միշտ ի խոնարհ կը բռնեն , որպէս թէ մէկէ մը յանդիմանված ըլլային :

Պէտք է գիտնալ թէ ասոնք ծոյլ չեն , կաշխատին , բայց մեքենաբար և միշտ կը մնան հոն ուր որ են :

Աստուծոյ մօտ և սատանայէ հեռի են . և այնչափ երկիւղած են որ եթէ Ս. Եղևյայ անդիլի թաղին մէջ երկաթեայ տախտակն քիչ մը ուժով շարժէ՝ ամենքն ծակէ ծակ կը վախճին մուկի պէս :

Ասոնց մէջ գերութիւն չկայ . ընդհանրապէս նիհար են բայց քաջաւոյժ :

Արբեղութիւն չունին , ջուր կը խմեն միայն :

Լաւ երազ կը մեկնեն . այս թաղին մէջ մարդ չկայ որ ամեն դիշեր քանի մը հարկուր երազ չը տեսնէ : Օր մը ձերին մէկը կըսէր .

— Այս դիշեր մինչև լոյս աչքերս չգոցեցի , բայց որչափ ալ երազ տեսայ :

Կերևի թէ ասոնք իրենց արթուն եղած ատենն ալ երազ կը տեսնեն : Եւ ես չգիտի զարմանամ՝ այսուհետև թէ ինչո՞ւ երբեմն քանի մը ամիսներ երազ չեմ տեսներ . վասն զի էյուպցիները կը տեսնեն իմ տեսնելիք երազներն , և կամ այնչափ շատ երազ կը տեսնեն որ մեզի երազ չմտար տեսներու :

Շատ տուներու մէջ Պղնձէ Բաղաք , Երազահան և վիճակահանութեան դրքեր կը գրանուին , բայց համարակի վիճակահանութեան չեն դրվիր :

Հաղուստի մասին ալ բնաւ փոփոխութիւն չէ

կրած այս թաղն ըստահողի Յակոբ Պատրիարքին օրէն ի վեր :

Այսու ամենայնիւ կիներն , թէպէտև աշխատասէր և հաւատարիմ , ղերար բամբաստելու մասին ալ ծոյլ չեն :

Օգը շատ թեթև է , և այս թեթևութիւնն ալ այդ միջինաւոր երազներէն յառաջ եկած է :

ՊԷՅՅԻԻՔ ՏԷՐԷ

Գիւղ մ'է ուր օգափոխութեան համար կերթան ընդհանրապէս՝ բայց էրիկ փոխելու համար դացողներ ալ չեն պակսիր :

Գրեթէ ամենէն հարուստներն են ուր այս գիւղը կերթան ամառներն և շուայրութեամբ կեանք կանցունեն . շատերն ալ հարուստ կոչվելու համար կերթան հոն :

Շատ գեղեցիկ տուներ կան ծովեզերքի հըրապարակին վրայ : Կիներն այն տուներուն դուռները կը բանան և այն գիրքով կը նստին դաւիթի մէջ , որ անցնողները կը տեսնեն անոնց ամուսիններուն նիւթական և մարմնական հարըստութիւնը :

Գիւղերները շատ բաղմութիւն կըլլայ այդ հըրապարակին վրայ , բաղմութիւն սիրահարութիւններու : Այդ հրապարակին վրայ նոր սէրեր կստեղծվին . հոն կըլլան խօս-կատներ նշանատուքներ և հարսնիքներ . և ինչո՞ւ չըլլան , ամեն մարդ հոն աղէկ ժամ անցունելու համար կերթայ . անանկ չէ՞ , Մարթա տուտու :

Բնիկ աղագայիներն քիչ են հոս և ունին ա-

խուռի պէս տեղ մը որուն անունը վարժարան
դրած են և ուր կերթան գեղին տղայները ա-
պականեալ օդ ծծելու համար : Վարժարանն ու
ղորմելի վիճակին մէջ է . գեղացին ալիւր վար-
ժարանէն նուազ խղճալի չէ որ աչեր ունի և չը
տեսներ , ականջ ունի և չլսեր , խոյ բերան ու-
նի և կուտէ : Մնիրաւութիւն չընենք , այս վար-
ժարանին վրայ այն ատեն յարձակինք երբ թա-
ղային կանոնաւոր վարժարանի մը հանդիպինք
մեր պայտաներուն մէջ :

Բնիկն եկեղեցի ալ չերթար . օգալիոխու-
թեան համար գեղը դնացող ազգայիններն են
որ կիրակիէ կիրակի եկեղեցի կերթան և քիչ
մը ստակ կը ձգեն :

Գեղիս ազգայիններուն մեծագոյն մասին
գործն է սրճարաններու մէջ քաշվիլ և նարա
կամ թուղթ խաղալ : Պղտիկ մասն ալ ձուկ բըռ-
ներով կը զբաղի :

Գիւղիս մէջ ազգային տեսակէտով եթէ նշա-
նաւոր և մեծ բան մը կայ՝ ան ալ հարուստ աղ-
գայնոյ մը պարտէզն է որուն դռները հասարա-
կութեան երբեմն կը բացվին և երբեմն կը գոց-
վին :

Այս գիւղն շատ յարմար է ամեն անոնց որք
միայն զուարճանալու համար եկած են աշխարհ .

ամեն տեսակ զուարճութիւն կայ հոն :

Այս գիւղը թէպէտև խոնաւ է բայց գեղա-
ցիներուն գլուխները միշտ չոր են . չգիտեմ թէ
արևու մէջ կը տաքցունեն թէ փուռի մէջ :

Ե Է Ն Ի Գ Ա Բ Ո Ի

Ս. քանչեւի օգ ունի . . . :

Եէնի Գաբուցին առաւօտուն արթննալուն պէս կզգայ թէ իւր գլուխն վրան է և թէ գողերը չեն կտրած զայն . սակայն երբ գլուխն վերցունել ուզէ՝ յուսահատութիւն կուգայ իւր վրայ , վասն զի գլուխն այնքան ծանր է որ չը կրնար վերցունել զայն :

Արդեօք այս գլուխներն շատ մեծ են և ադոր համար չեն կրնար վեր առնել զանոնք : Ձեմ կարծեր : Արդեօք այդ գլուխները շատ լեցուն են և այդ պատճառաւ է որ ծանրակշիռ են : Միթէ չգիտես որ Եէնի Գաբուցի մէջ պարապ գլուխներն ալ , որ թեթեւ ըլլալու էին , ծանր կը կշռեն : — Թեթեւ երիտասարդներու համար ինչ պատուական թաղ — : Այդ , Եէնի Գաբուցին երբ անկողինէն ելնել ուզէ՝ ուրիշ մէկը պիտի գայ իրեն օգնելու , գլուխն վերցնելու որպէս զի կարողանայ կանգնիլ — հոյակապն յատկանիշ — ապա թէ ոչ շարաթներով կը պատկի : Եէնի Գաբուցիին գլխուն ծանրութիւնը ապացուցված է գողութեան դէպքով մը որ հե-

տեւալն է . Եէնի Գաբուցի երիտասարդ մը իր նշանածէն համբոյր մը գողնալու համար գիշեր մը անոր տունը կերթայ : Աղջկան հայրն , որ խաւարեալ էր և չէր ուզեր իւր ապագայ փեսայն հարսանիքէն առաջ տանը մէջ տեսնել , կիմանայ որ փեսան՝ դռնէն կամացուկ մը ներս մտած է . ուստի կերթայ զայն յանդիմանելու : Փեսան իւր ապագայ աները տեսնելուն պէս պատուահանէն վար կը ցատկէ , գլխի վայր դետինը կիյնայ և քանի մը բոպէ ալ այնպէս կը մնայ : Ահա ասկէ փորձված է որ Եէնի Գաբուցիին գլուխն ամբողջ մարմինէն ծանր է :

Սոյն թաղն երկու վարժարան ունի , մին մանչերու և միւսն աղջիկներու համար :

Այս վարժարաններն այժմ միացված են Գում-Գաբուցի վարժարաններուն հետ և մեծ յոյս կուտան որ ապագային մէջ ալ չպիտի կրնան լաւագոյն վիճակ մ'ունենալ եթէ հոգաբարձութեան ուսումնական անդամներն իրենց դերը կատարելու վախնան :

Երբ ազգային մեծ խնդիրներ երևան կուգան՝ այս թաղն պատերազմի դաշտ կորոշվի : Սահմանադրութեան վրայօք վէճերուն և ուրիշ կարևոր խնդիրներուն համար կարևոր կռիւներ տեղի ունեցած են հոս . անգամ մը կռիւն այն-

քան ծանր կերպարանք առաւ որ Եէնի Գա-
բուցիի մը գլխէն աւելի ծանրացաւ և թաղին Ե-
կեղեցւոյն մէջ քսանէն աւելի անձեր վիրաւոր-
վեցան :

Նախորդ թաղական խորհուրդն որ վարժա-
րանները բարեկարգելու պաշտօնով ընտրված
էր՝ եկեղեցւոյն կից փողոցն բարեկարգեց և
հասարակաց զուարճութեան համար շինայեց և
ոչ ինչ : Անոր շորհիւն է որ եկեղեցւոյն կից հը-
րապարակն ծառերով զարդարվեցաւ և այժմ
պատիւն ունի տեսնել իւր վրայ պարոններ և օ-
րիորդներ որք ամառուան գիշերները հոս կը
խմբվին և անմեղ զբօսանքներով ժամանակ կան-
ցունեն : Նախորդ թաղական խորհուրդն իւր աշ-
խատութեան պտուղն տեսնելով բերնին ջուրե-
րը կը վազցունէ . թաղականն է որ կը տեսնէ
պտուղն սակայն երիտասարդներն են որ կը քա-
ղեն զայն :

Թաղիս ազգայիններն երկու կարգի կը բաժ-
նրվին . արհեստաւոր և դիւրակեաց :

Արհեստաւոր մասն իւր պարապոյ ժամերն
թաղին սրճարաններու մէջ նարտով և թուղթով
կսպաննէ : Հոս ընդհանրապէս ե՛ի ե՛ւր կը խա-
ղան և այս խաղին մէջ այնքան համբաւ հանած
են որ եթէ ուրիշ գեղերու մէջ ե՛ի ե՛ւրի վրայօք
ոչ վէճ մը ծագի՝ հոս կուգան վճիռ ընդունելու :

Արրեցութեան կողմէն նշանաւոր չեն - կէս օ-
խա օղի խմելէն ետքը կզգան թէ գաւաթ մը
օղի խմած են — և ընաւ չեն կարող մըցիւ Լ-
րենց սահմանակից տէրութիւններուն հետ . . .
Բ՝ ղեցիններուն հետ պիտի ըսէի . . . :

Դիւրակեաց մասը դրսէն հանդարտ կերե-
ց , բայց երբ թաղային խնդիր մը ծագի՝ ան-
ճապէս ասպարէզ կը նետվի :

Թաղիս կիներն պարկեշտ են և աշխատասէր :
Ահա իրենց ծրագիրն .

« Երկուշաբթի՝ լաթ լուալ և երեկոյին ձեռ-
ներն իրենց ամուսիններուն ցոյց տալ ,

« Երեքշաբթի՝ տախտակ սրբել ,

« Չորեքշաբթի՝ պատուհան մաքրել ,

« Հինգշաբթի՝ կարկտել և քթի տակէն մըր-
մըրալ ,

« Ուրբաթ՝ ձերմակեղէնները հարթել ,

« Շաբաթ՝ խոհարանի վերաբերված գործե-
րը տեսնել և բաղանիք երթալ ,

« Կիրակի՝ եկեղեցի երթալ և վերջը զիրար
բամբասել : »

Թաղիս մէջ երկու հարիւր վաթսունի չափ
տուն կայ հայու :

Հոս գարնի տեղ րեք կը գործածեն բայց րեւի
տեղ գեռ բան մը չեն գտած :

Ք Ա Ր Թ Ա Լ

Քանի մը որ առաջ Քարթալ գնացինք տե-
ւոյն ազգայիններուն վրայօք տեղեկութիւնն
հաւաքելու համար, բայց բարեբախտաբար թ-
ղին մէջ մարդ մը չկրցինք գտնել բաց ի գինս
պաններէ որք գինի կուտային մեզ ամեն անգո-
ր իրենցմէ տեղեկութիւն կուղէինք: Բար-
բախտաբար ըսինք և իրաւունք ունինք, վա-
զի խմացանք որ թաղիս Հայերն այգեգործ
լալով իրենց այգիները գնացած էին աշխատ-
լու: Երանի թէ բոլոր թաղերու Հայերն այգե-
գործ ըլլային՝ և սրճարաններու մէջ խաղերով
չանցունէին իրենց թանկագին ժամերը: Ուստ՝
ես դառնալով Պոլիս անցանք և հետեւեալ տե-
ղեկութիւնները քաղեցինք այնպիսի անձէ մը որ
լաւ կը ճանաչէ Քարթալցին և մանաւանդ անոր
գինին:

Քարթալցին, ըսաւ այս անձը, բնաւ հոգ
չըներ թէ ազգային վարչութիւն չկայ, թէ ե-
րեսփոխանական ժողովն չըներ ինչ որ ընել պար-
տաւոր է, թէ ազգային վարժարանները կիր-
քերու վառարան դարձած են ևն. վասն զի ոչ-

է Գայն Վարչ-Ին-ն, Երեսփոխանական Ժողով, ազգային վար-
ժարան բառերն իրեն համար օտարական են, և
Քարթալցին այն ատեն կը սիրէ օտարականն եր-
բոր ութը դահեկանի ծախէ անոր գինին որ
դահեկան արժէք ունի. և որովհետեւ Ազ-
գային վարչութիւնն, Երեսփոխանական Ժողովն
և Ազգային վարժարանները Քարթալ գնացած
չեն գինի առնելու համար՝ այս պատճառաւ
Քարթալցիին անձանօթ մնացած են:

Օտարական մը Քարթալ մտնելուն պէս կը
նըջապատվի գինեպաններէն որոնց իւրաքանչիւրն
եւր գինին կը գովէ և դրացւոյնը կը պարսաւէ:

Հիւանդի համար հին գինի ունիմ պատուա-
կան, կըսէ մին, և առողջի անգամ քլասակար
գինի մը կուտայ քեզի:

Սեղանի գինի ունիմ, կը պօռայ ուրիշ մը
ցոյց տալով գինի մը որ ոչ թէ սեղանի այլ ա-
թոռի գինի չկրնար ըլլալ:

Այսպէս իրենց խօսակցութիւնն կամ այգիի
վրայ կը դառնայ և կամ գինիի վրայ:

Քարթալցին եկեղեցասէր է. Ժամակոչը փատ-
ի ձեռին ամեն առաւօտ դռները կը զարնէ և
Քարթնցնէ բարեպաշտ ժողովուրդն որ աղօթ-
քին երթայ: Յայտնի չէ որ փատէն թէ Աս-
տուծմէ վախնալնուն համար եկեղեցի կերթան:

Ինչ որ ալ ըլլայ՝ սա յայտնի է որ կը սիրեն իրենց եկեղեցին. թող միւս թաղականներն ալ իրենց ժողովուրդներն ուստիկաններու միջոցաւ եկեղեցի բերել տան :

Թաղային վարժարանն որ շատ տարիներէ ի վեր խեղճ էր դասատու չունենալուն պատճառաւ՝ այժմ աւելի խեղճ է դասատու մը ունենալուն համար : Վասն զի դասատու մը վարժարանէն ներս մտնելուն պէս վէճն ալ քանի մը շաբաթէն կը մտնէ թաղեցիին մէջ : Աս ընդհանուր օրէնք մ'է :

Կայ հոս բարի քահանայ մը որ շատ տարիներէ ի վեր կարած է այս հօտն և շատ տարիներէ ի վեր գինի կը ծախէ — կաթողիկոսն եթէ Բարթալ գայ՝ շաբաթուան մը մէջ գինւոյ վաճառականութեան կսկսի — պանդուխտ քահանայ մ'ալ կայ որ գիւղին քահանային օգնականն է թէ եկեղեցւոյ մասին և թէ գինւոյ :

Կիներն ալ այրերուն պէս այգիները կերթան գործելու : Ասոնք Պօլտոյ միւս թաղերուն թերութիւններէն զերծ են անոր համար որ այգի մշակելէն ժամանակ չեն կարող գտնել թերութիւն մշակելու : Պարզասէր, աշխատասէր, հաւատարիմ և բարի քրիստոնէուհիներ ըլլալու ստիպուած են այս գեղին մէջ :

Հոս կը գտնուի այնպիսի հիւր մը որ իրեն զաւակներն անօթի թողլով ուրիշներուն կիներուն և քոյրերուն համար հանգանակութիւն կընէ :

Թաղիս մէջ իբր հարիւր քսան տուն կայ Հայու : Օդափոխութեան համար այլ և այլ թաղերէ հոս կուգան ամառներն և տենդ առնելով ետ կը դառնան :

Գիւղիս տենդը շատ գլխուցաւ կուտայ. երեք օրը անգամ մը կը բռնէ. իմ Պարսիս պէս որ երեք օրը անգամ մը կը հրատարակվի . . . :

Շատերն ալ գինի առնելու համար կուգան և առանց գինովնալու չեն վերադառնար :

Գ Ա Ն Տ Ի Լ Լ Ի

Ահա գեղ մը ուր ոչ Կոթի մտած է և ոչ նուրաձևութիւն :

Հայու քան և հինգ տուն կայ :

Պ. Աբրահամ Ա. յվաղեան քանի մը տարիներ առաջ հանգանակութիւն ընելով յաջողած է կանգնել վարժարան մը որուն մէջ թաղին արդայները միշտ կը կարգան այն բաները զորս կաւանդեն մանկավարժներն նախնական դպրոցներու մէջ : Աւելորդ է ըսել թէ կամ թաղին արդայները բնաւ չեն մեծնար և կամ թաղեցին աղքատ լինելով դասատուի մը ամսական վճարելու կարողութիւն չունի : Գիտենք որ այս դպրոցին մէջ տարին քանի մը անգամ Կոթի կուտեն աշակերտները , բայց չգիտենք թէ տարին քանի անգամ ծեծ կուտեն :

Գեղիս ազգայիններն մեծ մասամբ նաւավար են , եկեղեցին կը յաճախեն և գինետուն բնաւ չեն երթար : Գիտողութեան արժանի է որ յօգուտ Հայաստանի սովեալներու երեսուն ոսկի գոյացաւ այն նուէրներէն որք հաւաքվեցան այս գիւղին մէջ :

Կիներն Եսայի կը բանին և ստակ շահելով երբեմն իրենց ամուսիններուն պարտքերն ալ կը վճարեն : Կիներն էին որ անցեալ տարի կը ուսեցան գերեզմանատան մէջ գերեզմանի խընդրոյն համար :

Ասոնք պարզասէր , աշխատասէր և հաւատարիմ ըլլալով հանդերձ ազգային դպացում ալ կը կրեն . իրենց աղջիկները միշտ ազգային երգեր կերգեն :

Ծեր քահանայ մը ծեր ժամանակէ մ'ի վեր քահանայութիւն կը գործէ և վէճի մը առիթ տուած չէ բնաւ :

Գիւղիս բարձունքէն կը մեկնին թնթանօթին այն եօթը ձայներն զորս երբ ըսենք մեր անկողիններէն կը ցատկենք և փողոցը կը վազենք հասկնալու համար թէ հրդեհն ո՛ւր է :

Նաւավարներն երբեմն գիւղիս մէջ անանկ կտակներ կընեն ազգին որ կարծես թէ կատակ կընեն . նաւավարի մը ըրած կտակն մեր ամենէն հարուստներն իսկ չեն ըներ , ուսկից կը հետեի թէ գիւղիս մէջ ազգասիրութեան կրակը վառ է միշտ :

Գիւղիս օգն և ջուրն այնքան աւողջարար են որ եթէ մէկը շաբաթ մը մնայ հոս՝ հետեւեալ շաբթուն կը պարտաւորի թիկնաթուռն փոխելու և աւելի ընդարձակն գնելու :

ԵՆՆԻ ՄԱՀԱԼԷ ՍԱՄԱԹԻՈՅ

Ս.յս թաղը Սամաթիոյ ձագն է և ամեն նրկատմամբ իւր հօրը կը նմանի :

Հոս ալ թաղականի կռիւները պակաս չեն , բայց հրաշագործ Մկրտիչ եպիսկոպոսի շնորհիւ այժմ կռիւները առաջուան պէս մշտնջենական չեն այլ առ ժամանակեայ : Վարժարանին գալով յայտնի է որ թաղային վէճերու մատնված թաղի մը վարժարանն գոհացուցիչ չկրնար ըլլալ :

Թաղիս այրերն և կիներն ազգային զգացում ունին . միջին դասէն ըլլալով՝ շողքորթութիւն չեն գիտեր և ճշմարտութիւնն բարձրաձայն կը խոստովանին :

Ս.յրերն օղին կը սիրեն , ինչպէս նաև գինին , ստոր համար շատերն իրենց հետը լապտեր կառնեն որ եթէ ուշանան գինետան մէջ՝ մուտն չստիպվին երթալ իրենց տուները :

Հրաշագործը հոս հրաշքներ կընէ և հիւանդներ կը բժշկէ :

Օդը լաւ է , բայց թաղեցին օդէն աւելի դրամը կը սիրէ :

ՆԱՐԼԸ ՔԱՐՈՒ

Աղքատ թաղ մ'է :

Ժամանակաւ քանի մը հարուստ վաճառականներ իրենց մէջ հողաբարձութիւն մը կազմելով թաղին վարժարանը կը կառավարէին . իսկ մէկ երկու տարիէ ի վեր այդ հողաբարձութիւնը լուծված է և թաղեցին ինք իր գլխուն կը կառավարէ իւր վարժարանն որ , ինչպէս յայտնի է , նախանձելի վիճակ մը չկրնար ունենալ թաղային վարժարան մ'ըլլալուն պատճառաւ :

Ս.յս թաղին եկեղեցւոյն ժամակոյններն այնքան արթուն անձեր են որ ուրիշ թաղերու գողերուն եթէ եկեղեցական անօթ պէտք ըլլայ՝ թաղիս եկեղեցիէն կառնեն կը տանին :

Թաղիս մէջ դրամով հարուստ ազգային չկայ բայց սրտով ամենն ալ հարուստ են : Իրենց պարտաւորութիւնը կը ճանաչեն եթէ իրենց ներկայացունես զայն , և ազգօգուտ ձեռնարկութիւններու համար իրենց լուծայն չեն մերժեր :

Թաղս ծովեզերեայ ըլլալով՝ թաղեցին լաւ լողալ գիտէ . . . օղիի մէջ :

Կիները աշխատասէր են և եթէ պատուհաններուն նայիս՝ հոս ամեն օր լաթ կը լուան, վասորն զի իրենց տանը պատուհաններէն ամեն օր ճերմկեղէն կախված են :

Օդը մեղմ է թաղեցւոյն բնաւորութեանը պէս . իսկ երբ հարաւը փչէ և ծովն ալէկոծէ՝ թաղեցին ալ ծովուն հետ կը կորուսնէ իւր հանդարտ բնաւորութիւնը և ալիքներու պէս կը կատողի :

Այս միջոցին նարը քաբուցիի մը առջևէն մի քաւեր փողոցի մէջ, գրեզ կը տապալէ եւ կանցնի կերթայ ալիքի պէս :



Պ Է Յ Ք Օ Զ

Կեցցէ Սահմանադրութիւն . . . :

«Մրիք Հայկազունք յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարև մ'ալ տանք:»

Առաջին անգամ Պէյքօղի մէջ արտասանվեցան վերոյիշեալ խօսքերն, բայց չորս հինգ տարի կայ որ բարևը կտրեցինք Պէյքօղին և ազգային յիմարանոցին առջև կուտանք Սահմանադրութեան մեր բարևը :

Շատ նշանաւոր եղած է Պէյքօղ սահմանադրութեան տարեդարձային այն հանդէսներով որք տեղի կունենային իւր գաշտավայրին վրայ ուր կը հաւաքվէին ազգասէր հայերն և իրարու բերնէն կը յափշտակէին ճառերը, զինիի գաւաթներն և Սահմանադրութիւնը :

Բնաւ նշանաւոր եղած չէ իւր վարժարանովն որ հեռի է աշակերանները գոհացնելէ :

Թաղային կուիւններն երբեմն յերևանք կուգան և քանի մը շաբաթներ պտրտելէն ետքը անբույժ կըլլան վերստին երևնալու համար :

Թաղեցւոյն մեծ մասն անհոգ է եկեղեցի և վարժարանի մասին . երիտասարդութիւն

բեմն կաշխատի որ բարեկարգութիւն մտցունէ վարժարանին և թաղականին մէջ, սակայն բարեկարգութիւնն առանց դրամի չըլլար և մեր երիտասարդութիւնն ալ դժբախդաբար առանց դրամի կըլլայ :

Նաւավարներ և ձկնորսներ առատ են : Ասոնք սքանչելի գինի կը խմեն և պատուական ալ ձուկ կուտեն գինւոյ վրայ : Նախանձ և ատելութիւն չկայ իրարու մէջ . ամենքը սիրով կը վարուին միմեանց հետ , և միշտ այսպէս սիրով մնալու համար ուխտ ըրած են որ չխօսին թաղային խնդիրներու վրայ որոնցմէ , կըսեն , միշտ մնասոված է իրենց բարեկամութիւնը :

Կիները սիւն գործերով կը բաղին . քիչով գոհ կըլլան և մեծ պահանջումներ չեն ըներ : Պարկեշտ և հաւատարիմ են , բայց կը գտնվին հարկաւ «յոգե»-հներ ալ որք իրենց ամուսիններէն երբեմն ապտակ կուտեն՝ ընդդիմախօս գտնվելնուն համար :

Պէյքօղին օդն ալ միշտ գովեստներով կը յիշվի . . . ընդհանրապէս ամեն թաղին օդը , որչափ ալ գէշ ըլլայ , միշտ այն թաղին վարժանէն լաւ է :

Մ Ա Ք Ր Ի Գ Ի Ի Պ

Այս գիւղին մէջ միշտ փափաք մը կը տեսնուի յառաջագիմութեան բայց յառաջագիմութիւն ընաւ չտեսնուիր :

Տասը տարիէ հետէ ամեն ջանք ի գործ կը դնեն իրենց վարժարանը բարեկարգելու համար , սակայն վարժարանը բարեկարգութեան երես չտեսներ : Այս օրերս վարժարանի հողաբարձութիւնը հրաժարական տուաւ իւր պաշտօնին զոր ուրիշներն ստանձնել կուզեն և չեն յաջողիր : Վարժարանը բարեկարգելէն առաջ թաղեցւոյն սիրտը բարեկարգելու պէտք կայ :

Եկեղեցասիրութիւնն հազուադիւր է թաղիս մէջ . ժամակոյր ուրիշ թաղերէն մարդ կը կանչէ եկեղեցւոյն :

Բնիկ գեղացին արհեստաւոր է և վարժարանի վերաբերեալ խօսքերուն մէջ ընաւ չխառնուվիր : Կը գտնվին հոս վաճառականներ որք ուրիշ թաղերէ եկած են հոս կամ օխափոխութեան համար կամ իրենց պարտատէրներուն չերևալու համար :

Գեղիս գլխաւոր դրօսավայրն է «ուլ» «ղ»

կոչված զբօսավայրն ուր սիրահարութեան դէպ-
քեր շատ կը պատահին :

Գեղիս մէջ ջուր չկայ . ուստի հոս կրնան
երթալ այն ծնօղներն որք կը վախնան թէ իրենց
տղայները ջուրի մէջ կիյնան և կը խղզվին . վա-
սըն զի խմելու իսկ ջուր չգտնվիր . երբեմն ծո-
վուն ջուրը կը խմեն . . . լողալ սորվելու համար
ծովը մանողները :

Գիւղիս հայ տուններուն թիւը որոշ չգիտցը-
վիր . վասն զի օրէ օր աւելնալու վրայ է : Ինչ-
պէս նաև ազգասէրներու թիւն որ վայրկեանէ
վայրկեան պակսելու վրայ է :

Փ Է Ր Ի Գ Ի Ի Ղ

Այս գեղին մէջ պատուական դարեջուր կը
չինվի . ազգային դործերու վերաբերութեամբ
գիւղացիին թմրութիւնն յառաջ եկած է այս
ըմպելիքէն զոր շատ կը խմէ :

Քահանայ մը կայ որ կը կարդայ այս եկե-
ղեցիին մէջ և կարդացած ժամանակը երբեմն
ետեւ կը նայի և եկեղեցւոյն մէջ մարդ մը տես-

ներուն պէս գանձանակը կառնէ և կարդալով
կսկսի պտտցունել գանձանակն : Եկեղեցւոյն մէջ
այս քահանայէն զատ մարդ տեսնելը հրաշքի
կարգ անցած է :

Հազիւ յիտուն վաթսուն տուն կայ Հայու :
Վարժարանին մէջ աշակերտները կը կարդան
Քերական , Սաղմոս և Նարեկ :

Բէրայէն հոս կերթան կենդանիները գարի
ջուր խմելու , և մեռեալներն ալ թաղվելու , վա-
սըն զի հոս փոխադրված է Բէրայի գերեզմա-
նատունը :

Օգն այնքան աղէկ է որ ամեն կիրակի մեծ
բազմութեամբ ամեն թաղերէ հոս կը գիմեն
քիչ մը օդ և շատ գարեջուր առնելու համար :

Ե Է Ն Ի Գ Ի Ի Ղ

Կամաց կամաց ազնուականներու բնակարան
կը դառնայ այս գիւղն և աղքատներու քաւա-
րան :

Գեղացին կաշխատի իւր վարժարանն և ե-
կեղեցին կանոնաւորութեան մէջ պահելու , և
կը յուսացվի որ իրեն նպատակին հասնի :

Պճնասիրութիւնն հոս մեծ գեր կը խաղայ :

Կիները Պէջիւք Տէրէյի կիներուն հետ մրցելու համար ամեն զրհոզութիւն կընեն . և այրերն ալ իրենց քսակները միշտ բաց կը պահեն դահայներու համար իրենց կիներուն պահանջումները : Կիները օրը չորս անգամ հագուստ կը փոխեն , վասն զի նորաձևութիւնն այս գիւղիս մէջ ամէն ամիս չփոխվիր այլ երեք ժամը մի անգամ :

Բամբասանքն հոս ֆրանսերէն տեղի կունենայ :

Ձեն պակտիր հոս ազգասէր և ուսեալ տիկիններ որք կը խորհին ազգին վրայ . . . Բե՛նի Կէն ետքը :

Այրերն երեկոյները տուն մը կը հաւաքվին և վե՛ճով կը զբաղին : Կիներն ալ պարելով կամ պտոյտ ընելով կամ դաշնակ զարներով կամ երգելով կամ վիպասանութիւն կարդալով կըբօսնուն : Տնական դռոճերն աղախիններու յանձարված են :

Օգը մաքուր է : Թերճե՛անը Էֆե՛ւրի Տնօրէն Պ. Ճիվէլէկեան Բէրայէն հոս կուգայ երբեմն մաքուր օդ առնելով Թերճե՛անը Հա՛րաբին լեզուին փչելու համար :

Գիւղիս մէջ քառասուն տուն կայ Հայու , չորս հարիւր գլխարկ կնկան և երկու հազար զոյգ կօշիկ :



15812

2013

